



ՆԱՅԱՍԱՆԻ ԱԾԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
NATIONAL  
LIBRARY  
OF ARMENIA

**Սույն ստեղծագործությունը հասանելի է  
Հայաստանի ազգային գրադարանի  
թվային շտեմարաններում՝ համաձայն  
դրա իրավատիրոջ հետ կնքած  
Համագործակցության պայմանագրի, և  
կարող է օգտագործվել բացառապես  
օրենքով նախատեսված կարգով՝  
պահպանելով հեղինակի և իրավատիրոջ  
հեղինակային իրավունքները**

ԳԱՅԱՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ԴՎԻՆ  
V

ԱՆՏԻԿ ԴՎԻՆ



Նվիրվում է սկանավոր գիրնական  
**Գևորգ Տիրացյանի**  
ծննդյան 100-ամյակին



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА  
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

АРХЕОЛОГИЧЕСКИЕ РАСКОПКИ В АРМЕНИИ  
№ 26

Г. Г. КОЧАРЯН

ДВИН  
V

АНТИЧНЫЙ ДВИН  
РАСКОПКИ 1986–2013 ГГ.

---

NATIONAL ACADEMY OF SCIENCES RA  
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

ARCHAEOLOGICAL EXCAVATIONS IN ARMENIA  
№ 26

G. G. KOCHARYAN

DVIN  
V

DVIN OF THE CLASSICAL PERIOD  
EXCAVATIONS OF 1986–2013

ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ  
ЕРЕВАН 2025

IAE PUBLISHING  
YEREVAN 2025

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
№26

Գ. Գ. ԶՈՉԱՐՅԱՆ

ԴՎԻՆ  
V

ԱՆՏԻԿ ԴՎԻՆ  
1986–2013 թթ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝  
պատմ. գիտ. թեկնածու Մ. Հ. Զարդարյան

ՀՏԴ 902/904  
ԳՄԴ 63.4  
Ք 822

Քոչարյան Գ. Գ.  
Ք 822 Դվին V. Անտիկ Դվին (1986–2013 թթ. պեղումները) / Գ. Գ. Քոչարյան:  
Խմբ. Մ. Զարդարյան. – Եր. ՀԱԻ հրատ., 2025. – 176 էջ. – Հնագիտական  
պեղումները Հայաստանում:

Սույն աշխատությունը ամփոփում է Դվին բազմաշերտ հուշարձանի անտիկ շերտի 1986–2013 թթ. դաշտային հետազոտությունների արդյունքները: Ձեռք բերված հնագիտական տեղեկատվության շրջանակներում ներկայացվում է անտիկ ժամանակաշրջանի Դվինի ձևավորման գործընթացի, կառուցապատման, տնտեսական գործունեության և կենցաղի, աշխարհայեցողական ըմբռումների զարգացման ընդհանրական բնութագիրը:

Հնագիտական իրավիճակների համեմատական քննությունը հնարավորություն է ընձեռում բացահայտելու մշակութային հորիզոնների փոխառնչությունների մասնակի դրսևորումները, համալրելու և հստակեցնելու հնավայրի շերտագրական սանդղակը: Գիրքը նախատեսված է հնագետների, պատմաբանների և Հին Հայաստանի նյութական և հոգևոր մշակույթի զարգացման գործընթացները ուսումնասիրողների համար:

ՀՏԴ 902/904  
ԳՄԴ 63.4

ISBN 978-9939-886-79-4

© Քոչարյան Գ., 2025

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	6
Պեղումները միջնաբերդում	16
Միջնաբերդի անտիկ շերտի նկարագիրը	42
Պեղումները կենտրոնական թաղամասում	57
Դվին ամրոց-սրբավայրը՝ ըստ հնագիտական և գրավոր սկզբնաղբյուրների	69
Տնտեսություն և կենցաղ	86
Անփոփում	104
Двин V: Античный Двин. Резюме	108
Dvin V: Dvin of the Classical period. Summary	112
Գրականության ցանկ	115
Անվանացանկ	124
Նկարների և աղյուսակների ցանկ	127
Список рисунков и таблиц	131
List of figures and tables	134
Նկարներ և աղյուսակներ	137
Рисунки и таблицы	137
Figures and tables	137

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դվին բազմաշերտ հուշարձանը գտնվում է Արարատյան գոգավորության հյուսիսարևելյան հատվածում, Գեղամա լեռնավահանի արևմտյան լանջի ստորոտին, պատմական Ոստան Հայոց գավառում, Երևանից 35 կմ դեպի հարավ (նկ. 1):

Դվինի կանոնավոր պեղումների սկիզբը դրվեց 1937–1939 թթ. Սմբատ Տեր-Ավետիսյանի ղեկավարությամբ: Ընդհատված այս կարևոր սկիզբը իր նպատակադրված հետևողական շարունակությունն ունեցավ 1946–1976 թթ. Կարո Ղաֆադարյանի, 1977–2009 թթ. Արամ Քալանթարյանի ղեկավարությամբ և ճարտարապետ Կորյուն Ղաֆադարյանի գործուն մասնակցությամբ: Մեր երախտավորների գործադրած ջանքերի շնորհիվ Դվինի մշակութային շերտերում պահպանված արժեքների բազմամյա պեղումների արդյունքները ընդհանրացվեցին և ամփոփվեցին մի շարք հիմնարար աշխատություններում<sup>1</sup>: Նրանց հեղինակած գիտական հրապարակումները Դվինի հնագիտական արշավախմբի անդամների գիտական ուսումնասիրությունների ցարդ շարունակվող ընթացքի մեկնակետը դարձան<sup>2</sup>:

Դեռևս 1937–1950 թթ. հուշարձանի միջնադարյան շերտերն ուսումնասիրելիս Դվին բլրի ստորոտին բացված անտիկ շրջանի կարասային թաղումների կապակցությամբ Կարո Ղաֆադարյանը գրեց. «Այս դամբարանների գյուտը դարձյալ ապացույց է այն բանի, որ մեր թվականության առաջին և երկրորդ դարերում քաղաքի կենտրոնական թաղի տարածությունը բերդի բնակիչների համար ծառայել է իբրև գերեզմանոց: Մյուս կողմից էլ ցույց է տալիս, որ Դվինի բերդը հնում գոյություն է ունեցել իբրև բնակատեղի կամ ամրոց»<sup>3</sup>:

<sup>1</sup> Тер-Аветисян 2010; Ղաֆադարյան 1952; Ղաֆադարյան 1982; Ղաֆադարյան, Քալանթարյան 2002; Քալանթարյան 1976; Kalantarian 1996.

<sup>2</sup> Արշավախմբի անդամների հեղինակած առանցքային նշանակություն ունեցող մի քանի հրապարակումներ տե՛ս Кушнарева 1977; Жанполадян 1982; Ջանփոլադյան, Քալանթարյան 1988; Բաբայան 1981; Հակոբյան 1981; Ժամկոչյան 1981; Քոչարյան 1991; Акопян и др. 2008:

<sup>3</sup> Ղաֆադարյան 1952, 82:

Հնագիտական այս փաստից՝ թվով ընդամենը տասը շարքային թաղումներից ելնելով, իրավամբ արվեց Դվին հնավայրում անտիկ շերտի առկայության կարևորագույն կռահումը, բուն անտիկ հորիզոնների բացահայտումից շատ առաջ:

Կարո Ղաֆաղարյանը ըստ նախնական դիտարկումների՝ Սուրբ Գրիգոր կաթողիկե եկեղեցու IV դ. շերտի եռանավ շինության վերաբերյալ կարծիք հայտնեց, որ այն «սկզբնապես կառուցված է եղել դեռևս հեթանոսության շրջանում իբրև մեհյան և Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հայտարարվելուց հետո վեր է անվել եկեղեցու»<sup>4</sup>: Խնդիրն այժմ էլ հետազոտության ընթացքում է և արդեն առկա են Կարո Ղաֆաղարյանի շուրջ 70-ամյա վաղեմությամբ հայտնած կարծիքի ճշմարտացիությունը հավաստող առավել համոզիչ վկայություններ:

Կարո Ղաֆաղարյանի մտքի արձագանքը հանգեցրեց 1970-ականներից սկսած անտիկ շերտի մասնագիտական կանոնավոր դաշտային հետազոտությունների շարունակվող ընթացքին: Հեղինակի կողմից անտիկ մշակութային շերտի հետևողական ուսումնասիրության արդյունքները 1991 թվականին ամփոփվեցին «Դվինը անտիկ դարաշրջանում» մենագրության շրջանակներում<sup>5</sup>: Արժանի է հիշատակության Հին Հայաստանի հնագիտության բաժնի վարիչ (1974–1993 թթ.), վաստակաշատ գիտնական Գևորգ Տիրացյանի նշանակալի ներդրումը սույն թեմայի գիտահետազոտական աշխատանքների սկզբնավորման, ձևավորման և կայացման ողջ գործընթացում:

Արդ, նորագույն դաշտային հետազոտությունների արդյունքների և գրավոր սկզբնաղբյուրների տվյալների քննական վերլուծությունը պարզորոշ ուրվագծում է Դվին բազմաշերտ հուշարձանի պատմության անտիկ ժամանակաշրջանը:

Հուսիկ Մելքոնյանը՝ 2010–2017 թթ., ապա Համլետ Պետրոսյանը՝ 2018 թ. սկսած ստանձնելով Դվինի հնագիտական (ներկայումս՝ նորակազմ) արշավախմբի ղեկավարի պարտականությունները, շարունակեցին հնավայրի դաշտային պարբերական հետազոտությունները: Դրանք անառարկելի կարևորություն ունեն, քանզի յուրաքանչյուր ուսումնասիրություն համալրում է Դվինի նկարագիրը՝ հավաստելով բազմաշերտ հուշարձանում մշակութային կյանքի երկարատև զարգացման իրողությունը:

Հնագիտական հետազոտությունները բացահայտել են մ.թ.ա. III հազարամյակից մ.թ. XIII դարն ընդգրկող հնավայրի գոյություն: Մասնավորապես արձանագրվել են վաղբրոնզեդարյան (մ.թ.ա. III հազարամյակ),

<sup>4</sup> Ղաֆաղարյան 1952, 88:

<sup>5</sup> Տե՛ս Քոչարյան 1991:

վաղերկաթեդարյան (մ.թ.ա. X–VIII դդ.), անտիկ (մ.թ.ա. II–մ.թ. II դդ.) և միջնադարյան (մ.թ. IV–XIII դդ.) մշակութային շերտեր:

Աշխատանքում ներկայացված հնագիտական համալիրները հետազոտվել են առավելապես պատմահնագիտական, ինչպես նաև առանձին դեպքերում, բնագիտական սկզբնաղբյուրների համեմատական և քննական վերլուծությունների միջոցով:

Դվինի ուսումնասիրվածության ներկա մակարդակը հնարավորություն է ընձեռում հետևելու հուշարձանի ձևավորման ընթացքին, ուրվագծելու վերջինիս շարունակական զարգացման պատկերը:

Հնավայրի ցարդ հայտնի հնագույն շերտը թվագրվում է մ.թ.ա. III հազարամյակով: Վաղբրոնզեդարյան բնակատեղին հիմնվել է Արարատյան գոգավորության՝ Երասխ–Մեծամոր–Ազատ գետերի բարեբեր հովտում, հյուսիսային թիկունքից՝ Տիկնունու բարձունքով, արևմուտքից՝ Ազատ գետով, արևելքից՝ Ուրծի լեռնաշղթայի բազուկներով լավ պաշտպանված Դվին բլրի վրա (նկ. 1):

Վաղբրոնզեդարյան մշակութային շերտեր փաստագրվել են բլրի հյուսիսարևելյան լանջին՝ շերտագրական հետախուզահորում, վաղերկաթեդարյան հորիզոնների տակ (գագաթի եռանկյունաչափական 0-ական կետից՝ 12 մ խորության վրա)<sup>6</sup>: Հյուսիսարևմտյան և արևմտյան լանջերին բացվել են հում աղյուսե պատերի, հատակների մնացորդներ, հայտնաբերվել օջախի կավե հենակներ, սև, կարմիր, դարչնագույն փայլեցված մակերեսով, բաց երանգի աստառով խեցանոթներ, պահանգավոր մանգաղի վանակատե ու կայծքարե ներդիրներ, աղորիքներ, սանդկոթեր, կայծքարե, վանակատե, ոսկրե նետալաքներ, գտնվել են բնորոշ խեցանոթներ նաև բլրի ստորոտին ու շրջակայքում<sup>7</sup>:

Հնագիտական գտածոների տարածվածությունը ընդգրկում է ամբողջ բլուրը և հարող հարավարևմտյան տարածքը, ինչը հավաստում է մ.թ.ա. III հազարամյակում այստեղ բավական ընդարձակ բնակավայրի գոյության մասին (նկ. 2):

Հաջորդող վերին մշակութային շերտերի պահպանության անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Դվինի վաղբրոնզեդարյան շերտի հզորու-

<sup>6</sup> Փլուզումներից խուսափելով՝ հետախուզահորում 14 մ խորության վրա դադարեցվել են պեղումները [տե՛ս Լաֆադարյան 1982, 19–21]:

<sup>7</sup> Դվինի վաղբրոնզեդարյան մշակութային շերտը բնութագրող նյութերը ներկայացրել են՝ Байбуртян 2011, 39; Խանգաղյան 1967, 13–14; Кушнарева 1977, 7–10; Քալանթարյան, Լաֆադարյան 1989, 67; Бабаян 2008, 96–97, 102:

թյան, ժամանակագրական հորիզոնների հնագիտական իրական պատկերի վերականգնումն այժմ անհնարին է:

Բլրի մ.թ.ա. III հազարամյակի և մ.թ.ա. I հազարամյակի վերջի շերտերի միջև փաստագրվել է մ.թ.ա. X–VIII դդ. վաղերկաթեդարյան մշակութային շերտ (2,0 մ ընդհանուր հզորությամբ՝ երեք շինարարական հորիզոն): Հատվածաբար բացվել են՝ բլրի գագաթային հարթակի բնական եզրագծով կառուցված պարիսպը (քարաշեն հիմնաշարի և հում աղյուսե վերնամասի մնացորդներ), բլրի հարթակին և ստորոտին՝ շինություններ (կավաշաղախով կապակցված զանգվածեղ քարե սալերով հիմնապատերի մնացորդներ), մեկ տասնյակ սրբարաններ (պատկերազարդ կավե զոհարաններ, ծիսապաշտամունքային խեցանոթներ, կուռքեր և այլն), սրանցից երկուսի միջև՝ ընդարձակ մետաղամշակման և ոսկերչական արհեստանոց<sup>8</sup>: Բլրից մոտ 300 մ դեպի արևելք դամբարանադաշտն է՝ բազմաթիվ կրոնիկներ մահարձաններով: Սրանք մերձերևանյան թուխ և շիկավուն տուֆե ջարդոտված արձաններ են, առանձին գլուխներ, կանանց իրաններ, հանդերձավորված զինվորի իրան, ֆալլատիպ կոթողներ: Դվինի մ.թ.ա. I հազարամյակի սկզբի դամբարանադաշտը թերևս կարող է գնահատվել՝ որպես սրբավայր-հանգստարան:

Վաղերկաթեդարյան շերտում բացահայտված պաշտամունքային հարուստ նյութը հաստատում է այստեղ սրբավայրի գոյություն, ուստի և ծիսապաշտամունքային արարողություններ կանոնակարգող քրմական դասի ներկայություն: Վերջինիս հովանու ներքո է հավանորեն իրականացվել սրբարաններին կից արհեստանոցների բազմաճյուղ արտադրական գործունեությունը: Ըստ Հայկական լեռնաշխարհի հարևան մշակութային կենտրոններից ստացված տվյալների՝ ենթադրվում է, որ Մեծամորում «արտադրական գործունեությունը նույնպես տնօրինվել է քրմական դասի կողմից»<sup>9</sup>:

Հասարակության մեջ քրմական վերնախավի ունեցած դերի կարևորությունը հավաստում են նաև դամբարանադաշտում հայտնաբերված ջարդոտված մահարձանների՝ իշխանություն խորհրդանշող մեծարանքի տարբերանշաններ կրող գլուխները: Հավանաբար, պաշտամունքային և ամրաշինական այս խոշոր կենտրոնի պաշտպանությունը իրականացնում էին իշխան-քրմապետ զորավարները<sup>10</sup>:

<sup>8</sup> Кушнарева 1977, 10–39 (մետաղամշակման և ոսկերչական արհեստանոցը տե՛ս 29–35).

<sup>9</sup> Հմմտ. Խանգաղյան և այլք 1973, 187:

<sup>10</sup> Քոչարյան 1998ա; Քոչարյան 2005ա; հմմտ. նաև Ավետիսյան, Գնունի, Բորոխյան 2017, 37:

Հարկ է նշել, որ Ոստան Հայոց գավառի մոտավոր սահմաններում, Էթիունյան վաղերկաթեղարյան բնակատեղիների շարքում առանձնանում էր Դվին ամրոց-սրբավայրը՝ որպես «արքունի քաղաք»-վարչաքաղաքական կենտրոն<sup>11</sup>:

Մ.թ.ա. VIII դ. առաջին քառորդին՝ Վանի թագավորության լայնածավալ արշավանքների ժամանակ, Դվին վարչական, պաշտամունքային և արհեստագործական խոշոր կենտրոնը հիմնահատակ կործանվում և հրկիզվում է (հմնտ. Մեծամորի, Կարմիր բլուրի համաժամանակյա ավերված «հրդեհված շերտերը»)՝<sup>12</sup>: Հնագիտորեն վավերացված են ամրոց-սրբավայրի վերին շիկակարմիր մոխրառատ հորիզոնը<sup>13</sup> և մերձակա ավերված դամբարանադաշտը՝ ջարդոտված մահարձաններով:

Դվին ամրոցի դիրքը վերստին արժևորվում է Արտաշիսյան ժամանակաշրջանում<sup>14</sup> մ.թ.ա. II դարի 70-ականներից սկսած, որպես նորաստեղծ Արտաշատ մայրաքաղաքի հյուսիսային մատույցների պաշտպանությունը վերահսկող ամրաշինական հենակետ: Տեղանքի՝ «բլուր, գետ, դաշտ» համալիր սկզբունքով կատարված ընտրությունը ապահովում էր՝ ա) գերիշխող դիրք, բ) լայն տեսադաշտ շրջակա հարթավայրի վրա, գ) ջրային պատվար, դ) ջրամատակարարում, ե) ոռոգում, զ) արգավանդ հողեր: Արարատյան գոգավորության բնական պաշտպանվածությունը հզորացնող՝ 1. հովիտը շրջապատող լեռնալանջերին շրջանաձև տեղադրված, 2. գետահովիտներով անցնող միջազգային մայրուղիների երկայնքին գծային շարքով դասավորված, 3. լեռնանցքների և գոգահովտի դարպասների մոտ խմբված ամրոցների լայն ցանցում Դվին ամրոցը Գեղամա լեռնավահանի արևմտյան լանջին ուրվագծվող, Էլառ-Դարանիից ձգվող Հացավան-Գառնի-Տիկնունի պաշտպանական աղեղի մասն էր կազմում<sup>15</sup> (նկ. 1):

Կիրառելով ավանդական կոնստրուկտիվ սկզբունքներ և ժամանակակից շինարվեստ՝ Դվին բլրի գագաթի (մոտ՝ 0,5 հա) հարթակը կառուցա-

<sup>11</sup> Խանգաղյան 1979, 126:

<sup>12</sup> Кушнарєва 1977, 107–108; Խանգաղյան և այլք 1973, 56–57; հմնտ. Ավետիսյան, Ավետիսյան 2006, 11, 52–53:

<sup>13</sup> Վաղերկաթեղարյան հրկիզված շերտը թվագրելիս կիրառվել են նաև ուղիորածխածնային հետազոտության տվյալները [տե՛ս Кушнарєва 1977, 107]:

<sup>14</sup> Մույն աշխատանքում առավելապես կիրառված է Հին Հայաստանի պատմության և մշակույթի պարբերա-ժամանակագրական նոր սանդղակը [հմնտ. Ջարդարյան 1997, 13]:

<sup>15</sup> Ամրոցների տեղադրության քննությամբ ուրվագծվում է Արարատյան գոգավորության պաշտպանական համակարգի համապատկերը. 1. Մասյացոտնի աղեղ, Արագածոտնի աղեղ, Գեղամա լեռնավահանի աղեղ, 2. Երասխի հովտի շարք, Քասախի հովտի շարք, Հրազդանի հովտի շարք, 3. Կուջաղի լեռնանցքի խումբ, Երասխ-Ախուրյան հանգուցակետի խումբ, Էլառ-Դարանիի խումբ, Նախնավանի խումբ [Քոչարյան 1996, 338–345]:

պատվում է քաղաքացիական շինություններով (նկ. 2): Նյութական վկայությունները հավաստում են բլրի հարավարևմտյան ստորոտին սրբավայրի, իսկ բլրի շրջակայքում՝ համաժամանակյա բնակավայրերի ներկայություն:

Մ.թ. I դ. կեսին՝ հռոմեական զորահրամանատար Կորբուլոնի 58/59 թթ. ռազմարշավի ընթացքում, ավերվում է Դվինը, և ամայացած սրբավայրը ժամանակավորապես վերածվում է դամբարանադաշտի: Մ.թ. II դ. 60-ական թվականներին, ելնելով Դվինի դիրքային առավելությունից, այստեղ տեղակայվում է Հայաստան ներխուժած հռոմեական բանակի բենեֆիցիարիուսների ուղեցույց-ուղեկալ, պահակակետ (*statio*)<sup>16</sup>:

Դվինի բազմադարյան պատմության մեջ կարևորագույն շրջադարձային հանգրվան է նրա արքայանիստ դառնալու պահը:

Խոսքով Բ Կոտակ Արշակունին (330–338 թթ.) IV դ. 30-ականներին արքունիքը Արտաշատից տեղափոխում է Դվին<sup>17</sup>: Նման քայլի դրդապատճառը երկրում ձևավորված ներքաղաքական ծայրահեղ անկայուն մթնոլորտն էր՝ պետական նոր կրոնի՝ քրիստոնեության դեմ ոտնձգություններ, գահին ու թագին հավակնող նախարարների խռովություններ, պարսկամետ և հռոմեամետ կենտրոնախույս ուժերի երկպառակություններ<sup>18</sup>: Արքան ի զորու եղավ խստագույնս պատժել ըմբոստներին, այդուհանդերձ, երկրում տիրող բարոյահոգեբանական անբարեհույս իրավիճակից ելնելով, արքունիքը դեռևս գործող մայրաքաղաք Արտաշատից տեղափոխվեց Դվին:

Դվինի միջնաբերդում՝ բլրի գագաթի արևելյան մասում, պահպանվել են մ.թ. IV–V դդ. «Արշակունյաց գահադահլիճի»<sup>19</sup> մնացորդները (եռանավ սրահի հատվածաբար պահպանված՝ կրկնակի օգտագործված սև, շիկավուն տուֆե, սպիտակ ավազաքարե սրբատաշ սալերով շարված հիմնապատեր, սյունախարիսխների քառանկյուն հարթակներ, կիսաշրջան հատակագծով կենտրոնական «գահավորակ», ստորին հորիզոնում՝ կավածեփ, իսկ վերինում՝ կրաշաղախե հատակներ և տուֆե սյունախարիսխ): Սրանից հյուսիս առկա է V–VI դդ. հում աղյուսե շինության մի հատված՝ հատակին աստիճա-

<sup>16</sup> Հմմտ. Քոչարյան 1996, 347–353:

<sup>17</sup> Մովսես Խորենացի 1990, 170 (III, Ը):

<sup>18</sup> Քաղաքական իրադրությունը Խոսքով Բ Կոտակ Արշակունու գահակալության տարիներին տե՛ս Փավստոս Բուզանդ 1987, 14–19 (III, Գ–Դ), 32–35 (III, Ը), 36–37 (III, Թ):

<sup>19</sup> Ըստ 1960–1961 թթ. պեղումների արդյունքների՝ Արշակունիներին վերագրվող IV դ. գահանիստ դահլիճ [տե՛ս Ղաֆադարյան 1982, 89–96], ըստ 1985 թ. պեղումների արդյունքների՝ վաղքրիստոնեական հայկական եկեղեցի [տե՛ս Kalantarian 1996, 63–66]: Ներկայումս մասնագետների ուշադրության կենտրոնում է Կարո Ղաֆադարյանի մեկնաբանությունը քննվող կառույցի մասին՝ որպես IV դարի «Արշակունյաց գահադահլիճ»:

նաձև կողապատկերով զույգ տուֆե խարիսխ: Գագաթի արևմտյան մասում փաստագրվել են IV–V դդ. մեծ շինության հիմնապատերի, սալածածկ հատակների, կղմինդրածածկ տանիքի մնացորդներ:

Ստորին բերդում<sup>20</sup>, հարավային բուրգի տարածքում, վաղերկաթեդարյան շերտի վրա բացվել է V–VI դդ. հսկայածավալ շինություն<sup>21</sup>, որի գործառույթային բնույթը դեռևս ճշգրտված չէ: Իսկ բլրի հարավարևմտյան ստորոտին՝ հնագույն սրբավայրում, բացահայտվել են IV դ. կառուցված Սուրբ Գրիգոր (Լուսավորիչ) մայր տաճարի վաղագույն եռանավ շինության, IV–V դդ. միանավ բազիլիկ եկեղեցու և կաթողիկոսական V դ. պալատի մնացորդները<sup>22</sup> (սկ. 2): Ընդ որում՝ Գյուտ Արահեզացի կաթողիկոսի (461–478) օրոք հայրապետական աթոռը Վաղարշապատից տեղափոխվում է Դվին<sup>23</sup>:

Միջնաբերդը բոլորող բնակավայրերը աստիճանաբար դարձան միջնադարյան Դվինի քաղաքային պարսպապատ թաղամասերը, իսկ մերձակա գյուղերը՝ նրա արվարձանները: Թաղամիջյան կավակերտ պարիսպների մնացորդներ են փաստագրվել ներկայիս՝ Հնաբերդ, Վերին Արտաշատ, Բերդիկ, Այգեստան, Ներքին Դվին գյուղերի տարածքում<sup>24</sup>:

Իրապես, V դ. վերջին քառորդին Դվինը՝ քաղաքական ինքնուրույնությունը պահպանած մարզպանական Հայաստանի մայրաքաղաքն էր, որի մատույցների պաշտպանությունը ապահովում էր արդեն նախկին մայրաքաղաքը՝ Արտաշատը<sup>25</sup>, իսկ վերջինիս մերձքաղաքային տնտեսական տարածքը՝ Ոստան Հայոց գավառը, «Աշխարհացոյց»-ում ներկայանում էր որպես «Ոստան Դրնոյ»<sup>26</sup>: Միջազգային տարանցիկ առևտրի կարևորագույն հանգույցի դերը Արտաշատից Դվինին ևս փոխանցվում էր աստիճանաբար՝ նրա քաղաքայնացմանը համընթաց<sup>27</sup>:

<sup>20</sup> Միջնաբերդի ստորին հատվածը պայմանականորեն կոչվում է ստորին բերդ, որն ընդգրկում է «բավականին ընդարձակ տարածություն Դվինի բլրի լանջերին մասամբ էլ նրա շրջապատի հարթության վրա», օղակված է եղել շուրջ 40 կիսաբոլոր աշտարակներով հզոր բերդապարսպով և ջրի խրամատով [տե՛ս Ղաֆաղարյան 1952, 24–30; Ղաֆաղարյան 1982, 109–110]:

<sup>21</sup> Տե՛ս Ղաֆաղարյան, Քալանթարյան 2002, 51–53; Քալանթարյան և այլք 2008, 266–268; Жамкочян 2008, 63–65; հմմտ. նաև Ժամկոչյան 2010, 93–96; Հակոբյան և այլք 2015, 10–12:

<sup>22</sup> Տե՛ս Ղաֆաղարյան 1952, 88, 101 և հաջորդ էջերը; տե՛ս նաև Քալանթարյան, Ղաֆաղարյան 1989, 66–67; Kalantarian 1996, 67–72 (Fig. 8,18; Pl. 32,33):

<sup>23</sup> Հայրապետական աթոռը Վաղարշապատից Դվին տեղափոխելու խնդրի շուրջ տե՛ս Ղաֆաղարյան 1952, 115–118:

<sup>24</sup> Տե՛ս Ղաֆաղարյան 1952, 30–35:

<sup>25</sup> Ղազար Փարպեցի 1982, 293 (Գ, ԿԷ), 349 (Գ, ՀԸ):

<sup>26</sup> Երեմյան 1963, 49, 74:

<sup>27</sup> Դվինի մերձակայքում՝ Պրոկոպիոս Կեսարացու (VI դ.) վկայությամբ «կան իրար հա-

Վաղմիջնադարյան Դվինը Խոսրով Բ Կոտակ Արշակունու ծավալուն, իրատեսական ծրագրի իրականացման արդյունքն էր:

Դվինը VIII–IX դ. առաջին կեսին՝ արաբ ոստիկանների, X–XII դդ.՝ տեղական կիսանկախ ամիրաների, XIII դ. առաջին կեսին՝ Ջաքարյանների ստավայրն էր՝ առևտրի և արհեստագործության խոշորագույն կենտրոն տարածաշրջանում:

Արաբական տիրապետության շրջանում, VIII դ. սկզբին բլրի գագաթի հարթակին կառուցվում է արաբ ոստիկանի (3000 մ<sup>2</sup>) մեծածավալ պալատական համալիրը<sup>28</sup>: Հում աղյուսե այս մեծ շինությունից պահպանվել են «կենտրոնական բակը, վեց սենյակ արևելյան թևում, երկու սենյակ հյուսիսային թևում և խիստ ավերված սենյակների մնացորդներ հյուսիսարևմտյան և արևմտյան թևերում»<sup>29</sup>, ինչպես նաև զանգվածեղ պատերի մնացորդներ՝ «Արշակունյաց գահադահլիճի» տարածքում:

894 թ. մեծ երկրաշարժից հետո միջնաբերդը կառուցապատվում է նոր միասնական հատակագծային ցանցով. բլրի գագաթի հարթակին՝ երեք՝ հյուսիսային, արևմտյան, արևելյան կողմերից հաստահեղույս պատերով ներառնված, ներքին հարուստ հարդարանքով պալատական մեծ շինության բնակելի, արտադրատնտեսական համալիրների լայն ցանց (մոտ 1500 մ<sup>2</sup> մակերեսով) և սրան դրսից հարող շինվածքներ<sup>30</sup>:

XII–XIII դդ. ստորին բերդը ևս խիտ կառուցապատվում է: Բլրի թեք լանջը հնարավորություն է ընձեռում բնակելի տներն իրենց արտադրատնտեսական հարկաբաժիններով հանդերձ տեղադրել «դարավանդերով՝ վերին տան բակը ստորինի համար ծառայել է որպես տանիք»<sup>31</sup>: Ընդ որում՝ այս թաղամասը հիմնականում կառուցված է անմիջապես մ. թ. ա. III հազարամյակի մշակութային շերտի վրա:

Բլրի հյուսիսարևելյան լանջի ստորոտին՝ մոտ 300 մ<sup>2</sup> տարածքում բացված XII–XIII դդ. բնակելի համալիրի սահմաններում ներառնված է ուրույն

րևան բազմաթիվ մարդաշատ գյուղեր, ուր բնակվում են առևտրական նպատակներով [ժամանած] մեծ թվով մարդիկ: Հնդկաստանից, հարևան Իբերիայից, մի խոսքով Պարսից ենթակա բոլոր երկրներից, որոշ չափով նաև հռոմեական [երկրից] ապրանքներ բերողները հենց այստեղ են իրար հետ առևտուր անում» [Պրոկոպիոս Կեսարացի 1967, 142]; հմնտ. Манандян 1954, 109–111; Ղաֆադարյան 1952, 255–258:

<sup>28</sup> Ղաֆադարյան 1982, 96–99; Kalantarian 1996, 78–79:

<sup>29</sup> Քալանթարյան, Ղաֆադարյան 1987, 63:

<sup>30</sup> Տե՛ս Ղաֆադարյան 1952, 122–128 և հաջորդ էջերը:

<sup>31</sup> Ղաֆադարյան, Քալանթարյան 2002, 56–59, 77; հմնտ. Бабабян 2008, 91–102; Բարսայան 2018, 332–333:

ճարտարապետական ոճով կերտված գետնափոր կառույց<sup>32</sup>: Վերջինս ամբողջացնելու համար անհրաժեշտ են դաշտային հետազոտական ընդլայնված աշխատանքներ:

X–XIII դդ. ընթացքում միջնաբերդի շինությունները պարբերաբար վերակառուցվում են, ենթարկվում բազմակի նորոգումների և փոփոխությունների ընդհուպ XIII դարի 30-ականների մոնղոլական կործանարար ռազմարշավները: Ընդ որում՝ X–XIII դդ. ավերված տների վրա պահպանվել են հետմոնղոլական շրջանում՝ XIII դ. 50–60-ականներին կառուցված հյուղակների մնացորդներ, հայտնաբերվել են համաժամանակյա խեցեղեն և դրամներ<sup>33</sup>:

Բլրի հարավարևմտյան ստորոտին՝ հնամենի սրբավայրում, բացահայտվել է Նոր դավանանքի IV–VII դդ. հետզհետե ձևավորվող նշանակալի կենտրոններից մեկը<sup>34</sup>: Այստեղ՝ Սուրբ Գրիգոր կաթողիկե և միանավ բազիլիկ եկեղեցիների, կաթողիկոսական V դ. և VII դ. պալատների մնացորդների հետ մեկտեղ հայտնաբերվել են նաև հոգևոր անձանց դամբարաններ, քարակոթողներ<sup>35</sup>, թևավոր խաչեր, տնտեսական բնույթի կառույցներ, ջրատար խողովակաշարերի ճյուղավորված համակարգ և այլն<sup>36</sup> (նկ. 2): 894թ. մեծ երկրաշարժի ժամանակ վնասվում են հոգևոր կենտրոնի բոլոր կառույցները<sup>37</sup>, ինչպես նաև կործանվում է կաթողիկեին կից՝ արևմտյան հատվածում VIII դ. վերջին–IX դ. սկզբին կառուցված հում աղյուսե շինությունների լայն ցանցը<sup>38</sup>: Իսկ X–XIII դդ. մշակութային շերտերը խիստ տուժում և աղճատվում են XV–XVIII դարերում, երբ կենտրոնական թաղամասը համատարած վերածվում է դամբարանադաշտի<sup>39</sup>:

<sup>32</sup> Տե՛ս Քալանթարյան և այլք 2008, 270–271; Հակոբյան և այլք 2015, 12–14; գետնափոր կառույցի մասին տե՛ս Բաբայան 2018, 333–346:

<sup>33</sup> Տե՛ս Ղաֆաղարյան, Քալանթարյան 2002, 55–56:

<sup>34</sup> Դվինի վաղմիջնադարյան հոգևոր կենտրոնը գտնվում է բլրի հարավարևմտյան ստորոտին և պայմանականորեն կոչվում է կենտրոնական թաղամաս:

<sup>35</sup> Դվինի քարակոթողների շարքում հիշատակության արժանի է պաշտամունքային կառույցի բարավորի բարձրաքանդակ սալը կերտված՝ «ուշ անտիկ, մասնավորապես ուշ հռոմեական ժամանակաշրջանին» բնորոշ խորհրդապաշտական պատկերազրույթամբ: Քարակոթողի վրա պատկերված այգեկոթի՝ խաղողաքաղի, տեսարանի ուշագրավ մեկնությունը ուշ անտիկ և վաղքրիստոնեական արվեստի համատեքստում տե՛ս Маргарян 2022:

<sup>36</sup> Տե՛ս Ղաֆաղարյան 1952, 88–122; Kalantarian 1996, 67–77; Հակոբյան 2005; Քալանթարյան և այլք 2008, 265–266; Акопян 2008; Հակոբյան և այլք 2015, 5–10:

<sup>37</sup> Կաթողիկոսական VII դ. պալատը X դ. սկզբին վերածվել է մզկիթի [տե՛ս Քալանթարյան, Ղաֆաղարյան 1989, 65–66]:

<sup>38</sup> Տե՛ս Քալանթարյան 1976, 23–32:

<sup>39</sup> Հմմտ. Тер-Аветисян 2010, 254–255; Ղաֆաղարյան 1952, 40–43, 65; Քալանթարյան, 1976, 29–30:

Ներկա աշխատանքի նպատակն է՝ բազմամյա պեղումներով բացահայտված հնագիտական փաստացի նյութի և գրավոր սկզբնաղբյուրների տվյալների համակարգված համեմատական վերլուծությամբ ներկայացնել Դվինի անտիկ ժամանակաշրջանի պատմության շարունակական ընթացքի բնութագիրը բազմաշերտ հուշարձանի պատմամշակութային զարգացման համատեքստում:

## ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ՄԻՋՆԱԲԵՐՂՈՒՄ

Հուշարձանի միջնադարյան և վաղերկաթեդարյան մշակութային շերտերին զուգընթաց՝ միայն 1970-ական թվականներին հատուկ հետազոտության առարկա դարձավ անտիկ ժամանակաշրջանի մշակութային շերտը<sup>40</sup>:

Միջնադարյան շուրջ հազարամյա մշակութային նստվածքները զգալի աղճատել են միջնաբերդի՝ հատած կոն հիշեցնող մոտ 30մ բարձրությամբ բլրի գագաթի (մոտ 0,5հա) հարթակի վրա փաստագրված անտիկ մշակութային շերտը (նկ. 2): Անտիկ շրջանի կառուցապատման խաթարված հատակագծային ցանցի ընդհանուր պատկերը մասամբ վերականգնելու և շերտի նկարագիրը համալրելու համար անհրաժեշտ եղավ ընդլայնել դաշտային հնագիտական հետազոտությունները սույն տարածքում:

1986–1989, 2011–2013 թթ. դաշտային հնագիտական աշխատանքները ծավալվեցին բլրի գագաթի խիտ կառուցապատված հարթակի արևելյան մասում<sup>41</sup>, իսկ 1991, 2006–2008 թթ.՝ արևմտյան մասում<sup>42</sup> (աղ. 1): Նախորդ տարիներին այստեղ՝ «Արշակունյաց գահադահլիճի» (IV դ.) և արաբ ոստիկանի պալատական համալիրի (VIII դ.) պեղումների ժամանակ, վերին՝ X–XIII դդ.՝ 3,0մ հզորությամբ շերտերը մանրամասն չափագրվել են ու լուսանկարվել, այնուհետև՝ մասամբ վերացրել: Ընդ որում՝ հիշյալ վերին շերտերը ձևավորվել են 894 թ. երկրաշարժից հետո<sup>43</sup>:

1986–1989 թթ. պեղումները ծավալվեցին «արևելյան պեղավայրում», «Արշակունյաց գահադահլիճից»<sup>44</sup> (b–b–3+4 քառակուսիներ) հարավ՝ աստիճանաբար ընդգրկելով մոտ 500 մ<sup>2</sup> տարածք (նկ. 2, աղ. 2):

1986 թ. պեղումներ կատարվեցին –c–3–2–1, –d–3–2–1, –e–3–2–1 քառակուսիների՝ 150 մ<sup>2</sup> տարածքում: Նախորդ տարիներին պեղվել են և հեռացվել

<sup>40</sup> Անտիկ շերտի կանոնավոր պեղումների մասին (1970-ականներից ներառյալ 1985 թ.) տես Քոչարյան 1991, 15–37; Кочарян и др. 2008, 129–138:

<sup>41</sup> Այսուհետև՝ «արևելյան պեղավայր»:

<sup>42</sup> Այսուհետև՝ «արևմտյան պեղավայր»:

<sup>43</sup> Ղաֆաղարյան 1982, 12:

<sup>44</sup> Այսուհետև՝ IV դ. գահադահլիճ:

վերին միջնադարյան շերտերը, որոնք մասամբ արտացոլված էին արևմուտքից հարող (-c-3 քառ.) բարձունքի շերտագրական կտրվածքի վրա ժամանակագրական հետևյալ հերթագայությամբ՝ ա) մ. թ. VIII դ. հում աղյուսե մեծ շինության<sup>45</sup> հյուսիսից հարավ ձգված հաստահեղույս պատի հատված, բ) մ. թ. VII դ. մոխրաշերտի վերածված շինարարական հորիզոն (առաջացած 640 թ. արաբական ավերիչ արշավանքի հետևանքով), գ) մ. թ. IV-V դդ. կրաշաղախե հատակ (=IV դ. գահադահլիճի հատակի մակարդակին):

Վերջինիս հաջորդող շերտը (1,0 մ խորության վրա<sup>46</sup>)՝ քարե աղճատված հիմնապատերի տեսքով, բացվել է IV դ. գահադահլիճի հարավային հիմնապատին կից հատվածում (-c-2-1 քառ.) դեռևս 1960-ականներին: Պեղումներով փորձեցինք ամբողջացնել այս թերի բացված պատկերը: Մոտ 1÷1,20 մ խորության մեջ ուրվագծվեցին մեկ քարի բարձրությամբ պահպանված հիմնապատեր, կավակերտ հատակով սենյակի հատված, որի հյուսիսային շարունակությունը ձգվում էր գահադահլիճի տակ, իսկ արևմտյանը՝ դեպի հիշյալ (-c-3 քառ.) բարձունքը: Հատակի վրա հայտնաբերվեցին փայտի ածխացած մնացորդների պարունակությամբ (20 սմ հաստ.) մոխրաշերտ և սեղանի ու խոհանոցային մ. թ. ա. II-մ. թ. I դդ. խեցեղեն սպասքի բեկորներ: Հում աղյուսե պատերի փլվածքներից, ջարդոտված խեցանոթներից, կենդանիների սևացած ոսկորներից առաջացած կույտերը վերածվել էին դժվարությամբ պեղվող միաձույլ զանգվածի:

Պեղումները ծավալվեցին -d-3, -e-f-3-2 քառ. տարածքում (=գահադահլիճի հատակի մակարդակին), որի արևմտյան եզրով ձգվում էր մ. թ. VIII դ. հում աղյուսե մեծ շինության արևելյան զանգվածեղ պատը: Պեղվող հատվածի վերին հորիզոններում հայտնաբերվեցին X-XI դդ. ջնարակած խեցատներ, թրծած աղյուսներ, ինչպես նաև (-d-3 քառ.) լայնաբերան (1,80 մ տր.) հոր՝ լցված մոխրով, փայտի ածխացած մնացորդներով, կենդանիների ոսկորներով: Երկաթե պոչուկավոր դանակի, կավե քառակող խնկամանի, «անգորով նկարագարոված», թույլ փորագիր պատկերներով միագույն և բազմագույն ջնարակած քրեղանների առկայությունը բավարար հիմք տվեց հորը X դ. թվագրելու համար: Հորի շերտը 1,30 մ խորության մեջ փոխվեց փայտի թեփի հիշեցնող դեղնավուն զանգվածով:

Միջնադարյան՝ X-XI դդ. գտածոների անմիջապես տակ (30 սմ հաստ.) մոխրաշերտ էր՝ կրակի մեջ թրծված հում աղյուսե կոտրտանքով, մ. թ. ա.

<sup>45</sup> Արաբական տիրապետության շրջանում՝ մ. թ. VIII դ. սկզբին կառուցված արաբ ոստիկանի պալատական համալիր [տե՛ս Kalantarian 1996, 79, Fig. 22]:

<sup>46</sup> Այսուհետև՝ բոլոր չափումները տրված են գահադահլիճի կրաշաղախե հատակի (-4,05 մ) մակարդակից:

II-մ.թ. I դդ. կենցաղային խեցեղենով: Իսկ բացված կավակերտ հատակին՝ միմյանցից 1,90 մ հեռավորության վրա, տուֆե, տորածն զույգ սյունախարիսխներ էին, որոնց հարավ-արևմուտքից հարում էին X-XI դդ. կառույցի քարակերտ հիմնապատերը ( $-e-f-3-2$  քառ.) (աղ. 10):

Սյունախարիսխներից դեպի հյուսիս-արևելք ( $-e-2-1$ ,  $-d-3-2-1$ ,  $-c-1$  քառ.) ուրվագծվեց աղճատված սենյակի մի հատված՝ վառված շերտի տակ (1,20 մ խորության վրա), հատակին՝ թոնիր, օջախ, լծակավոր աղորիքի և անտիկ շրջանի խեցեղեն սպասքի բեկորներ:

Սենյակի հյուսիսարևելյան մասում ( $-d-1$  քառ.) բացվեց (1,20 մ տր.) հոր, որի՝ ընտանի թռչունների ոսկորներով հագեցած մոխրախատն հողը պարունակում էր բազմաթիվ ապակե գավաթների, թասերի, տարողունակ անոթների բեկորներ: Գունազարդ ապակու կապույտ գույնի բեկորներից մեկի վրա դեղնավուն զույգ գոտեզարդ է, իսկ մյուսի վրա՝ թևատարած թռչնի և օձի ոճավորված, բազմագույն պատկեր (Մասանյան արվեստին բնորոշ մոտիվ): Նույն հորից գտնվեցին նաև կավե՝ դուրս ծաված շուրթով հաստապատ քրեղաններ, ծածկի տափակ կղմինդրների բեկորներ (սրանցից մեկը՝ հայերեն արձանագրությամբ): Հորի հողաշերտը 1,40 մ խորության վրա ամրացավ, և բացվեցին մ.թ.ա. I հազարամյակի սկզբին պատկանող քարե շարվածքի մնացորդներ: Հորը թվագրվեց VI-VII դարերով:

1987 թ. պեղումները կենտրոնացվեցին նախ պեղավայրին հարավից հարող բարձունքի վրա՝  $-d-1+1+2$ ,  $-e-2-1+1$  քառակուսիների մոտավոր սահմաններում (աղ. 2):

Այստեղ վերին՝ 0,40 մ ընդհանուր հզորությամբ հորիզոնները պեղելիս բացվեցին.

- զգալի մասը երկշերտ, մասամբ միաշերտ, թրծած աղյուսներով սալարկված կավակերտ հատակ,
- աղյուսե սալիկներով շարված, խորշեր ունեցող պատերի (չորս շարքի բարձրությամբ պահպանված) աղճատված մնացորդներ,
- 4-5 աղյուսե սալիկներով շարված հենակներ (19×19×17 սմ), սրանց միջև՝ մասամբ կոտրված խոշոր աղյուսե սալեր (40×37×8 սմ):

Գործածված աղյուսե սալիկները գրեթե նույն չափերի են (19×19×3,5 սմ, 20×20×4 սմ, 21×21×4 սմ), և մի քանիսի ստորին մակերեսի վրա պահպանվել է վարպետի կամ արհեստանոցի նշան: Սա վկայում է նման աղյուսե սալիկների զանգվածային արտադրության մասին:

Այստեղ բացվեց երեք օջախ. մեկը ակով թոնիր էր (տր.՝ 0,95 մ, խոր.՝ 0,45 մ), որի արևմտյան եզրով ձգվում էր աղյուսե պատի քառաշար մի հատված:

Թոնիրը լցված էր վառված, կարմիր գույն ստացած կավճանման նյութով՝ խեցանոթի շրթնամասի ու կավե հալոցի բեկորների պարունակությամբ: Թոնրի կողքին հայտնաբերվեցին երկաթե առարկաներ՝ սղոց, մանգաղ հիշեցնող դանակ, ճարմանդ: Մերձակա գույգ (0,65մ, 0,68մ տր., 0,60մ, 0,40մ խոր.) օջախները լցված էին հողով:

Այս հատվածի պեղումների պատմությանը ծանոթանալիս պարզվեց, որ դեռևս 1950-ականներին բլրի գրոյական մակարդակից<sup>47</sup> 2,5մ խորության մեջ բացվել է սույն աղյուսաշեն շինությունը<sup>48</sup>: Սրա հյուսիսային երկայնքով՝ արևելքից արևմուտք, ձգվել է խորշերով աղյուսե պատը՝ աղյուսե սալիկների 12 շարք բարձրությամբ: Մա, արևմտյան հատվածում անկյուն կազմելով, ձգվել է դեպի հարավ: Սալարկված հատակը և աղյուսաշար հենակները բացվել են հաստ մոխրաշերտի մեջ, որտեղ ի հայտ են եկել վեց թոնիր-օջախ, իսկ արևելյան հատվածում՝ կարմիր տուֆե այունախարիսխ:

Պեղումների ակնատես Ա. Լ. Յակոբսոնը բացված շինությունը համարել է բաղնիք: Մինչդեռ թոնրանման հնոցները, կաղապար հիշեցնող քարե առարկաները, պղնձե հալոցը արտադրական բնույթի կառույց են հուշում, և Կ. Ղաֆադարյանը սա համարել է պղնձագործական արհեստանոց:

Ըստ շերտագրության՝ թոնիր-օջախները և երկաթե առարկաները հայտնաբերվել են աղյուսե հատակի կամ պատի տակ, հետևաբար պղնձագործական արհեստանոցը նախորդել է բաղնիքին: Այսինքն՝ արտադրական կառույցի գործունեությունը դադարելուց հետո այն մասամբ հարթեցվել է, այնուհետև շարվել է նոր շինության հատակը:

Այսպիսով, վերստին բացվում է մ. թ. XI դ. թվագրվող բաղնիքի հատվածը, որի ընդհատակյա ջեռուցման համակարգի մասին են վկայում աղյուսաշար հենակները և դրանք ժամանակին ծածկած խոշոր սալերի մնացորդները<sup>49</sup>:

Պեղումները շարունակվեցին բաղնիքի բարձունքից դեպի հյուսիս և արևելք (–b, –c, –d ուղղություններով)՝ ընդգրկելով հետևյալ հատվածները<sup>50</sup>:

–C+1+2+3+4 քառ.՝ մ. թ. ա. II–մ. թ. I դդ. խեցեղենով հագեցած մոխրառատ հատվածում բացվեցին գետաքարերով շարված, կիսաքանդ հիմնա-

<sup>47</sup> Որպես 0-ական մակարդակ ընդունվել է միջնաբերդի մ. թ. IV դ. գահադաշինի ներսում տեղադրված եռանկյունաչափական կետի տակ պահպանված բարձունքը [տես Кочарян и др. 2008, 139]:

<sup>48</sup> Տե՛ս Ղաֆադարյան 1982, 29–32, նկ. 11, 12:

<sup>49</sup> Հմմտ. 1947 թ. միջնաբերդում բացված աղյուսաշեն բաղնիքը՝ Ղաֆադարյան 1952, 62, 136–138:

<sup>50</sup> Նշենք, որ –b, –c ուղղություններով ընդգրկված հատվածների մակարդակը գահադաշինի կրաշաղախե հատակից՝ 0,40մ խորության վրա է:

պատերով և (1,20մ խոր. վրա) կավակերտ հատակով սենյակների աղճատված և հրկիզված մնացորդներ:

–C+1 քառ. մասամբ բացված սենյակի հարավային կից միջանցքում (1,40մ և 2,20մ խորության վրա) առկա երկու մակարդակի հատակներից արևմտյանը սալածածկ էր, իսկ արևելյանը՝ կավածեփ: Այստեղ, հավանաբար, փայտե սյան խարսխի դեր են կատարել (0,25մ տր.) շրջանաձև հարթ քարը՝ բացված վերին հատակի, իսկ սյան գլան հիշեցնող, կրկնակի օգտագործված (0,38մ տր., 0,30մ բարձր.) քարը՝ ստորինի վրա: Միջավայրը հագեցած էր ժամանակին բնորոշ խեցանոթների, ինչպես նաև օջախի ու թոնրի բեկորներով:

–C+2+3 քառ. աղճատված հիմնապատերի շրջակայքում, վառված շիկավուն հողաշերտում հայտնաբերված անտիկ ժամանակի խեցեղենը համալրված էր՝ հատկապես տարողունակ խեցանոթների բազմաթիվ բեկորներով և որձաքարե աղորիքներով:

Այս նույն՝ –c+2 քառ. սահմաններում բացված հիմնապատերի մնացորդները աղճատվել են նաև վերին շերտից իջեցույց (1,20մ տր., 17մ խոր.) հորի հետևանքով: Սրա (0,90մ տր.) հատակը խնամքով սվաղված է, պատերին՝ յուրաքանչյուր 0,40 մետրի վրա որմնախորշեր են: Հորում հայտնաբերվեց մեծ քանակությամբ ծածկի կղմինդը՝ երկայնակի բարձր կողերով, լայնակի եզրային ելուստ-թմբիկով, ուղղանկյուն, տափակ, զանգվածեղ սալեր և կիսափողրակավոր ու երկլանջ կալիպտերներ՝ առավելապես բեկորային վիճակում (աղ. 21, յ): Տափակ սալերի վերին մակերեսին ակոսված են զույգ ոլորագծեր անձրևաջրի հոսքի համար: Կղմինդները շիկավուն, դեղնավուն, վարդագույն, նարնջագույն երանգ ունեն, տափակ սալերի կողերը և կալիպտերները ներկված են կարմիր: Կղմինդները ի հայտ են եկել հորում՝ IV–V դդ. հատկանշական խեցանոթների (շեղազարդ, եղնազարդ գոտիներով բոլորված կարասների, ակոսագիծ ժապավեններով հարդարված, կիսագնդաձև կամ տափակ լայն նստուկով կճուճների, ձևավոր շրթնամասով սափորների, շրթի տակ ներճկված գոտիներով տաշտի), բլթակազարդ տաշվածքներով ապակե թասերի բեկորների և մանր ու խոշոր եղջերավորների ոսկորների մոխրառատ միջավայրում (աղ. 32): Սրանք, հավանաբար, շրջակայքում կատարված ինչ-որ գոհաբերությունների մնացորդներ են:

Ըստ Արամ Քալանթարյանի հայտնած նախնական կարծիքի՝ «Այս խոշոր կղմինդները, հավանաբար, պատկանել են IV դ. բազիլիկի (այն է՝ Արշակունյաց եռանավ գահադահլիճի – Գ. Ք.) տանիքին»<sup>51</sup>, հավելենք, որ դրանք

<sup>51</sup> Kalantarian 1996, 42, pl. 58:3–5.

խիստ տարբերվում են լայն տարածում ունեցած VI դ. և VII դ. կղմինդրներից (հմմտ. աղ. 21,<sub>1</sub> և <sub>3,4</sub>):

Վերը նկարագրվածին համանման լայն թմբիկով կղմինդրի տափակ սալերի բեկորներ հայտնաբերվել են նաև՝

- «արևմտյան պեղավայրում»՝ անտիկ կառույցի քարաշեն հիմքերի վրա IV–V դդ. վերակառուցված շենքի տարբեր հատվածներում,
- ստորին բերդում՝ հարավային բուրգի տակ բացահայտված V–VI դդ. հսկայածավալ շինության տարածքում,
- կենտրոնական թաղամասում՝ Սուրբ Գրիգոր կաթողիկե եկեղեցու ներսում և շրջակայքում՝ ստորին՝ IV–V դդ. հորիզոնների պեղումների ժամանակ (աղ. 21,<sub>2</sub>):

Այսպիսով, նույնառճ կղմինդրների ներկայությունն ինքնին վկայում է թվարկած վաղմիջնադարյան շինությունների ժամանակագրական մերձավորության մասին և լրացուցիչ հիմք է սրանց շինարարության թվագրման շրջանակները (IV դ.–V դ. առաջին կես) ճշգրտելու համար: Ըստ հայտնաբերված նյութերի՝ հորի ամենավաղ թվագրումը թերևս մ.թ. IV դարն է<sup>52</sup>, սակայն անհայտ է մնում գահադահլիճին կից՝ 17 մ խորությամբ հորի բուն գործառույթը:

Ծայրիյուսիսարևելյան հատվածում (մասամբ՝ –b+3+4 և –c+3+4 քառ.)՝ անտիկ ժամանակի խոհանոցային սպասքի բեկորների պարունակությամբ մոխրաշերտում, 1+1,20 մ խորության մեջ, բացվեցին կիսաքանդ հիմքեր, տուֆե, տորածն խարիսխ, սալարկված հատակ, ինչպես նաև վաղ միջնադարում կատարված թաղում: Արևմուտքից արևելք ձգված թաղման փոսը անտիկ շրջանի սալահատակից հանված գլաքարերի տեղում ձևավորված (2,20×0,65×0,44 մ) ինքնատիպ քարարկղ է՝ կմախքի մնացորդներով: Ընդ որում՝ 640 թ. արաբական ավերիչ արշավանքից հետո կատարված իջեցուկ թաղումներից մեկը IV դ. գահադահլիճի հատակի մեջ բացված մանկական նմանօրինակ թաղում է՝ կատարված սյունախարսխի հիմնահարթակից հանված երեք սալերի տեղում<sup>53</sup>:

Պեղումները ծավալվեցին դեպի հարավ՝ մասամբ ընդգրկելով –d+2+3+4 քառ. հատվածը (=գրեթե, գահադահլիճի կրաշաղախե հատակի մակար-

<sup>52</sup> Ամենայն հավանականությամբ, ընդլայնված վերակառուցում է իրականացվել Վուսն Շապուհ Արշակունու գահակալության (389–414 թթ.) խաղաղ տարիներին. գահադահլիճի տանիքի կղմինդրե ծածկը փոխարինվել է նորով, իսկ (մ.թ. IV դ. 60-ականներին հայ-պարսկական պատերազմի հետևանքով) վլասված ծածկի մեծաքանակ թափոնը ամփոփվել է մերձակա հորում [Բոչարյան, 2016, 30]:

<sup>53</sup> Հմմտ. Кочарян и др. 2008, 142, таб. XVI:

դակին): Այստեղ՝ ժամանակագրորեն խառը, անորոշ շերտին<sup>54</sup> հաջորդած մոտ 0,60 մ խորության մեջ (XI–XII դդ. ապակե ապարանջանների, ջնարակած՝ թույլ փորագիր պատկերներով քրեղանների, ծորակավոր ջրամանի ու խոհանոցային հասարակ անոթների բեկորներով հագեցած միջավայրում), բացվեցին թրծած աղյուսե թերի պատերով կազմված մեծ սենյակ և կից փոքր բաժանմունքներ՝ կավածեփի հատակներով: Մեծ սենյակի հյուսիսարևմտյան անկյունում, ( $-d+3$  քառ., 1,30 մ խոր.) հատակի վրա դրված էր որձաքարե խոշոր սանդ՝ գետաքարե, գլանաձև սանդաթակով<sup>55</sup>: Հատակը բացելիս ուրվագծվեց հսկայական չափերի սպիտակ ավազաքարերով շարվածքի մի հատված, որը, հավանաբար, մ.թ.ա. I հազարամյակի սկզբից ի վեր բլրի գագաթի հարթակն օղակող պարսպի մասն է կազմել: Հավելենք, որ պեղվող տարածքը հարում է բլրի հարավարևելյան գառիթափ լանջին:

1988 թ. պեղումները ծավալվեցին դեպի հարավ՝  $-d-2-1+1+2$ ,  $-e-2-1+1+2$  քառակուսիների տարածքում, ընդգրկելով նաև XI դ. աղյուսաշեն բաղնիքի վերաբացված հատվածը (աղ. 2):

Պեղավայրի հարավարևմտյան մասում ( $-e-1$  քառ.), բաղնիքի շերտի մեջ բացվեց նախորդ տարիներին մինչև հատակ չպեղված, XII–XIII դդ. իջեցուկ հոր, որտեղ հայտնաբերվեցին ջնարակած աղաման՝ ոլորուն շուրթով, թոնրի խուփ՝ եզերված հյուսածո գոտիով, դանակի երկաթե լայն, կոր շեղք, գամեր:

Բաղնիքի մնացորդների տակ ( $-d-1$ ,  $-e-1$  քառ. սահմանագծին) բացված հորում (տր.՝ 1,0 մ, խոր.՝ 1,60 մ) հայտնաբերվեցին X–XI դդ. հասարակ և ջնարակած՝ թույլ փորագիր երկրաչափական ու բուսական բնույթի պատկերներով, «անգորով նկարագարով» խեցեղեն սպասք (բեկորային վիճակում), բրոնզե սկուտեղ, ոսկրե զարդատուփ և այլն: Մրա հարևանությամբ ( $-e-1$  քառ.) բացվեց մեկ այլ հորի ստորին հատված (տր.՝ 0,80 մ, խոր.՝ 0,50 մ), որի մ.թ. X դ.՝ «անգորով նկարագար» ջնարակած թասերից մեկի դարչնագույն մակերեսին դեղին, կանաչ, շագանակագույն ցայտեր են, հատակի կենտրոնում՝ խաչ-սվաստիկա (հավերժության խորհրդանշան), վերջինիս թևերին՝ ոճավորված եղևիկների պատկեր (աղ. 35,<sub>4</sub>):

Շերտագրական դիտարկումները ցույց են տալիս, որ, եթե XII–XIII դդ. հորի մնացորդները բացվել են բաղնիքին պատկանող շերտի մեջ, ապա X դ.

<sup>54</sup> Խառը, անորոշ շերտը պարունակում էր՝ անտիկ հատուկենտ խեցատներ, վաղ և հատկապես զարգացած միջնադարի՝ գոտեզարդ կարասների, ապակե ապարանջանների, հախճապակե շքաղյուսների բեկորներ և XI դ. շերտավոր գրահի մնացորդներ (նման լանջապանակի թերթիկներ հայտնաբերվել են միջնաբերդում նաև նախորդ տարիներին հմմտ. Ղաֆաղարյան, 1982, 13):

<sup>55</sup> Սանդի տր.՝ 35 սմ, բարձր.՝ 26 սմ:

և X–XI դդ. հորերը՝ վերջինիս տակ: Այսինքն՝ աղյուսաշեն բաղնիքի շինությունն իրավամբ թվագրվում է ոչ ուշ, քան մ.թ. XI դ. վերջով:

Պեղվող տարածքում X–XI դդ. շերտի տակ բացվեց 640 թ. արաբական ավերիչ արշավանքի հետևանքով մոխրաշերտի վերածված VII դ. շինարարական հորիզոնը: Նույն տեղում հայտնաբերվեցին IX դ. մի քանի խեցանոթների և ապակե բաժակի բեկորներ՝ երկրաշարժից հետո համահարթեցված նույնժամանակյա շերտի տակ երբեմնի գոյության վկայությունները:

Ապա հաջորդեց IV–VI դդ. թվագրվող նյութերի խառնիճադանջ, մոխրառատ միջավայր.

- ծածկի տափակ և կիսափողրակավոր կղմինդրների բեկորներ (նույնանման՝ –c+2 քառ. մ.թ. IV դ. հորից հայտնաբերվածներին. տե՛ս 1987 թ. պեղումները),
- վանդակազարդ, շեղազարդ, եղնազարդ գոտիներով բոլորված կարասների, կիսագնդաձև կամ ընդգծված տափակ նստուկով լայնիրան սափորների, ծորակավոր, ծավված հաստ պսակով քրեղանների և բլթակազարդ տաշվածքներով ապակե թասերի բեկորներ, երկաթե նիզակի տերևաձև ու դաշույնի ծայրամասեր,
- օնիքսե բազմանիստ առարկա՝ ձվածիր փոսվածքով և հասպիսե բրգաձև ներդիր (սրանք համալրում են արդեն ավերված գահադահլիճի տարածքում VI դ. կեսերին գործող ակնագործի արհեստանոցում հայտնաբերված նյութերը)<sup>56</sup>:

Վաղմիջնադարյան այս նստվածքների արդեն ստորին հորիզոններում ի հայտ եկած հեղինիստական ժամանակաշրջանի խեցատների քանակական բացարձակ մեծամասնության պարագայում՝ մշակութային շերտի նկարագիրը զգալիորեն փոխվեց: Ակներև դարձավ (միջին չափի գետաքարերով շարված, կավե շաղախով ամրացված՝ 0,30÷0,40 մ բարձրությամբ) հեղինիստական ժամանակի հիմնապատերի վերստին օգտագործելու իրողությունը վաղ միջնադարում:

Այստեղ՝ 0,30÷0,70 մ հզորության սահմաններում պեղվող հորիզոններն արդեն հագեցած էին մ.թ.ա. II–մ.թ. I դդ. մեծ թվով բազմատեսակ խեցեղենի, շարժական օջախ-կրակարանների, մակույկաձև ու լծակավոր աղորիքների բեկորներով: Իսկ պատերի առավելագույնը՝ 0,70 մ բարձրությամբ պահպանված քարե հիմքերը կազմում էին կից բացված համաժամանակյա հիմնապատերի շարունակությունը:

<sup>56</sup> Հմմտ. Ղաֆադարյան 1982, 59–63; Кочарян и др. 2008, 141, табл. XIX, 2:

Այսպես՝  $-d-e+1+2$  քառ. տարածքում մոտ 0,60մ խորությունից սկսած՝ աստիճանաբար «գտվեցին» հորիզոնները, և անտիկ շրջանի խեցեղենի միջավայրում (դեռևս 1987 թ.) մասամբ բացված սենյակի հատակագծային պատկերը գրեթե ամբողջացավ (սենյակի՝ 1,20 և 1,40մ խորությունների վրա փաստագրվեց կավակերտ հատակների երկու մակարդակ): Ընդ որում՝  $-d+1$  քառ. հյուսիսարևմտյան հատվածում սենյակի հատակը բացելիս ի հայտ եկան խոշոր գետաքարերով անկանոն շարվածքի մնացորդներ և մարդու կմախքի մնացորդներ:

Մ.թ.ա. II–մ.թ. Iդդ. նյութերի հետ մեկտեղ հայտնաբերվեցին նաև նախորդող մշակութային շերտերի՝ մ.թ.ա. I հազարամյակի սկզբի և անգամ մ.թ.ա. III հազարամյակի խեցատներ. ակնառու է ծիսական անոթի բեկորը՝ օձի վերադիր պատկերով (մ.թ.ա. I հազարամյակի սկիզբ):

1989 թ. պեղումները շարունակվեցին գահադահլիճից հարավ՝  $-e+1+2+3$ ,  $-f+1+2$ ,  $-g+1+2$  քառակուսիների տարածքում (աղ. 2):

$-E+1+2$  քառ. հյուսիսից հարող սենյակի արևմտյան մասում ուրվագծվեց (0,50մ լայն.) մուտք՝ շեմի երեք հարթ քարերով: Մոտ 1,0÷1,20մ խորության մեջ երևան եկավ հրդեհի հետևանքով թրծված հում աղյուսների փշրանքից վատ կարմիր գույն ստացած մոխրաշերտ՝ մ.թ.ա. II–մ.թ. Iդդ. սեղանի սպասքի, ճրագների, աղորիքի բեկորներ և գույգ աղբահոր (տր.՝ 0,80մ, 0,85մ, խոր.՝ 0,50մ, 0,30մ)՝ լեցուն աննշան խեցատներով և մանր եղջերավոր կենդանիների ոսկորներով:

Այստեղ ( $-e+2$  և  $-d+2$  քառ. սահմանագծի երկու կողմում)՝ կավածեփ հատակի վրա կուտակված հողաշերտում, բացվեց մանր ու միջին գետաքարերով շարված, անկանոն ձևի երեք դամբարան (0,80×0,85մ, 1,20×1,0մ, 1,60×0,80մ)՝ մարդու գանգի ու կմախքի մնացորդներով: Բացահայտ է, որ անտիկ շրջանի շինության մեջ այս իջեցուն թաղումները կատարվել են ժամանակագրորեն ուշ՝ 640 թ. ավերիչ արշավանքներից հետո: Այդօրինակ միջամտություններ են նաև վերը հիշատակված ( $-d+1$  քառ.) սենյակի հատակին բացված խոշոր չափերի գետաքարերով անփույթ շարվածքի և կմախքի մնացորդները:

Նույն՝  $-e+1$  քառ. հարավարևմտյան հատվածի իջեցուն հորում (տր.՝ 0,90մ, խոր.՝ 1,60մ, կողերին ու հատակին տեսանելի են մ.թ.ա. I հազարամյակի սկզբի շարվածքի քարեր) հայտնաբերվեցին XI–XII դդ. դրոշմազարդ խուփեր (մեկի վրա՝ արաբատառ արձանագրության նմանակում-զարդապատկեր), ջնարակած՝ քառականթ սկահակ և քրեղաններ՝ թույլ փորագիր քառաթև բուսական զարդապատկերով:

Ձեռնամուխ եղանք նաև  $-f+1$  քառ. հարավարևմտյան անկյունում առկա բարձունքի պեղումներին: Վերին՝ մոտ 0,60մ հաստությամբ շերտում XI–XII դդ. հասարակ և ջնարակած խեցատները խառնված էին VII դ. «հովար»-թմբիկով կիսավողրակավոր կղմինդրների հետ: Աստիճանաբար քանակապես գերակշռող դարձան մ.թ.ա. II–մ.թ. I դդ. գունազարդ խեցանոթների բեկորները, գատվեց հատկապես շեփորանման բերանի բացվածքով ամբողջական կճուճը, առկա էին օջախ, աղորիք, ընտանի թռչունների ոսկորներով լցված հոր և այլն:

Պեղավայրն աստիճանաբար ընդարձակվեց՝ ընդգրկելով  $-f+1$  քառ. ամբողջ հատվածը: Մոտ 1,20–1,40 մ խորության վրա պեղելը անհնար դարձավ, ի հայտ եկավ համատարած կավակերտ ամուր մի զանգված, որը տարածված էր նաև  $-f+2$  և  $-g+1+2$  քառակուսիների հյուսիսային հատվածներում: Միաձույլ թվացող զանգվածի արևելյան և հարավային եզրագծերը բացելիս՝ միմյանց վրա թափված հում աղյուսների կույտերից պարզվեց, որ մեր առջև հսկայածավալ հում աղյուսե պատ է՝ փլված վիճակում: Փլված պատի եզրագծերը բացելիս հայտնաբերվեցին XI–XII դդ. խեցատներ, զարգացած միջնադարում լայն տարածում ստացած քառակող նետապալաքներ (մեկ գույգ), իսկ արևելյան հատվածում, միաձույլ կավակերտ զանգվածի մեջ՝ մարդու կմախքի ոսկորներ:

Հնարավոր է, որ փլված պատը միջնաբերդի գագաթը ստորին բերդից (այսինքն՝ բլրի գագաթային հարթակը լանջից) անջատող, հում աղյուսե մեծ պարսպի հատվածն է (պարիսպը 894թ. երկրաշարժից ավերվել է և կորցրել իր նախկին գործառնությունը): Նման վարկածն ընդունելի է թվում, քանի որ փլվածքի անմիջապես տակ բացվեց արևմուտքից արևելք ձգված, հսկայական քարերով կառուցված կանոնավոր շարվածք ( $-g+1+2$ ,  $-f+2$  քառ.): Հզոր կառույցի նախնական հետքերը արշավախամբի ղեկավար Արամ Քալանթարյանին ենթադրել տվեցին, որ բացվում է բլրի գագաթի հարթակն օղակող պարսպագոտին (ըստ որմնահեցի մնացորդների՝ վերջինիս անկյունային աշտարակը): Հարթակի հարավային եզրագծով բացված մոտ 10մ երկարությամբ հատվածի լայնությունը դեռևս չհաջողվեց ճշտել, քանի որ շարվածքն ամբողջովին աղճատված էր: XI–XIII դդ. հորերը իջեցված են ուղղակի պարսպի միջուկի մեջ, բացակայում են վերջինիս առանձին հատվածներ, որոշ տեղերում պահպանվել է սոսկ երեսի շարվածքը՝ մեկ քարի բարձրությամբ:

Այստեղ հայտնաբերված XI–XIII դդ. հնագիտական գտածոներից ուշագրավ են հաստախեցի կարասի բեկորը՝ *Դասրի* հայերեն արձանագրու-

թյամբ, ջնարակած քրեղանների խեցատները՝ թույլ փորագիր զարդապատկերներով, թասը՝ կարմրափայլ խաչագարդով և անոթի կարմրափայլ, խողովակավոր զույգ կանթերը:

2011–2012 թթ. հետախուզական բնույթի պեղումներ կատարվեցին աղճատված պարսպագոտու՝ 1989 թ. բացված ծայրարևելյան հատվածում ( $-g+1+2, -f+2$  քառակուսիներ): Բացահայտվեցին պարսպի քարաշեն գետնախարսխի 3,0 մ լայնությունը, ինչպես նաև ստորին՝ երրորդ և չորրորդ քարե շարքերը (ընդհանուր  $h=1,15$  մ), (նկ. 2, աղ. 2, 7, 9): Սրանց երկայնքին (1,20 մ լայնությամբ հետախուզահորի՝ 0,50 մ հզորությամբ շերտում) հայտնաբերվեց ժամանակագրորեն տարբեր՝ զարգացած միջնադարի 39, վաղ երկաթի դարի 23, վաղ բրոնզի դարի 5, ընդամենը՝ 67 խեցաբեկոր: Սրանք թեպետ սակավաթիվ, բայց ժամանակին բնորոշ խեցանոթների բեկորներ են՝

- XI–XIII դդ. թասի նուրբ օղակավոր նստուկ (ներսի ջնարակած մակերեսին՝ կանաչ, դարչնագույն, շագանակագույն քառաթև զարդ), հախճապակե ծանծաղ ափսեի շրթնամաս (կանաչավուն փայլաներկի վրա՝ մուգ կանաչ գունեղ ցայտեր), խուփի՝ փոսվածքով բռնակ (բռնորված ատամնաշար զարդագոտիով),
- վաղերկաթեդարյան՝ թեթևակի ուռուցիկ, նեղ գոտեզարդով թխագույն բեկոր,
- վաղբրոնզեդարյան՝ փայլեցված սև մակերևույթով, կարմիր աստառով, ինչպես նաև եռագույն՝ սև մակերևույթով, նարնջագույն աստառով, կարմիր ներկված՝ շեշտակի դուրս ցցված, հաստ շուրթով խեցատներ:

Ստուգողական պեղումներով պարզվեց, որ պարսպագոտու երկու թևերում էլ շարվածքն ընդհատված է, և շարունակության հետքերը բացակայում են:

2013 թ. պեղումներ կատարվեցին IV դ. «Արշակունյաց գահադահլիճի» արևմտյան թևի a–b–3–1 քառակուսիների հատվածում (աղ. 2): «Արևելյան պեղավայրում» ակնհայտ են IV դ. գահադահլիճի շերտագրական առնչություններն անտիկ ժամանակաշրջանի (մ.թ.ա. II–մ.թ. II դդ.) շինարարական հորիզոնների հետ: Գահադահլիճի տակ առկա են հյուսիսից, հարավից և արևմուտքից հարող անտիկ կառույցների զգալի հատվածներ: Սույն եռանակ շինության ստորին հորիզոնում կավածեփ, վերինում կրաշաղախե հատակները պահպանելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ անտիկ շերտի ամբողջական նկարագրի վերականգնումն անկարելի է:

Մինչդեռ գահադահլիճի արևմտյան թևի a-b-3-1 քառ. հատվածում դեռևս VIII դ. սկզբին արաբ ոստիկանի պալատական համալիրի արևելյան հարկաբաժինները կառուցելիս նշված հատակների մակերևույթից խորացել են: Հատակների բացակայությունը հնարավորություն ընձեռեց մ. թ. IV դ. նախորդող անտիկ հորիզոններ հայտնաբերելու ակնկալիքով պեղումներ կատարել -a-b-2-1 քառ. (50 մ<sup>2</sup>) հատվածում (աղ. 2):

Գահադահլիճի արևմտյան թևի նշված սահմաններում հաջորդաբար ուրվագծվեց հետևյալ հնագիտական պատկերը.

- վերին մշակութային հորիզոններում (ընդհանուր հզորությունը՝ 0,30 մ, խորությունը՝ 0,30÷0,60 մ)<sup>57</sup> տարբերակվեցին զարգացած միջնադարի (X-XI դդ.) 33, անտիկ ժամանակաշրջանի (մ. թ. ա. II-մ. թ. I դդ.) 67, վաղ երկաթեդարի (մ. թ. ա. X-VIII դդ.) 35 խեցաբեկորներ,
- հաջորդ՝ մոխրառատ հորիզոններում (խորությունը՝ 0,60÷0,90 մ) խոշոր եղջերավոր կենդանիների ոսկորների հետ մեկտեղ հայտնաբերվեցին X-XI դդ. կարասների, ծափերի, կճուճների, խոշոր կժերի, սափորների, տաշտերի, դրոշմազարդ խուփերի և ջնարակապատ՝ «անգորով նկարազարդ» թասերի հարուստ տեսականի (250 բեկոր)<sup>58</sup>, ինչպես նաև անտիկ ու վաղ երկաթի դարի մոտ երկու տասնյակ խեցատներ<sup>59</sup>,
- ստորին մոխրախառն հորիզոններում (խորությունը՝ 0,90÷1,20 մ) թրծած դեղնավուն աղյուսների կտորտանքի և թափված քարերի տակ ճգնված վիճակում հայտնաբերվեցին անհամեմատ ավելի մեծ քանակի X-XI դդ. ամբողջացող կժեր, սափորներ, «անգորով նկարազարդված» կամ թույլ փորագիր բուսական պատկերներով ջնարակածածկ թասեր<sup>60</sup> և երկաթե դանակի, գամի, ապակե սրվակի բեկորներ:

Զարգացած միջնադարին հատկանշական նյութերով (աղ. 35,<sub>1-3,5-7</sub>) հագեցած տվյալ շերտը նստած էր վաղ երկաթի դարի՝ մ. թ. ա. VIII դ. առաջին քառորդի մոխրառատ հորիզոնի վրա՝ X-XI դարերում տոփանված, կավե շաղախով սվաղված հատակին (խորությունը՝ 1,20 մ):

<sup>57</sup> Բոլոր չափումները տրված են գահադահլիճի կրաշաղախե հատակի (-4,05 մ) մակարդակից:

<sup>58</sup> Սափորներից երկուսը ամբողջացան, կճուճներից մեկը՝ մասամբ, իսկ մնացած սպասքը բեկորային վիճակում է:

<sup>59</sup> Մրանք անտիկ ժամանակաշրջանի տափաշշի, թասի, ըմպանակի և վաղ երկաթի դարի՝ փորագիր սերմնազարդ պատկերներով, ուռուցիկ ոլորագծերով բոլորված, թխագույն անոթների սակավաթիվ բեկորներ են:

<sup>60</sup> Մրանք ժամանակին բնորոշ՝ առանց նստուկի կամ նուրբ օղակավոր նստուկով, ներս հակված կամ շեշտակի դուրս փոված պսակով թասեր են:

Շերտագրական նույնօրինակ պատկեր բացահայտվեց նաև գահադահլիճի հյուսիսարևմտյան անկյունում (a-3 քառ.) 2,0×1,80 մ հետախուզահորը պեղելիս (աղ. 33,<sub>2</sub>): Սա վաղ երկաթի դարի համատարած մոխրաշերտի վրա տոփանված, կավածեփի հատակին՝ X-XI դդ. կարասների, կճուճների, խուփերի և հատկապես հարդաշաղախ կավով ծեփված թոնիրների՝ կլորավուն շուրթով ուղղաձիգ պատերի՝ շուրջ մեկ հարյուրյակի հասնող բեկորներով հագեցած շերտ էր (խորությունը՝ 1,20÷1,50 մ): Նույն տեղում հայտնաբերվեցին նաև մ.թ.ա. II-մ.թ. I դդ. և մ.թ.ա. X-VIII դդ. սակավաթիվ խեցատներ:

Սննդամթերք ամբարելու, վերամշակելու, պահելու և տեղափոխելու X-XI դդ. կարասների, ծափերի, կճուճների, խոշոր կժերի, սափորների, տաշտերի, խուփերի, թոնիրների բեկորների, ինչպես նաև ածխացած փայտի ու մոխրի, խոշոր եղջերավոր կենդանիների ոսկորների առատության իրողությունն այստեղ հավաստում է տնտեսական պահանջներ բավարարող խոհանոց-շտեմարանների և թոնրատան երբեմնի գոյությունը:

Այսպիսով, պեղված ամբողջ հատվածում ակնհայտ է X-XI դդ. նյութերի, այդ թվում նաև փլվածքներում կուտակված, ժամանակին լայնորեն կիրառվող, 4-5 սմ հաստությամբ, թրծած, դեղնավուն աղյուսների մեծ քանակությունը: Ընդ որում՝ հատակի վրա հայտնաբերված «անգորով նկարագրաված» ջնարակապատ խեցանոթների բեկորները (աղ. 35,<sub>7</sub>) որոշակիորեն աղերսվում են 894 թ. մեծ երկրաշարժից հետո կառուցված շինություններում փաստագրված համանման խեցեղենի խմբին<sup>61</sup>: Իրապես, միջնաբերդի պեղումները հաստատում են, որ նոր հատակագծային ցանցով լայնածավալ կառուցապատում է իրականացվել X-XI դարերում:

Գահադահլիճի a-b-2-1 քառ. հատվածում 25 մ<sup>2</sup> շերտագրական բարձունքի՝ 1985 թ. պեղումների ընթացքում բացահայտվել է մ.թ. IV-XIII դարերն ընդգրկող յոթ շինարարական շրջափուլ<sup>62</sup>: Զարգացած միջնադարի՝ X-XI դդ. մոտ 70 սմ հզորությամբ շերտում բացվել է կրաշաղախով սվաղված, երկկողմանի քարաշար պատ՝ ներքուստ բազմերանգ որմնանկարի հետքերով: Պատի սվաղի բեկորներից մեկի վրա կա ներկով արված թռչնապատկեր: Ըստ Արամ Քալանթարյանի՝ «պատի կատարման շինարարական տեխնիկան բնորոշ է միջնաբերդի մյուս հատվածներում անմիջապես 894 թ. մեծ երկրաշարժից հետո իրականացված կառուցապատմանը»<sup>63</sup>:

Այս ամենը վկայում է, որ տնտեսական պահանջներ բավարարող նկողային, իսկ վերնահարկում՝ որմնանկարներով հարդարված հարկաբաժին-

<sup>61</sup> Հմմտ. Ղաֆադարյան, Քալանթարյան 2002, 91:

<sup>62</sup> Տե՛ս Кочарян и др. 2008, 139-142, табл. XII, 1:

<sup>63</sup> Кочарян и др. 2008, 140-141, табл. XIII, 1, 2:

ները համաժամանակյա են: Այստեղ, հավանաբար, երբեմնի երկհարկանի շինություն է եղել<sup>64</sup>:

X–XI դդ. և IX դ. մշակութային շերտերի միջև փաստագրված մակարդակների ընդամենը 15–20 սմ տարբերությունը հնարավորություն է ընձեռում եզրակացնելու, «որ երկրաշարժից հետո փուլ եկած շենքերի տեղը հարթեցվել և նոր կառուցապատում են կատարել գրեթե նույն մակարդակի վրա»<sup>65</sup>: Արդ, 2013 թ. պեղումների արդյունքների համեմատական վերլուծությամբ պարզվում է, որ միաժամանակ յուրացվել է գահադահլիճի արևմտյան թևի նաև մասամբ խորացված հատվածը: Այստեղ վերջնականապես համահարթեցվել են անտիկ հորիզոնները, և մ. թ. ա. VIII դ. առաջին քառորդին կործանված վաղերկաթեդարյան ամրոց-սրբավայրի վերին մոխրառատ հորիզոնի վրա X–XI դդ. կառուցել են երկհարկանի շինության նկուղային հարկաբաժինները:

Այսպիսով, ամբողջովին համահարթեցված անտիկ նստվածքների պարագայում զարգացած միջնադարի կառույցները փաստագրվում են վաղերկաթեդարյան շերտի վրա: Հնագիտական նմանօրինակ միջավայրում հայտնաբերված մ. թ. ա. II–մ. թ. I դդ. խեցատները համահարթեցված անտիկ հորիզոնների երբեմնի ներկայության նյութական վկայություններ են, իսկ մ. թ. ա. X–VIII դդ. գտածոները՝ վաղերկաթեդարյան շերտի վրա իրականացված շինարարության և իջեցուկ հորերի հետևանքով ներթափանցած նմուշներ:

*1991, 2006–2008 թթ. պեղումները ծավալվեցին միջնաբերդի «արևմտյան պեղավայրում» (նկ. 2, աղ. 3):*

*1991 թ. պեղումներ կատարվեցին նախ հյուսիսարևմտյան հատվածում, որտեղ X–XIII դդ. բնակելի համալիրները կառուցված են մ. թ. ա. II–մ. թ. I դդ. և մ. թ. ա. X–VIII դդ. մշակութային նստվածքների վրա*<sup>66</sup>:

Անտիկ շերտն ավելի լայն տարածքով փորձեցինք բացել միմյանց կից երեք սենյակներից<sup>67</sup> և արտադրատնտեսական հարկաբաժիններից բաղկացած, X–XI դդ. կառուցված և XII–XIII դդ. վերակառուցված բնակելի համալիրում (a+b+c+d–16–15–14–13–12 քառակուսիներ):

Դեռևս 1950–1960-ականներին բացված տուֆե չորս սյունախարսխով հ.1

<sup>64</sup> Միջնաբերդում երկհարկանի շինությունների և որմնանկար-հարդարանքների առկայության մասին տե՛ս Ղաֆադարյան 1952, 126, 128, 134; հմմտ. Բարայան 1918, 332–333:

<sup>65</sup> Кочарян и др. 2008, 141.

<sup>66</sup> Տե՛ս Բարայան 1989, 87:

<sup>67</sup> Այսուհետև՝ սենյակները կկոչվեն ըստ հերթական համարների՝ հ. 1 (a–16–15, b–16–15 քառ.), հ. 2 (a–14, b–15–14–13, c–14 քառ.), հ. 3 (b–13–12, c–13–12 քառ.):

սենյակի<sup>68</sup> աղյուսածածկ հատակի տակ 1988թ. հայտնաբերվել են անտիկ ժամանակաշրջանի խեցանոթների (հաստիրան տափաշների, երեքնուկաձև բերանի բացվածքով, սկավառակաձև իրանով միկանթանի սափորի, շրթի տակ ներճկված գոտիով թասերի) բեկորներ և արևելյան միջնորմին կից, հյուսիսից հարավ ձգված, 6,0մ երկարությամբ, 1,10մ լայնությամբ հիմնապատ<sup>69</sup>:

Հ.1 սենյակի սյունախարիսխները տեղափոխելուց հետո հատակի տակ ի հայտ եկան անտիկ և վաղ երկաթի դարի խեցատներ: Մոտ 1,10մ խորության վրա<sup>70</sup> բացվեց մ.թ.ա. VIII դ. առաջին քառորդին վաղերկաթեդարյան բնակավայրը ավերած մեծ հրդեհի գորշ մոխրաշերտը: Այստեղ հայտնաբերվեցին համաժամանակյա թխագույն խեցատներ (որոնց ուռուցիկ գոտիները պարուրված են փորագիր ոլորագծերով) և մակույկաձև աղորիքի վերին կոտրված քար:

Հ.2 սենյակից դուրս, c-15-14, d-15 քառ.՝ 7,50×6,0մ հատվածում (-0,50մ մակարդակից սկսած) հորիզոն առ հորիզոն բացվեց 1,0մ ընդհանուր հզորությամբ X-XIII դդ. մշակութային շերտ (ջրատար խողովակների, օձազարդ կարասի, կարմրափայլ անոթների, լայնաբերան տաշտերի ու թասերի, խոհանոցային մրապատ կճուճների, թոնրի հաստ պատերի, ինչպես նաև «անգորով նկարագարով» ջնարակած քրեղանների և կապույտ հախճապակե անոթների բեկորներ): Իսկ 1,0÷1,10մ խորության մեջ հայտնաբերվեց նաև անտիկ ժամանակաշրջանի խեցեղեն: Հավելենք, որ կից (c-13 քառ., 1,0մ խոր.)՝ վառված կարմրաշիկավուն հողաշերտում դեռևս 1989թ. հայտնաբերվել էին նույնժամանակյա խեցանոթների և պորփյուրիտե թաս-սկահակի բեկորներ, լծակավոր աղորիքի վերին քար<sup>71</sup>: Այս ժամանակագրորեն «խառնիճադանջ շերտում» բացված քարե հիմնապատերի աղճատված մնացորդները բացահայտորեն ձգվում են X-XIII դդ. պատերի տակ:

Հ.2 սենյակի հյուսիսային հիմնապատի շարվածքում (b-15 քառ.) կրկնակի օգտագործված է անտիկ ժամանակաշրջանի սյունախարիսխի թմբիկ-տորուս: Վերջինիս դիմաց բացվեց (b-15 քառ., 1,0մ տր., 2,30մ խոր.) հոր, որտեղ օջախի հաստ պատերի մնացորդների պարունակությամբ մոխրաշերտին հաջորդեցին՝ XII-XIII դդ. ջնարակապատ ծորակավոր սափոր (բոլորված

<sup>68</sup> Տե՛ս Ղաֆադարյան 1982, 57-58, նկ. 37:

<sup>69</sup> 1988թ. պեղումները կատարել է Ֆրինա Բաբայանը:

<sup>70</sup> Այսուհետև՝ բոլոր չափումները տրված են հ. 1 սենյակի՝ մ.թ. XII դ. աղյուսածածկ հատակի մակարդակից:

<sup>71</sup> 1989թ. պեղումները կատարել է Ֆրինա Բաբայանը:

փորագիր լայն բուսազարդ գոտիով), կճուճ (վզին ու իրանին գույգ փորագիր շրջանագիծ), ներմուծված թասի բեկոր (ներսի մակերեսին դարչնաշագանակագույն զարդապատկեր՝ ծածկված դեղին, թափանցիկ ջնարակով), ինչպես նաև դեղնավուն քսուքով պատված, ծորակավոր ու առանց ծորակի միկանթանի սափորներ (փորագիր գծազարդով), առանց կանթի, միականթ և կրակի վրա կախելու՝ երկկանթ կարմրավուն կճուճներ, կոտրված մրապատ խուփ (բոնակին՝ ակոսված շրջանագծեր ու սերմնազարդ բոլորագուտի):

Վերոնշյալ (c-15-14, d-15 քառ.) պեղվող հատվածում մոտ 1,50մ խորությունից փոխվեց «խառը, անորոշ շերտը», և համատարած՝ մ.թ.ա. I հազարամյակի սկզբի խեցեղեն ի հայտ եկավ:

Հ.3 սենյակի արտաքին հյուսիսային պատի և 1,50մ հեռավորությամբ՝ մեկ այլ պատի քարե հիմքերով կազմված (8,50×1,50մ մակերեսով) միջանցքում դարձյալ ի հայտ եկավ մ.թ. X-XIII դդ., մ.թ.ա. II-մ.թ. I դդ., մ.թ.ա. X-VIII դդ. նյութերով՝ մոտ 0,70մ հզորությամբ, «բազմաժամանակյա շերտ»: Եվ, երբ 1,70-1,80մ խորության մեջ որոշակիորեն բացվեց մ.թ.ա. I հազարամյակի սկզբի շերտը՝ բնորոշ սևաթույր խեցեղենով և շինարարական մնացորդներով, միջանցքում պեղումները դադարեցվեցին:

Միջանցքի հյուսիսարևելյան անկյունում, նույն «բազմաժամանակյա շերտում», գրեթե միմյանց կից՝ երեք հոր հայտնաբերվեց: Հորերից առաջինը (c-13 քառ.) պարունակում էր օղակավոր ցածր նստուկով թասերի ջնարակած բեկորներ (մեկի ներսի մակերեսին կա թույլ փորագիր քառաթև վարդյակ՝ պատված դեղին, կանաչ, շագանակագույն երանգներով), ատամնազարդ գոտիով եզերված փիրուզագույն հախճապակե աղաման, դրոշմազարդ խուփի բեկոր, ինչպես նաև «կոցավոր» բերանի բացվածքով ապակե անոթի վերնամաս, վերադիր թելերով պարուրված ապակե բաժակի ու թասի բեկորներ և երկաթե դուրի ծայրամաս: Դեռևս ոչ ցայտուն ձևավորված օղակավոր նստուկով, վերացարկված թույլ փորագիր զարդապատկերով տվյալ թասերն ու հիշյալ ապակեղենը բնորոշ են հատկապես X-XI դարերին:

Երկրորդ հորը (d-12 քառ.) պարունակում էր մ.թ. XIII դ. հատկանշական օղակավոր բարձրադիր նստուկով երեք նմանատիպ քրեղան (ներսի մակերեսին կա հստակ փորագիր զարդապատկեր՝ պատված կանաչ ջնարակով), երկնագույն հախճապակե թաս և հասարակ, երկկանթ կճուճի վերնամաս (բոլորված փորագիր սերմնազարդ գոտիով, կանթի դուրս ծաված հավելվածի վրա՝ երկայնակի ճեղքվածք):

Երրորդ հորում (d-13 քառ.) հայտնաբերվեցին ջնարակած՝ մ.թ. XI դ. բնորոշ ցածրադիր նստուկով քրեղաններ (ներսի մակերեսին փորագիր քա-

նաթև կամ հնգաթև զարդապատկեր է՝ դեղինի, կանաչի, դարչնագույնի համադրությամբ, ամաններից մեկը միագույն կանաչ է) և ինը խոտան ջնարակածածկ քրեղան: Նորբախեցի, փիրուզագույն հախճապակե թասերց մեկի կողերին կա փորագիր ծակոտկեն զարդապատկեր, իսկ մյուսի նստուկին՝ արաբատառ արձանագրություն: Սպիտակ, ջնարակածածկ՝ նստուկավոր ծանծաղ ափսեներց մեկի հատակին նույնպես առկա է արաբատառ արձանագրություն: Հիշյալ ամանները համարվում են հախճապակե ափսեների ընդօրինակումներ (հավանաբար ներմուծված են):

1991թ. *պեղումներ կատարվեցին* նաև հարավարևմտյան հատվածում՝ բլրի գագաթային հարթակն օղակող պարսպին կից՝ –c-15-14, մասամբ՝ –d-15-14, –e-15-14 քառակուսիներում:

Վերին՝ մակերեսային հորիզոնում առկա էին մ.թ. XI դ., մ.թ. ա. II–մ.թ. I դդ. և մ.թ. ա. X–VIII դդ. սակավաթիվ խեցատներ: Հյուսիսարևելյան անկյունային մասում, 1,20 մ խորության վրա<sup>72</sup> բացվեց կավակերտ հատակ (այսուհետև՝ առաջին հատակ), որն աստիճանաբար ընդարձակվեց դեպի հարավ: Մրա վրա կարմրավուն մոխրաշերտ էր, տեղ-տեղ՝ կոտրատված, վառ նարնջագույն հում աղյուսներից առաջացած կույտեր, գունազարդ տափաշշերի, խաչազարդ թասի մրապատ բեկորներ, ավանդական մակույկաձև և անտիկ շրջանի լծակավոր աղորիքների մասամբ կոտրված քարեր:

Առաջին հատակի մակարդակից՝ 0,20 մ խորության վրա բացվեց խնամքով տոփանված, կավածեփ երկրորդ հատակը՝ վրան անտիկ ու վաղ երկաթի դարի հատուկենտ խեցատներ: Մ.թ. ա. I հազարամյակի սկզբի շերտը՝ բնորոշ ուռուցիկ, օձազարդ խեցանոթների բեկորներով և աշխատանքային քարե գործիքներով (սանդի թակ, աղորիք), բացվեց 1,50÷1,60 մ խորության մեջ՝ երկրորդ հատակի տակ:

Հարավարևմտյան մասում (–d-15-14 քառ., մոտ 1,0 մ խորության վրա) գետաքարերով ծածկված, կավե շաղախով ամրացված հատակը, պարզվեց, որ շարվել է հրդեհից տուժած առաջին հատակի վրա: Սալահատակն ըստ մակարդակի ու նկարագրի՝ համապատասխանում է հյուսիսից հարող անտիկ-վաղմիջնադարյան շինության<sup>73</sup> սենյակներից մեկում նույն մեծ հրդեհից առաջացած մոխրաշերտի վրա փոկված նման սալահատակին:

<sup>72</sup> Այսուհետև՝ չափումները տրված են պեղավայրը արևելքից հարող՝ մ.թ. VIII դ. հում աղյուսե պատի ներկայիս վերին մակարդակից:

<sup>73</sup> Անտիկ ժամանակաշրջանի (մ.թ. ա. II–մ.թ. I դդ.) մեծ շինության հիմքերի վրա վաղ միջնադարում՝ IV–V դդ. վերակառուցված շինության աղճատված մնացորդների մասին տե՛ս Բաբայան 1991, 102:

Պեղավայրի հարավարևմտյան անկյունում ( $-d-15$ ,  $-e-15$  քառ.)՝ բլրի գագաթային հարթակն օղակող պարսպի հում աղյուսե, մասամբ փլված վերնամասի մեջ ուրվագծվեց միջին չափի գետաքարերով կանոնավոր շարված գոգավոր պատ: Հնարավոր եղավ բացել 1,60 մ բարձրությամբ միայն 8 աստիճանաձև շարք: Ըստ նախնական դիտարկումների՝ այս բրգաձև կառույցը համարվեց բլրի վերին պարսպագոտու աշտարակ: Այն պեղելիս հայտնաբերվեցին անտիկ և վաղ երկաթի դարի խեցատներ:

Պեղավայրը հարավից հարող ( $-d-14$  քառ.)՝ գետաքարերով, թրծած աղյուսների և աղորիքների կտորտանքով անփութորեն շարված մ.թ. XI դ. պատի հիմքը (1,40×7,50×0,50 մ) դրված էր անտիկ շինության հատակից՝ 0,35 մ բարձր հողաշերտի վրա. այստեղ հայտնաբերվեց մ.թ. XI դ. բյուզանդական նոմիսմա (Կոստանդին VIII, 1025–1028 թթ.)<sup>74</sup>:

2006 թ. պեղումներ կատարվեցին բլրի գագաթային հարթակն օղակող պարսպագոտուն արևելքից հարող ( $-e-14-13$ ,  $-f-14$  քառակուսիների) հատվածում, որտեղ դեռևս անցյալ դարի 60-ականներին պեղվել և հեռացվել են մշակութային վերին շերտերը (աղ. 3): Այստեղ ( $-6,0$  մ խոր. մեջ)<sup>75</sup> ուրվագծվում են վաղերկաթեդարյան շինությունների մնացորդներ՝ քարե աղճատված հիմնապատերի տեսքով: Պեղավայրը արևմուտքից եզերված էր քանդված պարսպի հում աղյուսե վերնամասի թափոններից բաղկացած միաձույլ (1,5×3,8 մ, մոտ 2,0 մ բարձր.) գանգվածով: Վերջինիս՝ ջարդոտված և հրկիզված նարնջագույն աղյուսներով հագեցած մոխրատատ հորիզոնները պարունակում էին վաղ երկաթի դարի (այժի ոճավորված եղջյուրների ուռուցիկ պատկերով խեցատներ, անոթի կոտրված ունկ, մակույկաձև աղորիքի վերին քար), անտիկ շրջանի (գունազարդ տափաշների, տարատեսակ թասերի, տաշտի, ընպանակի վերնամասեր), վաղ միջնադարի (կարասների գանգվածեղ շրթնամասեր) և զարգացած միջնադարի (հախճապակե՝ թույլ փորագիր զարդապատկերով թասի, կարմրափայլ խեցանոթի, դեղնավուն քսուքով պատված սափորների, խոհանոցային կճուճների բեկորներ) սակավաթիվ նյութեր:

Հնագիտական այս միջավայրում բացվեց վերին՝ միջնադարյան շերտերից իջեցուկ երկու հոր: Առաջին հորում (տր.՝ 0,90 մ, խոր.՝ 4,70 մ,  $-e-f-14$  քառ.)<sup>76</sup> հայտնաբերվեցին X–XI դդ. ջնարակած՝ «անգորով նկարազարդված» և թույլ փորագիր պատկերներով թասերի, դեղնավուն ու կարմրավուն

<sup>74</sup> Տե՛ս ՀՊԹ 19758/1:

<sup>75</sup> Որպես 0-ական մակարդակ ընդունվել է միջնաբերդի մ.թ. IV դ. գահադաշտի ճի ներսում տեղադրված եռանկյունաչափական կետի տակ պահպանված բարձունքը [տե՛ս Кочарян и др. 2008, 139]:

<sup>76</sup> Այսուհետև՝ չափումները տրված են պարսպի ներկայիս մակարդակից:

քուրքներով պատված նրբախեցի անոթների, «կտցավոր» բերանի բացվածքով խոշոր կծերի, շողյուն հախճապակե թասի, բյուրեղյա ափսեի, ինչպես նաև սնդկամանների, փորագիր զարդերով ապակե գավաթների ու սրվակների բեկորներ և երկաթե կոթառավոր, տերևաձև տեգ: Մրանց հետ մեկտեղ ի հայտ եկան օրգանական մնացորդներ՝ դեղձի կորիզի կճեպ, ընտանի կենդանիների, հատկապես թռչունների մեծ թվով ոսկորներ:

Նախկինում կիսատ պեղված երկրորդ հորում (տր.՝ 1,0 մ, խոր.՝ 3,50 մ, –e-14 քառ.) ի հայտ եկան սնդկաման, դեղնավուն քուրքով պատված խեցատներ և ընտանի կենդանիների ոսկորներ: Ըստ գնդաձև նստուկով սնդկամանի՝ հորը թվագրվեց մ.թ. IX դարով:

Երկու հորերի միջև (–e-f-14 քառ., 3,20 մ խոր. մեջ) բացվեց նավակ հիշեցնող, կենդանիներ կապելու համար արված սնամեջ անցքերով քարակոփ (1,50×0,80×0,20 մ, 0,30 մ խոր.) գուռ՝ հում (8–10 սմ հաստ.) աղյուսների կտորտանքի, թխագույն խեցատների, վառված, գորշավուն հողի պարունակությամբ: Վաղ երկաթի դարին բնորոշ այդօրինակ գուռերն օգտագործվել են որպես մսուրք: Գուռը և առաջին հորը հարավից եզերված են (1,20×0,60×0,40 մ) զանգվածեղ սալաքարերով շարված պատի աղճատված մնացորդներով (2,0×1,5×1,4 մ, –e-f-14 քառ.) (աղ. 3):

*Պեղումները շարունակվեցին* արաբ ոստիկանի՝ մ.թ. VIII դ. մեծածավալ պալատական համալիրի հարավային պատին<sup>77</sup> անմիջապես հարող՝ –d-e-12 քառակուսիների հատման գոտում (աղ. 6):

Առաջին իսկ հորիզոնները (սկսած 1,20 մ խոր.)<sup>78</sup> հագեցած էին մոխրով, ածխացած փայտի մնացորդներով, կենդանիների ոսկորներով, ինչպես նաև X–XI դդ. բնորոշ՝ թրծած, դեղնավուն (22×22×4 սմ) աղյուսների կտորտանքով և բազմազան արտեֆակտերով: Նույն նկարագրի հորիզոններ աստիճանաբար բացահայտվեցին նաև մ.թ. VIII դ. շինության հարավային պատի (ինչպես անսպասելիորեն պարզվեց) քանդված հատվածում: Այստեղ (–e-12–11 քառ. մոտավոր սահմաններում) հինգ հորիզոնից բաղկացած, 0,60 մ ընդհանուր հզորությամբ X–XI դդ. մշակութային շերտի տակ բացվեց կավակերտ 2,0×4,30 մ հարթակ՝ հարավից եզերված կոպտատաշ, խոշոր քարերի շարքով (ի բացառյալ կրկնակի օգտագործված սպիտակ ավազաքարե սրբատաշ երկու սալերի՝ 0,50×0,47×0,35 մ, 0,50×0,45×0,25 մ) (աղ. 33,<sub>1</sub>):

<sup>77</sup> Հավելենք, որ 894 թ. երկրաշարժից հետո VIII դ. պալատի կանգուն մնացած հում աղյուսե զանգվածեղ պատերը վերստին օգտագործվել են, ընդ որում՝ սրանցից մի քանիսի տակ նշմարելի են աստիկ շրջանի մեծ շինության աղճատված քարաշեն հիմնապատերը:

<sup>78</sup> Չափումները տրված են մ.թ. VIII դ. պալատական շինության հարավային պատի ծայրարևմտյան հատվածի ներկայիս մակարդակից:

Ակնհայտ է, որ հարթակի վրա տևականորեն կուտակել են կենցաղում արդեն չգործածվող, ոչ պիտանի գույք՝ հատկապես թերի, կտորված, բեկորային վիճակում խեցեղեն արտադրանք (ա. *հախճապակե՝ տեղական մոխրագույն ավսեններ, Ֆուստատից, Ռեյից ներմուծված՝ շոյյուն թասեր, բ. ջնարակած՝ քառակնթ սկահակներ, պոչուկավոր ճրագներ, աղամաններ, «անգորով նկարագարդ»՝ թույլ փորագիր պատկերներով թասեր, սկուտեղներ, գ. գունազարդ՝ դեղնավուն քսուքի վրա՝ դարչնագույն երկայնակի շերտերով սպասք, դ. քսուքապար՝ բաց դեղին, դարչնագույն, վարդագույն՝ սանրագարդ, ատամնազարդ, հյուսածո գոտիներով բոլորված սրվակներ, սափորներ, կժեր, կճուճներ, երկկնթ կաթսաներ, ծափեր, տաշտեր, թասճրագներ, քառանիստ խնկաման, ե. *դրոշմազարդ խուփեր*): Հայտնաբերվեցին և *սպակե՝ մոզաիկ, գլանաձև վեցանիստ ուլունք, կանաչավուն սրվակների ու դամպարների բեկորներ, ինչպես նաև քրոնզե երկեղուստ, տափակ ծայրերով ապարանջաններ. երկաթե՝ ճանկավոր, եռաթև, բոլորաձև նետաւաքներ և դռան փականի մասեր, պայտ, զարդագամեր, մեխեր:**

Բազմաճյուղ արհեստագործության և առևտրի բարձր աստիճան հավաստող այս հնագիտական առատ նյութը՝ հատկապես Իրանից, Եգիպտոսից ներմուծված շոյյուն հախճապակին և կից հատվածում (–d-14 քառ.) 1991թ. հայտնաբերված XI դ. բյուզանդական ոսկե դրամը (Կոստանդին VIII, 1025–1028 թթ., նոմիսմա) համալրում են Դվինի միջազգային առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման մակարդակի նկարագիրը տվյալ ժամանակաշրջանում: Այս առումով ակնառու են նաև հարևանությամբ՝ –e-f-14 քառ., X–XI դդ. հորում հայտնաբերված կենդանու ոսկեգույն պատկերով շոյյուն հախճապակե թասը (ներմուծված Միջագետքի կենտրոններից) և շրթնամասին՝ արաբատառ զարդ-նմանակով բյուրեղյա փոքրիկ ավսեն (աղ. 34):

Սույն՝ X–XI դդ. կավակերտ հարթակը հարող VIII դ. (մասամբ քանդված) պատի միջուկի արևելյան և արևմտյան կտրվածքների վրա դիտվեց մշակութային շերտերի հետևյալ հերթագայություն.

- մ. թ. VIII դ. պատի հում աղյուսե կանոնավոր շարվածք (առկա բարձր.՝ 1,20 մ),
- անտիկ ժամանակաշրջանի բաց շիկավուն շերտ՝ բաղկացած մոխրի նեղ հորիզոններից (ընդհանուր հզոր.՝ 35 սմ),
- վաղ երկաթի դարի մուգ մոխրանարնջագույն շերտ (հզոր.՝ 20 սմ, վերջինիս առկայությունը փաստված է և հարթակի տակ):

Այս տվյալների համադրությամբ՝ պեղավայրում բացահայտվեց հետևյալ շերտագրական իրավիճակը.

- մ.թ. VIII դ. հում աղյուսե պատը շարելիս համահարթեցվել է վաղմիջ-նադարյան շերտը, հատվել է և զգալիորեն կրճատվել անտիկ ժամանակաշրջանի շերտը,
- X–XI դդ. հարթակը տոփանելիս համահարթեցվել են մ.թ. IX դ. երկրաշարժից մասամբ տուժած մ.թ. VIII դ. պատի տվյալ (փլված, քանդված) հատվածի մնացորդները և անտիկ մշակութային նստվածքները, մասամբ հատվել է վաղ երկաթի դարի շերտը:

Պեղավայրն ընդարձակվեց՝ ընդգրկելով հետագուտվող հարթակի հյուսիսային երկայնքին հարող 6,5×3,5մ հատվածը (մասամբ՝ նաև –d–12–11 քառ.): Մոխրի ու կենդանիների ոսկորների պարունակությամբ շիկավուն (1,10÷1,20մ խոր.) հողաշերտում հայտնաբերվեցին անտիկ ժամանակաշրջանի խեցեղեն, ապակե թասի օղակավոր նստուկ և երկաթե կորաշերտ դանակ: Հաջորդ (1,20÷1,50մ խոր.) հորիզոններում զգալիորեն աճեց զանգվածեղ, շեշտակի լայնացող իրանով կարասների ու մրապատ կճուճների բեկորների քանակը (հասնելով մի քանի տասնյակի): Այստեղ (–d–12 քառ. հարավարևմտյան մասում) միջին չափի գետաքարերով ամրացված ձվածիր օջախը աղճատվել է մ.թ. VIII դ. պատը շարելիս: Օջախի քարերի տակ բացվեց երկայնակի կիսված կարաս: Պեղավայրի հյուսիսարևելյան մասում ուրվագծվեց հատվող քարե հիմնապատերի անորոշ պատկեր: Մոտ 1,50÷1,60մ խորության մեջ նվազեց անտիկ խեցաբեկորների քանակը, և մոխրանարնջագույն հողաշերտում հայտնվեցին վաղ երկաթի դարի խեցատներ:

2007 թ. պեղումները շարունակվեցին մ.թ. VIII դ. պալատական շինության հարավային պատին կից՝ 32մ<sup>2</sup> հատվածում (–d–13 քառակուսի, –d–12 քառակուսու արևմտյան չպեղված մաս) (աղ. 3):

1. Մակերեսային Iա,բ,գ հորիզոնները (խորությունը՝ 0,90÷1,20 մ)<sup>79</sup> պարունակում էին՝ զարգացած միջնադարի 35, անտիկ շրջանի 64, վաղ երկաթի դարի 48, ընդամենը՝ 147 բեկոր: Այս միջավայրում՝ –d–13 քառ. հյուսիսային մասում, ուրվագծվեցին հարավ-արևմուտք ձգվող (3,0×0,70 մ) և դեպի հյուսիս ուղիղ անկյուն կազմող պատերի աղճատված (0,60մ բարձր.) հիմքեր: Սրանցից վերջինի հիմքը բացվեց 1,20մ երկարությամբ և տակավին շարունակվում է հողաշերտի տակ: Հիմքերի միջին չափի քարերը շաղկապված են առատ կավե շաղա-

<sup>79</sup> Որպես Օ-ական մակարդակ ընդունվել է միջնաբերդի մ.թ. IV դ. գահադահլիճի ներսում տեղադրված եռանկյունաչափական կետի տակ պահպանված բարձունքը [տե՛ս Кочарян и др. 2008, 139]:

խով: Պատի անկյունային մասում, 1,50մ խորության վրա անփութորեն թափված էին թրծած բաց վարդագույն աղյուսներ (այստեղ պեղումները դադարեցվեցին):

2. Հաջորդ՝ IIա,բ,գ հորիզոններում (խորությունը՝ 1,20÷1,50 մ) դարձյալ հայտնաբերվեց խեցեղեն հետևյալ քանակական հարաբերությամբ՝ զարգացած միջնադարի 19, անտիկ շրջանի 177, վաղ երկաթի դարի 69, ընդամենը՝ 265 բեկոր: Մ.թ. VIIIդ. պատի երկայնքով (–d–13 քառ.) բացվեցին փված պատի՝ 0,30մ հաստությամբ, կավե ամուր (1,80×0,60–1,0մ) գանգվածի վերածված մնացորդներ, միջին չափի քարեր, թրծած, դեղնավուն աղյուսների կտորտանք:
3. Հետևյալ IIIա,բ հորիզոններում (խորությունը՝ 1,50÷1,70 մ) հայտնաբերվեց անտիկ շրջանի 150, վաղ երկաթի դարի 27, ընդամենը՝ 177 խեցաբեկոր: Այստեղ՝ հրդեհից կարմրանարնջագույն երանգ ստացած հում աղյուսների կտորտանքի, վառված փայտի մոխրի, կենդանիների սևացած ոսկորների, անկանոն թափված միջին չափի գետաքարերի միջավայրում, ի հայտ եկան դանակների ուղիղ ու կոր մեկական երկաթե շեղք և խեցեգործական արհեստին առնչվող քարե խոշոր կոկիչ:

Այսպիսով, 32մ<sup>2</sup> հատվածում (0,90÷1,70մ խորության մեջ) բացահայտվեց ութ հորիզոնից բաղկացած, 0,80մ ընդհանուր հզորությամբ, մշակութային նստվածքների երեք շերտ (Iա,բ,գ, IIա,բ,գ, IIIա,բ), որոնք բնութագրվում են խեցանոթների բեկորներով և շինարարական մնացորդներով:

*Հայտնաբերված խեցեղենի* (ընդամենը՝ 590 միավոր) 9,15%-ը (54 միավոր) միջնադարյան է, 66,3%-ը (391 միավոր)՝ անտիկ շրջանի, 24,4%-ը (144 միավոր)՝ վաղերկաթեդարյան: Ըստ հորիզոնների հաջորդականության՝ անտիկ շրջանի խեցեղենի քանակի հետ մեկտեղ աճում է դրա պահպանվածության աստիճանը, և հատկապես գունազարդ անոթներով է համարվում տեսականին: Վերջինս բաղկացած է խոշոր, հաստապատ կարասների, կճուճների, օյնոխոյայի, տափաշշերի, տաշտերի, թասերի, ճրագի, կափարիչների բեկորներից: Առանձնանում է խեցանոթի կոտրված ցլազլուխ կանթը:

Թեթևակի ուռուցիկ կամ փորագիր բեկյալ, պարուրազարդ, եղունգազարդ գոտիներ ունեցող թխագույն խեցատների վաղերկաթեդարյան խումբը քանակապես զգալիորեն պակասում է IIIա,բ հորիզոններում: Քանակական ցուցանիշով՝ նվազագույնը X–XIդդ. բնորոշ դեղնավուն քսուքով պատված, փորագիր գծազարդ գոտիներով բոլորված, կճուճների ու սափոր-

ների խեցատներից կազմված խումբն է (սրա քանակը կտրուկ պակասում է IIIա,բ,գ և խսպառ բացակայում՝ IIIա,բ հորիզոններում):

*Հարվածաքար բացված շինարարական մնացորդները* ժամանակագրորեն ներկայացնում են տարբեր շինարարական ավանդույթներ: Վերին (Iբ–IIգ) հորիզոններում բացված հիմնապատերը, փլվածքների թրծած աղյուսները՝ մշակումով ու չափերով (24×24×5,0 սմ) և դեղին քսուքով պատված խեցեղենը հատկանշական են X–XI դարերին: Հրկիզված IIIա,բ հորիզոնների [փլված] քարե հիմքով հում աղյուսե պատը և խեցեղենի գերակշիռ մասը առնչվում են անտիկ ժամանակաշրջանին:

Այսպիսով, ուրվագծվում են երկու՝ անտիկ շրջանի (մ.թ.ա. II–մ.թ. I դդ.) և զարգացած միջնադարի (մ.թ. X–XI դդ.) հնագիտական համալիրներ: Շերտագրական իրավիճակների համատեքստում արձանագրվում է միջնադարյան համալիրի մասնակի ներթափանցման իրողություն անտիկ շրջանի մշակութային նստվածքների մեջ: Սա բլրի գագաթի տարածքում բազմիցս վավերացված շերտագրական իրադրություն է, երբ մ.թ. IX դ. մեծ երկրաշարժից հետո, միջնաբերդի նոր և ծավալուն կառուցապատման ժամանակ համահարթեցվել են անմիջապես նախորդող մշակութային հորիզոններն ու ներթափանցել ժամանակագրական առավել վաղ շերտեր: Նույնը տեսնում ենք և քննվող դեպքում՝ X–XI դդ. պատերի հիմքեր անտիկ շրջանի խեցեղենով հագեցած միջավայրում (տեսն 0,50 մ հզորությամբ՝ Iբ–IIգ հորիզոնները): Մինչդեռ անտիկ շերտը համեմատաբար անխաթար վիճակում՝ 0,70 մ հզորությամբ, արտացոլված է պեղավայրին անմիջապես հարող մ.թ. VIII դ. հում աղյուսե պատի հյուսիսային ճակատին: Իրավամբ, մ.թ. VIII դարի՝ կանոնավոր շարվածքով այս պատն ուղղակիորեն դրված է մոխրի, հում աղյուսների կտորտանքի շիկավուն և կարմրանարնջագույն հորիզոններից բաղկացած շերտի վրա, որը նույնանում է մ.թ. I դ. կեսին հրդեհից կործանված անտիկ բնակավայրի շերտի հետ: Վաղ երկաթի դարի խեցատների առկայությունը վերին հորիզոններում ուշ միջամտությունների, հատկապես վաղ շերտերը հատած բազմաթիվ միջնադարյան իջեցուկ հորերի հետևանք է:

Հնագիտական որոշ աշխատանքներ կատարվեցին –c–13–14 քառ. հատվածում: Զգուշորեն վերաբացվեցին մ.թ. VIII դ. հում աղյուսե պալատական շինության՝ հողմնահարված, գրեթե միաձույլ կավե զանգվածի վերածված, հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք ձգվող գույգ պատերը (առավելագույն բարձր.՝ 0,75 մ) (աղ. 3): Սրանցով կազմված միջանցքը մաքրելիս արևմտյան պատին կից՝ հողի միջից, հայտնաբերվեց մ.թ. XI դ. լայն տարածում ստացած («մանչ» կոչվող) գմբեթավոր բռնակով սկավառակաձև խու-

փի բեկոր: Երկրաշարժից հետո կանգուն մնացած այս զանգվածեղ պատերն աներկբայորեն վերստին օգտագործվել են (ընդ որում՝ սրանց տակ դեպի հարավ-արևմուտք ձգվում է վերը հիշատակված անտիկ ժամանակաշրջանի մեծ շինության աղճատված քարաշեն հիմնապատը):

2008 թ. *պեղումները շարունակվեցին* մ.թ. VIII դ. հում աղյուսե շինության հարավային պատի երկայնքով՝ –d–13–12 քառակուսիների հատվածում և –d–11 քառակուսու արևմտյան մասում (աղ. 3, 6):

Պեղումների ժամանակ III գ հորիզոնում<sup>80</sup> (հզորությունը՝ 0,15 մ, խորությունը՝ 1,70÷1,85 մ)՝ հրդեհից կարմրանարնջագույն երանգ ստացած խոշոր, հում աղյուսների և մրապատ խեցատների վաղերկաթեդարյան միջավայրում՝ փաստագրվեց անտիկ ժամանակաշրջանի աղճատված շինարարական մնացորդների՝ ուղիղ անկյուն կազմող քարե հիմնապատերի և խեցեղենի առկայություն: Անտիկ շրջանի խեցեղենի տեսականին բաղկացած էր գունազարդ տափաշների, զանգվածեղ պսակով կարասների, կճուճների 37, իսկ վաղ երկաթի դարինը՝ ներքին մակերեսը ակոսագծերով պատված ձձումի և ուռուցիկ գոտիներով պարուրված մեծ անոթների 28 բեկորներից:

Պեղավայրն ընդարձակվեց արևելյան ուղղությամբ՝ ընդգրկելով –d–11–10 քառ.՝ VIII դ. պատի երկայնքով չպեղված հարավային հատվածները (5,0×2,5 մ–5,0×2,0 մ) (աղ. 3, 6): Ճիմահողի շերտը վերացնելուց հետո բացահայտված Iա,բ,գ մշակութային հորիզոնները (խորությունը՝ 1,40÷1,70 մ) պարունակում էին ժամանակագրորեն խառը, սակավաթիվ խեցեղեն՝ բեկորային վիճակում: Առաջին երկու (Iա,բ) հորիզոններում դիտվեցին X–XI դդ., իսկ երրորդում (Iգ)՝ մ.թ.ա. II–I դդ. խեցատների քանակական առավելություն: Ուղիղ անկյուն կազմող քարե հիմնապատերին կից (1,70 մ խորության վրա)՝ կավակերտ հատակին հայտնաբերվեցին անտիկ շրջանի խեցատներ: Նույն «խառը» շերտը՝ խեցեղենի առավել նվազ քանակությամբ, բացվեց –d–10 քառ. հատվածում, որտեղ (1,90 մ խորության վրա) կավակերտ հատակին հայտնաբերվեց անտիկ շրջանի խեցանոթների 13 բեկոր: Պարզվեց, որ կավե շաղախով սվաղված այս հատակները տոփանված են մ.թ.ա. VIII դ. հրկիզված (վաղերկաթեդարյան բնակավայրի) «կարմրանարնջագույն աղյուսների շերտի» վրա:

Այս տարածքին հյուսիսից հարող հատվածի հրդեհված շերտում (2,20 մ խորության մեջ, –d–11–10 քառ.) վերաբացվեցին դեռևս անցյալ դարի 60-ականներին պեղված, անտիկ ժամանակաշրջանի մեծ շինության հարա-

<sup>80</sup> IIIա,բ հորիզոնների մասին տե՛ս 2007 թ. պեղումները:

վային պատի քարե հիմքը (երկար.՝ 4,30 մ, բարձր.՝ 0,45 մ, լայն. ստույգ չէ) և սրան կից՝ կավակերտ հատակը (աղ. 3):

Պեղումները շարունակվեցին՝ հաջորդաբար ընդգրկելով –d–c–9–8 քառ. հարավային հատվածները (յուրաքանչյուրը՝ 5,0×2,5 մ) (աղ. 3, 6): Հողմնահարույց առաջացած ստվածքային կուտակումներին հաջորդած Iա,բ,գ մշակութային հորիզոնները (խորությունը՝ 1,40÷1,80 մ) պարունակում էին բացառապես վաղմիջնադարյան խեցեղեն՝ 195 բեկոր: Պատկերը փոխվեց II ա,բ,գ (խորությունը՝ 1,80÷2,10 մ) հորիզոններում, որտեղ հայտնաբերվեց՝ վաղմիջնադարյան 52, անտիկ շրջանի 130 խեցաբեկոր: Այս նույն միջավայրում (1,90 մ խորության մեջ) բացվեցին սալահատակի մի հատված (1,50×3,50 մ) և այն հյուսիսից (լայն.՝ 1,45 մ, երկար.՝ 3,70 մ) ու արևմուտքից (լայն.՝ 1,05 մ, երկար.՝ 4,0 մ) եզերող՝ ուղիղ անկյուն կազմող, քարե հիմնապատերի մնացորդներ (պահպանված 2 քարի՝ 0,35 մ բարձրությամբ) (աղ. 6, 15<sub>4</sub>): Սրանք շարված են խառը՝ միջին ու խոշոր չափերի գետաքարերով ու շաղկապված կավաշաղախով (արևմտյան հիմնապատը պարունակում է նաև սպիտակ, մանր խճաքար): Նույն՝ –d–c–9 քառ. հորիզոններում ի հայտ եկան նաև վաղ երկաթի դարի մոտ մեկ տասնյակ և վաղ բրոնզի դարի հատուկենտ խեցատներ:

Սույն տարում պեղված տարածքի հնագիտական նյութի սուղ տեղեկատվության պայմաններում անգամ հնարավոր է ուրվագծել տարբեր ժամանակների հետևյալ համալիրներ.

- վաղերկաթեդարյան (մ.թ.ա. VIII դ. առաջին քառորդ) հրկիզված շերտ՝ խոշոր հում աղյուսներ (24×24×9,0 սմ, 25×25×10 սմ), զանգվածեղ կարասների ուռուցիկ գոտեզարդ բեկորներ,
- անտիկ ժամանակաշրջանի (մ.թ.ա. II–մ.թ. I դդ.) շերտ՝ կարասների, կճուճների, գունազարդ տափաշների, թաս-պնակների բեկորներ, ինչպես նաև պատերի քարե հիմքեր և երեք մակարդակի (1,70, 1,90, 2,20 մ խոր. վրա) կավակերտ ու սալածածկ հատակներ,
- վաղմիջնադարյան (IV–VI դդ.) շերտ՝ եղևնազարդ, տերևազարդ, շեղանկյունազարդ ուռուցիկ, լայն գոտիներով բոլորված խոշոր, տարողունակ կարասների, ծափերի, կճուճների, սափորների բեկորներ, ծակոտկեն որձաքարե երկանքի վերին շրջանաձև սալի մի հատված, մանր ու խոշոր եղջերավոր կենդանիների բազմաթիվ ոսկորներ, ինչպես նաև թրծած, կարմիր գույնի խոշոր աղյուսների, նարնջագույն ու թխագույն տուֆաքարի կտորներ, կավակերտ հատակի մնացորդներ և ծածկի կղմինդրների բեկորներ (1,80÷1,90 մ խորության մեջ),

- զարգացած միջնադարի (X–XI դդ.) շերտ՝ ջնարակած՝ թույլ փորագիր զարդապատկերով քրեղանի և հասարակ, մրապատ խոհանոցային անոթների բեկորներ:

Պեղավայրի շերտագրական իրավիճակների համատեքստում դիտվում է.

- ա) վաղերկաթեդարյան հրկիզված «կարմրանարնջագույն աղյուսների շերտի» մեջ՝ անտիկ ժամանակաշրջանի շինության հիմքերի ներթափանցում,
- բ) անտիկ շրջանի մշակութային նստվածքների մեջ, արևմտյան հատվածում (–d–13–12–11–10 քառ.)՝ զարգացած միջնադարի, իսկ արևելյանում (–d–c–9–8 քառ.)՝ վաղմիջնադարյան համալիրների մասնակի ներթափանցում,
- գ) վաղմիջնադարյան մոտ 0,50 և 0,70 մ հզորությամբ հորիզոնների առկայություն (մ.թ. IX դ. մեծ երկրաշարժից հետո)՝ X–XI դդ. միջնաբերդի նոր և ծավալուն կառուցապատումից հատկապես գերծ մնացած հատվածներում (օր.՝ –d–c–9–8 քառ.), որտեղ հայտնաբերված կարմիր ներկված, երկայնակի բարձր կողերով, լայնակի թմբիկով տափակ կղմինդրները և կիսափողրակավոր կալիպտերները, հավանաբար, պատկանել են անտիկ ժամանակաշրջանի մեծ շինության հիմքերի վրա վաղ միջնադարում վերակառուցված շենքի տանիքին:

Այսպիսով, 1986–2013 թթ. պարբերաբար իրականացված պեղումների արդյունքների համեմատական քննությունը հանգեցնում է միջնաբերդի շերտագրության որոշակի ճշգրտումների: Դվին բազմաշերտ հուշարձանի տարբեր շրջափուլերի յուրաքանչյուր ուսումնասիրություն նպաստում է բացակայող մշակութային հորիզոնները վերականգնելու, հնավայրի շերտագրական ամբողջական պատկերը համալրելու շարունակական գործընթացին:

## ՄԻՋՆԱԲԵՐԴԻ ԱՆՏԻԿ ՇԵՐՏԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Միջնադարյան պատմաճարտարապետական բացառիկ նշանակության շինությունների առկայությունը և ծավալուն կառուցապատումների պատճառով պարբերաբար իրականացված համահարթեցումները ընձեռում են անտիկ շերտի բացահայտման սուսկ հատվածական դաշտային հետազոտության հնարավորություն: Հակառակ խոչընդոտող հանգամանքների՝ բազմամյա պեղումներով հստակորեն ակնհայտ դարձավ մ. թ. ա. VIII դ. առաջին քառորդին կործանված վաղերկաթեդարյան ամրոց-սրբավայրի վերին մոխրառատ հորիզոնի վրա՝ մ. թ. ա. II դ. իրականացված ծավալուն շինարարության փաստը (սկ. 2, աղ. 1):

### *Միջնաբերդի «արևելյան պեղավայրը»*

Այստեղ առանցքային նշանակություն ունի IV դ. կառուցված «Արշակունյաց գահադահլիճը»<sup>81</sup> (b-b-3+4 քառակուսիներ) (աղ. 2): Դեռևս 1982-1985 թթ., IV դ. գահադահլիճից հյուսիս, վաղերկաթեդարյան շերտի վրա 300 մ<sup>2</sup> մակերեսով (a+d-3+3 քառ. մոտավոր սահմաններում) մասամբ բացված մ. թ. ա. II-մ. թ. I դդ. շինությունը ներկայացված է որոշակի հատակագծային հորինվածքով: Ուրվագծվել են սպիտակ ավազաքարե զույգ տորաձև սյունախարսխով կենտրոնական սրահը և կից սենյակներ: Արևմտյան թևում, որտեղ ևս բացվել է զույգ սյունախարսխս<sup>82</sup>, առկա են պարբերաբար նորոգումների և փոփոխությունների ենթարկված, կենցաղային խեցանոթներով հագեցած տնտեսական բնույթի հարկաբաժիններ: Արևելյան թևում պահպանվել են քարե լայն հիմքերով երկայնակի սրահ և կից՝ զուգահեռ միջանցք:

Մ. թ. I դ. կեսերին ավերվելուց հետո, IV-XIII դդ. նույն տեղում պարբերաբար իրականացված ծավալուն շինարարության պատճառով անտիկ շինությունը խիստ աղճատվել է: Սրա հարավային մի զգալի հատված մնացել

<sup>81</sup> Այսուհետև՝ IV դ. գահադահլիճ:

<sup>82</sup> Հիշյալ զույգ սյունախարսխսը հայտնաբերվել է անցյալ դարի 60-ականներին [տե՛ս Քոչարյան 1991, տախտ. VII, 1-4]:

է IV դ. գահադահլիճի հիմքերի տակ<sup>83</sup>, իսկ հյուսիսային շարունակությունը՝ V-VI դդ. աղյուսաշեն շինության տակ (c-2-1+1 քառ.), արևմտյան թևի վրայով ձգվել է արաբ ոստիկանի VIII դ. պալատական համալիրի<sup>84</sup> հում աղյուսե հաստահեղույս պատը (a+d-4-3 քառ.), մինչդեռ հյուսիսարևելյան հատվածը XII-XIII դդ. համահարթեցվել է, և վաղերկաթեդարյան շինվածքների վրա կառուցվել են տնտեսական բնույթի հարկաբաժիններ (b+d+2+4 քառ.): Կառույցին հյուսիսային կողմից հարում է զանգվածեղ, անմշակ քարերով շարված հիմքով, հում աղյուսե հզոր պատվարի՝ 1,5-2,0 մ բարձրությամբ հատվածը (c+e-4+2 քառ.):

2011-2012 թթ. հետախուզական բնույթի պեղումներով այստեղ արձանագրվեցին նաև՝

- գույզ տորաձև սյունախարսխով կենտրոնական սրահի (b+c-1+1 քառ.)՝ արևմուտք-արևելք ձգվող, ցարդ անհայտ հիմնապատի՝ 3,80 մ երկարությամբ, 0,60 մ բարձրությամբ, եռաշար հատվածի ներքին երեսը (աղ. 2, 4, 8<sub>1</sub>),
- քարե կանոնավոր խիտ շարվածքով անտիկ կառույցի հիմնապատի հատված<sup>85</sup> մասամբ կրկնակի օգտագործված IV դ. գահադահլիճի հյուսիսային հիմնապատի շարվածքում (a-2-1 քառ.) (աղ. 5, 8<sub>2</sub>),
- ուղղանկյուն հատակագծով որոշակի կառույցի գոյության փաստ՝ մ. թ. I դ. կեսին անտիկ շինության ավերման և IV դ. գահադահլիճի կառուցման մոտ 0,30 մ հզորությամբ միջանկյալ շերտում (-a+a+b-1 քառ.)<sup>86</sup>. սա բլրի ուսումնասիրված հատվածներում ցարդ չբացահայտված մ. թ. առաջին դարերի, թերևս վաղ Արշակունյաց ժամանակաշրջանի շերտի առայժմ միակ նյութական հավաստումն է (նկ. 2, աղ. 2, 5): Ընդ որում՝ այստեղ հայտնաբերված դաջման եղանակով պարուրազարդ, բաց դեղնականաչավուն խեցաբեկորը և ցցված ունկերով փոքրիկ (17×6,0 սմ) տափաշիշը՝ մոխրագույն մակերեսով, շուրթը, վզիկն ու կանթերը՝ թխաթույր հարդարումով, հիշեցնում են մ. թ. առաջին դարերի խեցեղեն (աղ. 13<sub>10</sub>):

<sup>83</sup> Անտիկ կառույցի զգալի հատվածներ, ամբողջովին գտնվելով գահադահլիճի հիմքերի և հատակի տակ, բացվել են (հետախուզական բնույթի պեղումների միջոցով) սուկ առանձին հիմնապատերի տեսքով:

<sup>84</sup> Այսուհետև՝ VIII դ. պալատական համալիր:

<sup>85</sup> Նորահայտ պատի հատվածի երկ.՝ 3,40 մ, լայն.՝ 0,60 մ, բարձր.՝ 0,85 մ:

<sup>86</sup> IV դ. գահադահլիճի կենտրոնական թևին հարող հյուսիսային հիմնապատից (a-1 քառ.)՝ 6,45 մ երկարությամբ, 1,35 մ լայնությամբ հարավ-արևմուտք ձգվող և դեպի հարավ-արևելք անկյուն կազմող պատերի հիմքերից մեկը՝ 3,40 մ երկարությամբ, շարունակվում է «գահավորակի» IV դ. կավածեփ հատակի տակ (-a-1 քառ.). 1985, 2011թթ. պեղումներ:

1986–1989 թթ. IV դ. գահադահլիճից հարավ (մոտ 500 մ<sup>2</sup> տարածքում)՝ մ. թ. ա. I դ. կեսին կործանված անտիկ բնակավայրի շերտի մեջ բացահայտվեցին Արտաշիսյան ժամանակաշրջանի՝ մ. թ. ա. II–մ. թ. I դդ. շինության աղճատված մնացորդներ (–b–f–3+4 քառ. մոտավոր սահմաններում) (աղ. 2):

Հատվածաբար բացված մոխրատառ հատակների վրա՝ հրդեհի մեջ թրծված հում աղյուսե պատերի վառ կարմիր գույն ստացած փլվածքների, փայտե կրող կոնստրուկցիաների ածխացած մնացորդների, ջարդոտված գունազարդ խեցանոթների մրապատ բեկորների, կենդանիների սևացած ոսկորների առկայությունը ուրվագծում է շինության հանկարծահաս կործանման օրհասական պատկեր: Վերջինս անմիջականորեն առնչվում է ամբողջ բլրով մեկ վավերացված, մ. թ. I դ. կեսին հռոմեական զորահրամանատար Կորբուլոնի ռազմարշավի ժամանակ կործանված և հրկիզված անտիկ բնակավայրի շերտին:

Ավերված շինությունը տևականորեն՝ ընդհուպ XII–XIII դդ., աղճատվել է նույն տեղում իրականացված կառուցապատումների պատճառով: Հյուսիսային շարունակությունը մնացել է IV դ. գահադահլիճի, արևմտյանը՝ VIII դ. պալատական համալիրի, հարավայինը՝ XI դ. աղյուսաշեն բաղնիքի տակ, իսկ հարավարևելյան հատվածը համահարթեցվել է XI–XII դդ. շինարարության ժամանակ: Հավելենք, որ անտիկ շինության հատակը բացելիս հայտնաբերվել են 640 թ. արաբական ավերիչ արշավանքից հետո կատարված իջեցուկ թաղումներ:

Քննվող շինության պեղումներով բացվել են՝

- պատերի աղճատված, թերի հիմքեր (կավե շաղախով ամրացված, մանր ու միջին չափերի գետաքարերի՝ միջինը՝ 1,0 մ լայնությամբ, մինչև 0,80 մ բարձրությամբ շարվածք),
- հատակների երկու մակարդակ (1,20 մ և 1,40 մ խորության վրա տոփանված հողաշերտ՝ հարթեցված կավե շաղախով կամ սալարկված տափակ գետաքարերով)<sup>87</sup>,
- փայտե սյան տուֆե տորածն խարիսխներ:

Առկա հնագիտական իրավիճակի ընձեռած հնարավորության սահմաններում անտիկ շրջանի շինության քիչ թե շատ կանոնավոր հատվածների վերլուծությամբ ուրվագծվում են արևմուտքում, մասամբ և հարավում միմյանց կից աղճատված սենյակների մնացորդներ.

<sup>87</sup> Բոլոր չափումները տրված են IV դ. գահադահլիճի կրաշաղախե հատակի (–4,05 մ) մակարդակից:

- գահադահլիճից հարավ-արևմուտք ( $-e-3-2$ ,  $-f-2$  քառ.). ա) in situ բացված նարնջագույն տուֆե, տորածն գույզ պյունախարսխով<sup>88</sup> սենյակի 30սմ հաստությամբ մոխրաշերտում՝ կրակի մեջ թրծված հում աղյուսների կտորտանք<sup>89</sup>, կավակերտ հատակի մեջ ճգնված երկկանթանի կճուճ՝ բերանի բացվածքը թասով ծածկված, տափաշշի, կճուճի, ըմպանակի, թասի բեկորներ, բ) նույն միջավայրում՝ X-XI դդ. կառույցի ( $-e-f-3-2$  քառ.) քարակերտ հիմնապատեր և խեցեղեն. այսինքն՝ X-XI դարերում նախորդ մշակութային շերտերը համահարթեցվել են, մասամբ ներթափանցել անտիկ շերտի մեջ (աղ. 2, 10),
- գույզ պյունախարսխով սենյակին կից՝ ուղղանկյուն հատակագծով սենյակի ( $-c-2-1$ ,  $-d-3-2-1$ ,  $-e-2-1$  քառ.) վառված, կարմիր գույն ստացած շերտում. ա) կավածեփ հատակին<sup>90</sup> առօրյա գործածության փոքր թոնիր՝ ակով, կողքին կիսով չափ թաղված կարաս, հարդախառն կավով ծեփված օջախ<sup>91</sup>, մասամբ կտորված, որձաքարե լծակավոր աղորիք, խեցեղեն սպասք (ճրագ, անոթի խողովակավոր ծորակ, նրբախեցի ըմպանակի, խաչագարդ թասի, թաս-քրեղանների, երանգագարդ կճուճների և գունագարդ տափաշշերի բեկորներ), բ)  $-e-2-1$  քառ. հարավային մասում՝ 1,40մ խորության վրա, կավածեփ հատակի մոխրաշերտի մեջ լծակավոր աղորիքի վերին քար, ամբողջական խեցանոթներ (սև ու կարմիր ծաղկաշղթաներով բոլորված գունագարդ կճուճիկ, խոհանոցային ցածրադիր պուլիկ, ըմպանակ, նավականման ճրագ),
- գահադահլիճի հարավային հիմնապատին կից՝ աղճատված սենյակի ( $-c-3-2-1$  քառ.) կավակերտ հատակի վրա՝ փայտի ածխացած մնացորդների պարունակությամբ (20սմ հաստ.) մոխրաշերտ և խեցեղեն սպասք (նրբախեցի ըմպանակների, թաս-քրեղանների, սկահակ-ձիթանճրագների, գունագարդ տափաշշերի, կճուճների, պուլիկի և կանաչ խայտերով մուգ մոխրագույն պորփյուրիտե սկահակի բեկորներ),
- գահադահլիճից հարավ, գրեթե ամբողջական հատակագծով սենյակում ( $-d-e+1+2$  քառ.) կավակերտ հատակի վրա՝ մասամբ կտորված տափաշշերի, պնակի դուրս ճկված վարդյակագարդ նստուկի, ձևա-

<sup>88</sup> Զույգ պյունախարսխի (0,29×0,29×0,16մ և 0,32×0,32×0,17 մ) քառանիստ պատվանդանների վրա՝ (տր.՝ 0,18 մ) դարակիկներով (տր.՝ 0,28 մ, h=0,08մ և տր.՝ 0,33 մ, h=0,09 մ) տորուսներ:

<sup>89</sup> Բեկորային վիճակում պահպանված աղյուսի չափերն են՝ 15°×11×6սմ:

<sup>90</sup> Կավածեփ հատակը բացվել է 1,20մ խորության վրա:

<sup>91</sup> Թոնրի տր.՝ 0,35 մ, խոր.՝ 0,5 մ, օջախի տր.՝ 0,7, խոր.՝ 0,16, կողի հաստ.՝ 0,03մ:

- վոր վերնամասով թասերի, քրեղանների, ընպանակների բեկորներ,
- վերոնշյալ սենյակին հարավից հարող հատվածաբար բացված հատակին (մոտավորապես  $-e+1+2, -f+1$  քառ. սահմաններում). ա) հրդեհի մեջ թրծված հում աղյուսներից վառ կարմիր գույն ստացած մոխրաշերտ, ծորակավոր անոթի, քրեղանի, թասի, ընպանակի, ճրագների, ադորիքի բեկորներ, գույգ աղբահոր<sup>92</sup> լեցուն խեցատներով և մանր եղջերավոր կենդանիների ոսկորներով, բ)  $-f+1$  քառ.՝ շեփորանման բերանի բացվածքով ամբողջական կճուճ, գունազարդ տափաշների բեկորներ (որոնցից մեկը՝ կարիճի գունազարդ, ոճավորված պատկերով), ինչպես նաև մոխրով լեցուն, անկանոն եզրագծով օջախ և գույգ աղբահոր<sup>93</sup> ձիթաճրագների, խոհանոցային անոթների բեկորների, ընտանի կենդանիների ու թռչունների ոսկորների պարունակությամբ,
  - գահադահլիճից հարավ-արևելք ( $-d+2+3+4$  քառ., 1,30 մ խոր. վրա)՝ վաղերկաթեդարյան շերտի վրա XI–XII դդ. կառուցված նկուղային մեծ սենյակ կից բաժանմունքներով՝ քարաշեն հիմքեր՝ թրծած աղյուսե սալիկներով շարված վերնամասերի մնացորդներով, կավածեփ հատակ, անկյունում՝ որձաքարե, խոշոր սանդ՝ սանդաթակով. այսինքն (XI–XII դդ.)՝ ամբողջովին համահարթեցվել են նախորդ՝ այդ թվում և անտիկ հորիզոնները, ներթափանցել մոտ 0,5 մ խորությամբ մ.թ.ա. I հազարամյակի սկզբի շերտի մեջ:

Քննվող շինության հյուսիսարևելյան ( $-b+2+3+4, -c-1+1+2+3+4$  քառ.)՝ բազմիցս կրած փոփոխությունների ու նորոգումների ակնհայտ հետքերով, կիսաքանդ հիմնապատերով, մոխրառատ ու խեցառատ բաժանմունքների խճողված ցանցում դիտվում են.

- մասամբ բացված սենյակ և հարավային հիմնապատին կից միջանցք ( $-c+1+2$  քառ.)՝ սալածածկ և կավածեփ հատակներ, օջախի ու թոնրի մնացորդներ, խեցանոթների որոշակի տեսականու (տափաշիչ, կարաս, կճուճ, երեքնուկաձև ծորակով անոթ, թաս-քրեղան, ընպանակ, ճրագ) բեկորներ,
- աղճատված հիմնապատերի միջավայրում ( $-c+2+3$  քառ.). ա) հաստաշուրթ, տարողունակ կարասների, կճուճների, տափաշների մեծաքանակ բեկորներ, կոտրված, թերի, գլանաձև խոշոր խեցանոթ՝ կանեփի հատիկների պարունակությամբ, բ) մոխրաշերտի մեջ՝ որձաքարե ադորիքներ (երկայնակի ակոսաավակով վերին ու թեթևակի գոգավորությամբ ստորին վեց սալ), որձաքարե հավանգ, գ)  $-c+3$  քառ., 1,20 մ

<sup>92</sup> Աղբահորերի տր.՝ 80 և 85 սմ, խոր.՝ 50 և 30 սմ:

<sup>93</sup> Օջախի չափերն են՝ 1,35×70 սմ, խոր.՝ 50 սմ, աղբահորերի տր.՝ 80 և 70 սմ, խոր.՝ 50 և 80 սմ:

խոր. վրա, կավածեփի հատակի մեջ ուղղահայաց դիրքով, կիսով չափ թաղված՝ վերին մասը կոտրված, զանգվածեղ կարաս՝ ձիթանրագի, խոհանոցային կճուճների, խոշոր տափաշշի պարունակությամբ (գրեթե բոլոր անոթները ամբողջանում են),

- ծայրիյուսարևելյան հատվածում (մասամբ՝ –b–c+3+4 քառ.). ա) անկյուն կազմող պատերի՝ մանր գետաքարերով շարված կիսաքանդ հիմքեր, գետաքարերով սալարկված հատակ, փայտե սյան գորշավուն տուֆե, տորաձև խարիսխ<sup>94</sup>, մոխրով լեցուն ճիշտ նույն չափերի (0,60մ տր., 0,30մ խոր.) երկու օջախ, բ) մոխրաշերտ, խոհանոցային կճուճների, թաս-քրեղանների, հատկապես՝ գունազարդ տափաշշերի մի քանի տասնյակ բեկորներ և դանակի երկաթե, կոր շեղբ:

Արդ, փորձենք առկա հնագիտական իրավիճակի պարագայում բացահայտել անտիկ շրջանի շինության գործառության բնույթը:

Հնագիտական գտածոները առավելապես (շուրջ մի քանի հարյուր) կոտրված, թերի խեցանոթներ են: Մեղանի և խոհանոցային առօրյա գործածության խեցեղեն սպասք (ըմպանակ, գավաթ, թաս, քրեղան, պուլիկ, ծորակավոր սափոր, տափաշիշ, կճուճ և այլն) առավել մեծ քանակությամբ առկա է շինության արևմտյան, մասամբ և հարավային մասում: Ի հեճուկս խեցեղենի հիշյալ տեսականու, մթերք ամբարելու, պահելու անհամեմատ մեծաքանակ տարա (կարաս, տափաշիշ, կճուճ) և մթերք վերամշակելու միջոցներ՝ քարե սարք-հարմարանքներ, դիտվում են շինության հատկապես հյուսիսարևելյան բաժանմունքների ցանցում:

Այսպիսով, պեղավայրի գտածոների կազմը (աղ. 11, 12, 13, 26) հուշում է Արտաշիսյան ժամանակաշրջանի՝ մ.թ.ա. II–մ.թ. Iդդ. շինության *արևմտյան հարվածում բնակելի սենյակների, իսկ սրանց կից՝ դեպի հյուսիս և արևելք տարածված, զուր տնտեսական պահանջներ բավարարող խոհանոց-շրեմարանների առկայություն, ընդ որում՝ կարասների ու տափաշշերի բացահայտ մեծ քանակությունը հավաստում է և գինու մատանի ներկայություն:*

### Միջնաբերդի «արևմտյան պեղավայրը»

Այստեղ՝ դեռևս 1960-ականներից սկսած, արար ռուսիկանի VIII դ. պալատական համալիրի (մոտավորապես c–g–16–6 քառակուսիների) սահմաններում, հատվածաբար բացվել են անտիկ շինության հիմքերի մնացորդներ<sup>95</sup>: Հետագա՝ 1991, 2006–2008 թթ. պեղումների արդյունքները հնարավորություն

<sup>94</sup> Մյունախարսխի (0,26×0,20×0,09 մ) քառանիստ պատվանդանի վրա՝ (տր.՝ 0,23 մ) թմբիկ-տորուս:

<sup>95</sup> Հմմտ. Ա. Ժամկոչյանի 1966, 1967 թթ. դաշտային օրագրերը (պահվում են Դ-վիճում):

ընձեռեցին ուրվագծելու վաղերկաթեդարյան մոխրառատ շերտի վրա կառուցված Արտաշիսյան ժամանակաշրջանի (մ. թ. ա. II–մ. թ. I դդ.) մեծ շինության համեմատաբար կապակցված հատակագծային պատկերը (նկ. 2, աղ. 3):

Այստեղ արձանագրված հնագիտական իրավիճակը (քանդված պատերի անկանոն թափված քարեր, հում աղյուսների կարմիր երանգ ստացած կտորտանք, կավի ամուր զանգվածի մնացորդներ, կարմրաշիկավուն հող, փայտի մոխիր, ջարդոտված գունազարդ խեցանոթների մրապատ բեկորներ, սևացած ոսկորներ) մ. թ. 59 թ. հռոմեացիների հանկարծահաս հարձակումից կործանված և հրկիզված անտիկ բնակավայրի քաջածանոթ պատկերն է:

Պատմահնագիտական հետազոտությունները հավաստում են.

- քննվող շինությունը մ. թ. I դ. կեսին ավերվելուց, հրկիզվելուց հետո նույն հատակագծով վերակառուցվել է վաղ միջնադարում՝
  - ա) քարաշեն հիմքերի վրա՝ հում աղյուսե պատեր,
  - բ) IV–V դդ. բնորոշ կղմինդրածածկ տանիք<sup>96</sup>,
  - գ) հրդեհից տուժած, մոխրաշերտով ծածկված հին հատակի վրա՝ գետաքարերով ծածկված, կավե շաղախով ամրացված նոր հատակ (–d–15–14 քառ. մոտ 1,0 մ խորության վրա)<sup>97</sup>.
- 640 թ.՝ արաբական արշավանքների ժամանակ, շենքը կրկին ավերվել է ու հրդեհվել (V–VII դդ. սասանյան կնքադրոշմներ են հայտնաբերվել շենքի պահեստային բաժանմունքներից մեկում՝ մոխրակույտի մեջ)<sup>98</sup>.
- արաբական տիրապետության շրջանում, VIII դ. սկզբին նույն տեղում նոր հատակագծով կառուցվել է արաբ ոստիկանի պալատական համալիրը<sup>99</sup>՝
  - ա) հարթեցված վաղմիջնադարյան նստվածքներ,

<sup>96</sup> Վաղ միջնադարում վերակառուցված շենքի տանիքը ծածկվել է IV–V դդ. բնորոշ՝ երկայնակի բարձր կողերով, լայնակի թմբիկով տափակ և կիսափողոթակավոր, կարմիր ներկված, խոշոր կղմինդրներով [հմմտ. Քոչարյան 2016, 28–29]:

<sup>97</sup> Չափումը տրված է պեղավայրը արևելքից հարող՝ մ. թ. VIII դ. հում աղյուսե պատի ներկայիս վերին մակարդակից: Մալահատակն՝ ըստ մակարդակի ու նկարագրի (ինչպես նախորդ գլխում է նշվել) համապատասխանում է նաև հյուսիսից հարող սենյակներից մեկում, նույն մեծ հրդեհից առաջացած մոխրաշերտի վրա փոկված նման սալահատակին [հմմտ. Բաբայան 1991, 102]:

<sup>98</sup> Տե՛ս Kalantarian 1996, 100; հմմտ. նաև Մ. Վահանյանի 1954 թ. դաշտային օրագիրը (պահվում է Դվինում):

<sup>99</sup> Տե՛ս Ղաֆադարյան 1982, 96–98; Քալանթարյան, Ղաֆադարյան 1987, 63; Kalantarian 1996, 78–79:

- բ) անտիկ շերտի վրա դրված խոշոր չափերի հում աղյուսե կանոնավոր շարվածքի՝ 2,0 մ լայնությամբ զանգվածեղ պատեր.
- 894 թ. մեծ երկրաշարժի ժամանակ շինությունը կործանվել է.
  - զարգացած միջնադարում՝ X–XIII դդ. նոր հատակագծային ցանցով կառուցվել և վերակառուցվել են բնակելի-արտադրատնտեսական համալիրներ՝
  - ա) մասամբ հարթեցված նախորդող շերտեր, կրկնակի օգտագործված նախկին հում աղյուսե զանգվածեղ պատեր,
  - բ) անտիկ շրջանի քարաշեն հիմքերի հատվածներ՝ միջնադարյան բնակելի կառույցի հատակի տակ ( $a+b+c-16-12$  քառ.)<sup>100</sup>,
  - գ) հիմնապատերի շարվածքում՝ կրկնակի օգտագործված, նախորդ շինություններին պատկանող, սպիտակ ավազաքարե սրբատաշ քարեր, ճարտարապետական տարրեր (օրինակ՝  $b-15$  քառ. անտիկ շրջանի սյունախարսի թմբիկ-տորուս՝  $d=0,35$  մ,  $h=0,18$  մ) և մակույկաձև ու լծակավոր կոտրված աղորիքներ ( $-d-14$  քառ.).
  - XIII դ. կեսերին մոնղոլական կործանարար ռազմարշավների հետևանքով կյանքն այստեղ ընդմիշտ դադարել է:

Ծավալուն կառուցապատումների տևական միջամտությունների հետևանքով գրեթե ամբողջովին աղճատված անտիկ շինության տարրեր հատվածներում դիտվում են.

- արևելյան մասում ( $-b-f-12-10$  քառ.)՝ հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ձգված քարաշեն հիմնապատ՝ կից ներքին բաժանմունքներով,
- հիմնապատի օրգանական շարունակությունը կազմող, դեպի պարսպի արևմտյան լանջահայաց մասը ձգվող միջանցքի հիմքեր ( $-b-c-12-13-14$  քառ. և այլն),
- միջանցքի հիմքերին հյուսիսից, հարավից և հարավ-արևելքից հարող բաժանմունքների քարաշեն հիմնապատերի հատվածներ:

Շինարարական առկա նյութի սակավությամբ հանդերձ նշմարվում է շինության երկայնական առանցքով հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք ձգվող միջանցք և սրա երկու թևերին հարող սենյակների ընդհանրական ուրվապատկեր:

<sup>100</sup> Հյուսիսարևմտյան հատվածում ( $-a+a+b-16-13$  քառ.)՝ X–XI դդ. կառուցված և XII–XIII դդ. վերակառուցված բնակելի համալիրի հատակի տակ՝ գունազարդ տափաշների, ընկանակների, թաս-քրեղանների բեկորների միջավայրում քարե հիմնապատերի աղճատված մնացորդների առկայություն [հմնտ. Բաբայան 1989, 87]:

Անտիկ շինության սահմաններում բացահայտված շինարարական մնացորդները ներկայացնում են՝

- տարբեր չափի գետաքարերի, սպիտակ ավազաքարի բեկորների ու խճաքարի պարունակությամբ, կավաշաղախով կապակցված՝ 1,10÷1,45մ լայնությամբ, 1–3 շարք բարձրությամբ հիմնապատեր,
- հում աղյուսե պատերի մնացորդներ,
- կավե շաղախով սվաղված կամ տափակ գետաքարերով սալարկված հատակների հատվածներ (հատակների՝ 0,20–0,30մ տարբերությամբ, 1,70, 1,90, 2,20մ խոր. վրա, երեք մակարդակների առկայությունը շենքի տևական շահագործման վկայություն է) (աղ. 6, 14<sub>5</sub>, 15<sub>4</sub>):

Այս թերի պահպանված շինության տարբեր հատվածներում՝ մ.թ.ա. II – մ.թ. I դդ. մշակութային շերտը տատանվում է 0,30-ից մինչև 0,70 մ միջին հզորության սահմաններում (0,70 մ հզորություն փաստագրված է՝ –d–13–12–11 քառ. տարածքում):

*Տվյալ շինության աջ թևում*, միջանցքից հյուսիս (–b+c–16–10 քառ., միջնադարյան բնակելի համալիրի հատակի տակ)՝ աղճատված հիմնապատերի միջավայրում կուտակված միջին չափի կճուճների, տափաշների, սափորների, ըմպանակների, տարատեսակ թասերի, տաշտերի, ձիթաճրագի և պորփյուրիտե սկահակի բեկորների քննությամբ բացահայտվում է անտիկ ժամանակաշրջանին բնորոշ՝ կենցաղում լայնորեն գործածվող, սեղանի ու խոհանոցային սպասքի տեսականի:

*Շինության ձախ թևում*, միջանցքից հարավ և հարավ-արևելք (–d–e–15–8 քառ.)՝ աղճատված սենյակներում հայտնաբերված բազմաբնույթ հնագիտական գտածոների քննությամբ բացահայտվում են.

- սննդամթերք վերամշակելու միջոցներ (ձձումի, կաթնամանների, խմորի տաշտերի բեկորներ, աղորիքներ, դանակներ, կարաս-օջախ),
- սննդամթերք պահելու ու տեղափոխելու տարա (տարողունակ կարասների՝ d=30÷50 սմ, կճուճների՝ d=25÷30 սմ, տափաշների բեկորների առատություն, փայտի մոխրի զգալի քանակը չի բացառում մրգի ու բանջարեղենի փայտե արկղների երբեմնի առկայություն),
- սննդամթերք ամբարելու շտեմարաններ, այդ թվում՝ գինու մառան (–d–13–11 քառ., գինու կարասների և տափաշների արտաքին կավե սվաղ՝ հաստ. 5÷6 մմ, որոշ կարասների ու կճուճների նստուկների, հաճախ նաև կողերի՝ հացամթերքի պահպանումն ապահովող անցքեր՝ d=1 սմ, ինչպես նաև փայտե արկղների հնարավոր ներկայություն),

- տնտեսավարման խեցանոթների արտադրության միջոցներ (դուրզի անիվի մանրամաս, կոկիչ),
- մսուրային անասունների ապաստան՝ գոմ (–d–9–8 քառ., տափակ գետաքարերով սալարկված սենյակ, ընտանի կենդանիների ոսկորների առատություն) (աղ. 14–18):

Այսպիսով, առկա հնագիտական նյութի համեմատական վերլուծությանը՝ բլրի գագաթային հարթակի «արևմտյան պեղավայրում» ուրվագծվում է մ. թ. ա. II – մ. թ. I դդ. բնակելի շինություն՝ ճյուղավորված փնտրասական հարկաբաժիններով հանդերձ:

Ստացված փոքրիշատե ամբողջական պատկերի ճշգրտման համար անհրաժեշտ է իրականացնել հյուսիսարևելյան կից հատվածի հնագիտական հետազոտություն: Ընդ որում՝ գագաթի հյուսիսային կողմում, 1949 թ. ստորին մշակութային շերտերը պեղելիս (b+c–7–6 քառ.) բացվել է, հետագա շինարարական միջամտության հետևանքով աղճատված, անտիկ ժամանակի շինության մի հատված՝ սպիտակ ավազաքարե զույգ տորաձև խարսխով (աղ. 3):

Շերտագրական իրավիճակների համատեքստում դիտելիս՝ ներկայացված անտիկ շինության (c–g–16–8 քառակուսիների) մոտավոր սահմաններում արձանագրվում են.

- անտիկ ժամանակաշրջանի շինության հիմքերի ներթափանցման իրողություն՝ վաղերկաթեդարյան (մ. թ. ա. VIII դ. առաջին քառորդի) հրկիզված «կարմրանարնջագույն աղյուսների շերտի» մեջ<sup>101</sup>,
- արևելյան հատվածում (–d–9–8 քառ.)՝ անտիկ մշակութային նստվածքների մեջ՝ վաղմիջնադարյան (IV–VI դդ.) հնագիտական համալիրի մասնակի ներթափանցում,
- արևմտյան հատվածում (–d–13–12–11–10 քառ.)՝ անտիկ շրջանի մշակութային նստվածքների մեջ՝ X–XI դդ. զարգացած միջնադարի համալիրների մասնակի ներթափանցում,
- հյուսիսարևմտյան հատվածում (–a+b–16–13 քառ.)՝ անտիկ շերտի վրա X–XI դդ. կառուցված և XII–XIII դդ. վերակառուցված, արտադրատնտեսական հարկաբաժիններից բաղկացած բնակելի համալիրի աղյուսե հատակի տակ անտիկ խեցեղեն և քարաշեն հիմքեր՝ կրկնակի օգտագործված որպես հենասպատ կամ կցապատ (օր.՝ a+b–15–14

<sup>101</sup> Վաղերկաթեդարյան (հրդեհի մեջ թրծված) հում աղյուսների չափերն են՝ 24×24×9,0 սմ, 25×25×10 սմ:

քառ., միջնադարյան հաղորդակից սենյակների պատը շարված է անտիկ հիմնապատին կից՝ սրա երկայնքին)<sup>102</sup>։ մինչդեռ սույն համալիրի որոշ հատվածներում ամբողջովին համահարթեցվել են նախորդ՝ այդ թվում անտիկ հորիզոնները, և ուղղակի ներթափանցել վաղերկաթեդարյան բնակավայրն ավերած մ.թ.ա. VIII դ. առաջին քառորդի մեծ հրդեհի շերտի մեջ։

Այսուհանդերձ, X–XI դդ. համահարթեցումներից զերծ մնացած հատվածներում արձանագրվում է ն՝ վաղմիջնադարյան, ն՝ անտիկ մշակութային հորիզոնների առկայություն (օրինակ՝ –d–9–8 քառ.)։

*Այսպիսով, փորձենք ի մի բերել միջնաբերդի պեղումներով ցարդ ձեռք բերված տեղեկատվությունը։*

1. Պեղումները և շերտագրական դիտարկումները հավաստում են բլրի գագաթի հարթակին ծավալուն շինարարության պարբերական ընթացք։ Միջնաբերդի առավել լայնածավալ կառուցապատման շրջափուլերում՝ Դվինի քաղաքայնացման գործընթացում (մ.թ. IV–VII դդ.), արաբական տիրապետության շրջանում (մ.թ. VIII–IX դդ.), հատկապես 894 թ. մեծ երկրաշարժից հետո (մ.թ. X–XIII դդ.) իրականացվել են նախորդող մշակութային շերտերի մասնակի կամ ամբողջական համահարթեցումներ՝ ընդհուպ անտիկ, վաղերկաթեդարյան, անգամ վաղբրոնզեդարյան շերտերը։ Սրանց հետևանքով մ.թ. X–XIII դդ. կառույցները հայտնվել են մ.թ.ա. II–մ.թ. I դդ., մ.թ.ա. X–VIII դդ., մինչև իսկ՝ III հազարամյակի շերտերի վրա։ Նման զանգվածային համահարթեցումների պարագայում բացառված չէ հնավայրի շերտագրության մեջ բացակայող, դեռևս հստակորեն չփաստագրված շերտերի ոչնչացված լինելու հնարավորությունը (օրինակ՝ հմմտ. մ.թ. առաջին դարերի՝ վաղ Արշակունյաց ժամանակաշրջանի շերտի առկայությունը՝ –a+a+b–1 քառ., որտեղ առանց IV դ. գահադահլիճի պահպանված մասը խաթարելու անհնար է վերականգնել նախորդ շերտի հնագիտական ամբողջական պատկերը)։
2. Համահարթեցումներից զատ փաստագրվում են և անտիկ շինությունների առանձին հատվածների, սրբատաշ քարերի, ճարտարապետական տարրերի, նույնիսկ՝ հատակագծային ցանցի կրկնակի օգտագործման իրողություններ։ Պահպանվածության նման իրավիճակում հատված և զգալիորեն կրճատված անտիկ շերտի հզորությունը բլրի

<sup>102</sup> Հյուսիսից հարավ ձգված՝ 6,0 մ երկարությամբ, 1,10 մ լայնությամբ անտիկ հիմնապատը շարված է մանր ու միջին չափերի գետաքարերով և սպիտակ ավազաքարի բեկորներով, ամրացված է կավե շաղախով։

հարթակի տարբեր մասերում տատանվում է 0,30÷1,50 մ սահմաններում: Քննվող շերտը համեմատաբար անխաթար վիճակում (1,50 մ հզորությամբ՝ 5,50 մ խորության վրա)<sup>103</sup> առկա է IV դ. գահադահլիճից հյուսիս՝ 1982–1985 թթ. մասամբ բացված անտիկ ժամանակաշրջանի շինության հատվածում<sup>104</sup> (աղ. 2):

3. Մ. թ. ա. VIII դ. առաջին քառորդին ավերված ու հրկիզված վաղերկաթեղարյան ամրոց-սրբավայրի վերին՝ «կարմրանարնջագույն ադյունների շերտի» վրա մ. թ. ա. II դ. կառուցված շինությունները գրեթե ամբողջովին աղճատված են՝ մ. թ. I–XIII դդ. նվաճումների, ավերումների, երկրաշարժերի հետևանքով և նոր ծավալուն կառուցապատումների պատճառով: Այս բոլորից գատ, IV–XIII դդ. բազմաթիվ իջեցուկ հորեր տարբեր մակարդակներում քանդել են անտիկ շինության հիմքերը, հատել հատակները, խաթարել ստորին մշակութային հորիզոնները: Անտիկ շերտի շինարարական հորիզոնների այդօրինակ փոփոխված իրավիճակում հայտնաբերված հնագիտական նյութի (հատկապես գունազարդ խեցեղենի) նույնատարրությունը և հետագա ավերիչ միջամտությունները խոչընդոտում են հնագիտորեն որոշակի ենթաշերտեր տարբերակելուն:
4. Պահպանվածության առկա գոյավիճակում անտիկ շերտը ներկայանում է սուսկ հատվածաբար բացահայտված շինությունների ընդհանրական ուրվապատկերով: Բլրի գագաթի տարբեր մասերում, մ. թ. ա. II–մ. թ. I դդ.՝ 0,30÷1,50 մ հզորությամբ շերտում ուրվագծվում են՝ ա) երկայնակի առանցքով ձգված միջանցքի և սրան հարող ճյուղավորված հարկաբաժինների, բ) in situ սյան տորաձև խարիսխներով կենտրոնական սենյակի և կից սենյակների մնացորդներ: Ջույգ սյունախարսխի առկայությունը չի բացառում երդիկածածկ, խմբավորող ընդհանուր սենյակի երբեմնի գոյություն: Այսինքն՝ ուրվագծվում է հատակագծային հորինվածքի ավանդական սխեմա, որն ընկած է նաև Արտաշատի համաժամանակյա՝ մ. թ. ա. II–մ. թ. I դդ. բնակելի համալիրների հիմքում<sup>105</sup>:

Հիմնապատերը (0,80–1,45 մ լայն., 0,30–1,0 մ բարձր.) շարված են կավաշաղախով կապակցված միջին չափի գետաքարերով, վերնամասը՝ հում

<sup>103</sup> Տվյալ չափումը տրված է բլրի գրոյական մակարդակից՝ «Արշակունյաց գահադահլիճի» ներքում տեղադրված եռանկյունաչափական կետի տակ պահպանված բարձունքից [հմնտ. Кочарян и др. 2008, 139]:

<sup>104</sup> Հմնտ. Քոչարյան 1991, 18–20:

<sup>105</sup> Տե՛ս Ղաֆաղարյան 1984, 79–80, 126–128; հմնտ. Тоникян 1987, 7–11:

աղյուսով: Տոփանված հատակները սվաղված են կավե շաղախով կամ սալարկված տափակ գետաքարերով: Մյան տորածն խարիսխները տաշված են սպիտակ ավազաքարե, շիկավուն տուֆե մեկական ամբողջական զանգվածից: Այս շերտում փաստված նորոգումների, փոփոխությունների, վերակառուցումների հետքերը վկայում են շինությունների երկարատև գոյության մասին: Իսկ քանդված, վառված պատերի փլվածքներով և ջարդոտված խեցանոթների բեկորներով հագեցած մոխրառատ միջավայրը բացահայտում է դաժան հարձակման, ավերածությունների և մեծ հրդեհի իրողություն:

### *Բլրի գագաթի պարսպագորին*

Հնագիտական խաթարված իրավիճակ է վավերացվել «ջրավազանից»<sup>106</sup> արևելք (հյուսիսից հարավ ձգվող՝ -f-g-h-i-5 քառ. ) և հարավային լանջին հարող (-i-10-3 քառ.) հատվածում, որտեղ՝ մոխրառատ շերտում, հայտնաբերվել են պատերի քարե հիմքեր, հում աղյուսե վերնամասերի մնացորդներ և անտիկ շրջանին հատկանշական գունազարդ խեցեղեն<sup>107</sup>: Բլրի գագաթի հարավարևելյան եզրագծի տվյալ հատվածում փաստագրվել են «մեծազանգված քարերով շարված կիկլոպյան պատերի մնացորդներ»<sup>108</sup>:

Հնավայրի ուսումնասիրության դեռևս առաջին տարիներին նկատվել է «բլրի գագաթին տեղավորված նախնական բնակավայրը»<sup>109</sup> պատասպարող աղճատված պարսպագորին: Իրավամբ, բազմամյա պեղումների ընթացքում գրեթե բոլոր լանջահայաց մասերում հատվածաբար բացվել են բլրի գագաթի խիտ կառուցապատված (մոտ 0, 5 հա) հարթակն օղակող պարսպագոտու մնացորդները: Մրանց գետնախարսխի հսկայածավալ քարերը միմյանց հետ ամրացված են կավե շաղախով և մանր գետաքարերի լիցքով, իսկ վերնամասը շարված է եղել հում աղյուսով:

1. Գագաթի հարթակի ծայրհարավարևելյան եզրագծով (-f+2-e+3, -g+1+2 քառ.) բացվել են՝ 10մ երկարությամբ, 3մ լանսությամբ, 1,15մ ընդհանուր բարձրությամբ գետնախարսխի հատված և սրա մասը կազմող՝ քառանկյուն հատակագծով աշտարակի կիսավեր հիմքեր (երկար.՝ 5,0 մ, ելուստը մոտ 2,0 մ)<sup>110</sup> (նկ. 2, աղ. 2, 7, 9):

<sup>106</sup> Պայմանականորեն «ջրավազան» է կոչվում (-e-f-g-10-9 քառ.) միջնադարյան շրջանանկ կառույցը [իմմո. Ղաֆադարյան 1982, 46, նկ. 28], իսկ ըստ արշավախմբի ճարտարապետ Կորյուն Ղաֆադարյանի՝ «ջրամբար» (տե՛ս աղ. 6):

<sup>107</sup> Кушнарева 1977, 6; Ղաֆադարյան, Քալանթարյան 2002, 23-24:

<sup>108</sup> Ղաֆադարյան 1982, 54:

<sup>109</sup> Ղաֆադարյան 1952, 23-24, 60, 62:

<sup>110</sup> Պարսպի գետնախարսխի հատվածը բացվել է 1989, 2012թթ. պեղումների ժամանակ:

2. Գազաթի հարթակի հարավարևմտյան հատվածում (–d–e–15 քառ.)՝ պարսպագոտու վերնամասի հում աղյուսե միջուկի մեջ բացվել են միջին չափի գետաքարերով աստիճանաձև շարված, կորագիծ, գոգավոր կառույցի, հավանաբար, կիսաբոլոր կամ բոլորաձև աշտարակի մնացորդներ (ցարդ պեղվել է ութ շարք՝ 1,6 մ ընդհանուր բարձրությամբ. արտաքին շարվածքը չի պահպանվել)<sup>111</sup> (աղ. 3):

Պարսպի բացահայտված երկու աշտարակներն էլ ամրաշինական հանգույցներ լինելուց բացի, ակնհայտորեն հանդիսացել են Մեծամոր և Երասխ գետերի հովիտներով անցնող ռազմավարական ճանապարհները հսկող ամրոցի դիտակետ-աշտարակներ: Նյութական փաստացի վկայությունների սղության պատճառով դեռևս անհնար է որոշել ամրոցի աշտարակների իրական թիվն ու տեղադրման համաչափությունը, մուտքի (կամ մուտքերի) տեղը: Այսուհանդերձ, պարսպի նույնիսկ աղճատված հատվածների և անմիջականորեն կից կացարանների շերտագրական առնչությունների վերլուծությամբ ուրվագծվում է պարսպի և բնակավայրի գոյության հիմնական շրջափուլերի համապատասխանությունը մ.թ.ա. I հազարամյակում, Արտաշիայան և Արշակունյաց ժամանակաշրջաններում մինչև IX դ. մեծ երկրաշարժը<sup>112</sup>:

Այսպես՝ բլրի հարավարևմտյան լանջը եզերող պարսպահատվածին անմիջապես կից սենյակում ակնհայտ են մ.թ.ա. I հազարամյակի սկզբից ի վեր պարբերաբար նորոգումներով ուղեկցվող ժամանակագրական անցումները (նախորդող շերտերը դեռևս չեն պեղվել): Այստեղ վաղ երկաթի, ապա հելլենիստական ժամանակաշրջանի հատակները նորոգվել և օգտագործվել են: Վերջինիս ավերված, հրկիզված շերտը վաղ միջնադարում խնամքով հարթել, տոփանել են և սավաճածկ նոր հատակ փռել վրան: Այսինքն՝ տարբեր ժամանակներին հատկանշական նյութերով հատակները վկայում են կյանքի տևական գոյությունը պարսպին անմիջապես կից կացարանում (տե՛ս 1991 թ. պեղումները միջնաբերդում): Իսկ պարսպի հյուսիսարևելյան հատվածում բացահայտվել է անմիջական կոնստրուկտիվ կապը մ.թ. VIII դ. հում աղյուսե մեծ շինության հետ: Փաստագրվել են վերջինիս ուղղահայաց պատից մնացած ազուցող աղյուսներ պարսպի հում աղյուսե վերնամասի մեջ:

Այս սահմանափակ (մոտ՝ 0, 5 հա) տարածքի յուրաքանչյուր հերթական կառուցապատման ժամանակ դիտվում են ծավալատարածական այնպիսի

<sup>111</sup> Ըստ արշավախմբի ճարտարապետ Կորյուն Ղաֆադարյանի՝ ներսից երեսապատված այս բրգաձև կառույցը աշտարակ է՝ մտած պարսպի հում աղյուսե վերնամասի մեջ. 1991 թ. բացված քննվող կառույցը վերջնականապես բնութագրելու համար անհրաժեշտ են լրացուցիչ պեղումներ:

<sup>112</sup> Հմմտ. Kalantarian 1996, 55–57:

լուծումներ, որոնց համաձայն պարսպի որոշակի հատվածներ ուղղակիորեն ընդգրկվում են կից շինությունների հատակագծային հորինվածքի մեջ՝ դառնալով վերջինիս օրգանական մասը, ստեղծելով կոտ մի ամբողջություն բլրի գագաթին:

Այսինքն՝ պարիսպն ու բնակավայրը պարբերաբար վերականգնվել են գրեթե բոլոր հանգուցային դարաշրջաններում: Բլրի գագաթին ստեղծված այս կոտ ամբողջությունը խաթարվում է մ. թ. 894 թ. մեծ երկրաշարժի հետևանքով, և քննվող պարսպագոտին ընդմիջտ կորցնում է իր պաշտպանական առաջնային գործառույթը: X–XIII դդ. ծավալուն կառուցապատման ժամանակ քանդված պարսպի առանձին հատվածներ համահարթեցվում են կամ դառնում սոսկ հենապատեր կամ կցապատեր հետագա շինությունների համար<sup>113</sup>:

<sup>113</sup> Որոշ հատվածներում X–XIII դդ. հորերը իջեցված են ուղղակի պարսպի քանդված միջուկի մեջ:

## ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ

Դ՛վինի հոգևոր կենտրոնը գտնվում է միջնաբերդի բլրի հարավարևմտյան ստորոտին և պայմանականորեն կոչվում է կենտրոնական թաղամաս (նկ. 2): 1970-ականներից ի վեր հատվածաբար բացված անտիկ շերտի ընդհանրացված պատկերը<sup>114</sup> վերականգնելու համար անհրաժեշտ եղավ 1990 թ. վերսկսել դաշտային հնագիտական աշխատանքները կենտրոնական թաղամասում:

1990 թ. պեղումներ կատարվեցին VII դ. կաթողիկոսական պալատի արևմտյան պատից 1,50 մ հեռավորության վրա՝ 5×10 մ հատվածում (=կաթողիկոսարանի XI դ. աղյուսածածկ հատակի մակարդակին)<sup>115</sup>: Խճից, քառակուսի, կարմրավուն աղյուսների կտորտանքից, մանր քարերից բաղկացած, տեղ-տեղ մոխրախառն շերտը պարունակում էր՝

- մ. թ. ա. X–VIII դդ. և մ. թ. ա. II–մ. թ. I դդ. սակավաթիվ խեցատներ,
- IV–V դդ. կղմինդրների (հատկապես կիսափողրակավոր կալիպտերների) և եղննագարդ ու շեղագարդ գոտիներով բոլորված կարասների խեցատներ, VII դ. տափակ և «հովար»-թմբիկով կիսափողրակավոր կղմինդրների, կրաշաղախի հետքերով ջրատար խողովակների բեկորներ,
- IX դ. վաղ ջնարակած քրեղանի օղակավոր նստուկ (ներսի մակերեսին, անմիջապես խեցու վրա՝ դեղին, շագանակագույն, կանաչ բուսագարդ), խոշոր, լայնականթ կժերի բեկորներ և կանաչ ապակե դամպարների ներճկված նստուկներ:

Բացվող ենթաշերտերում (ընդհանուր հզորությունը՝ 0,90 մ) աստիճանաբար գերակշռող դարձան IX դ. բնորոշ նյութերը.

- դեղնավուն քսուքով պատված, եռաշուրթ պսակով խոշոր կժերի, ուսամասը՝ ակոսագծերով ու հյուսածո նեղ գոտիներով պարուրված

<sup>114</sup> Տե՛ս Քոչարյան 1991, 22–25:

<sup>115</sup> Այսուհետև՝ բոլոր չափումները տրված են կաթողիկոսական պալատի XI դ. աղյուսածածկ հատակի մակարդակից:

սափորների բեկորներ (սրանցից մեկի վրա կա երկտառ հայերեն արձանագրություն՝ **Ք u** ), փոսիկ-բռնակով խուփերի՝ սանրաձև բուրբազներով հարդարված խեցատներ և քառակուսի, վառ կարմրանարնջագույն աղյուսներ (21×21×4, 22×22×5, 23×23×4 սմ),

- բաց կանաչ ապակե, երկկանթ կամ եռականթ դամպարների և մուգ շագանակագույն ապակե, մատներափոր-բջջագարդ բաժակի բեկորներ:

IX դ. հատկանշական նյութերի այս միջավայրում՝ 1,70 մ խորության վրա, բացվեց կավածեփ հատակ: Հայտնաբերվեցին հասարակ միականթ սափորիկ, ապակե թասի մատներագարդ ոտք-նստուկ, գունագարդ ապակե բաժակի շրթնամաս՝ արաբատառ արձանագրության նմանակում-գարդապատկերով, ինչպես նաև դաշույնի երկաթե տափակ շեղք, գամ, քառակող նետասլաք, իսկ հատակի հյուսիսարևմտյան մասում բացվեց հաստ մոխրաշերտ՝ կենդանիների ոսկորների պարունակությամբ:

Պեղավայրի հարավարևելյան անկյունում (որտեղ բացակայում էր IX դ. հատակը) ի հայտ եկան սպիտակ ավազաքարի, կարմիր ու սև տուֆի տաշվածքներ և VII դ. մասամբ կտորված կղմինդրներ: Բացված շերտն իր նկարագրով առնչվում է VII դ. կաթողիկոսարանի կառուցմանը:

Պեղումների ընթացքում հայտնաբերվեց 6 հոր՝ IX դ. հատկանշական հետևյալ նյութերի պարունակությամբ.

- հոր 1 (տր.՝ 1,25 մ, խոր.՝ 4,0 մ, պեղավայրի հարավարևելյան անկյուն)՝ վաղ ջնարակած թասի բեկոր (անմիջապես խեցու վրա մուգ կանաչ, շագանակագույն բուսագարդ՝ պատված դեղնականաչավուն թափանցիկ ջնարակով), կեղծ կանթերով, լայն, տափակ նստուկով, ցածրադիր անոթի բեկորներ (արտաքին մակերեսի վրա դրոշմագարդ բեկյալ-շեղանկյունի և բուսական բնույթի գոտիներ՝ պատված դեղնականաչավուն ջնարակով), երկարավիզ սափորի և ծավված, հաստ շուրթով տաշտի բեկորներ (պատված դեղնավուն քսուքով), ձևավոր շրթնամասով, կանթավոր կճուճի բեկորներ (իրանի ուռուցիկ մաար՝ բոլորված վերադիր ալիքաձև գոտիով), կանաչ ապակե գավաթի բարձր, ոլորուն ոտք-նստուկ,
- հոր 2 (տր.՝ 0,95 մ, խոր.՝ 1,10 մ, պեղավայրի հարավարևմտյան հատված)՝ սափորի փորագիր, գոտեգարդ իրան, խոհանոցային անոթների մի քանի աննշան բեկոր,
- հոր 3 (տր.՝ 1,0 մ, խոր.՝ 2,80 մ, պեղավայրի հյուսիսարևելյան հատված)՝ նուրբ, օղակավոր նստուկով թասի և ափսեի բեկորներ (խեցու

- վրա դեղին, կանաչ, շագանակագույն բուսազարդ՝ պատված կաթնավուն ջնարակով. անոթները ներմուծված են Սամարայից), տափակ, հարթ նստուկով սափորի ստորին մաս (արտաքին մակերեսին՝ եռագույն բուսական զարդապատկեր՝ պատված թափանցիկ դեղին ջնարակով), սափորի բարձր վզամաս (բոլորված ուռուցիկ, նեղ գոտիով, պատված դեղին քսուքով), մրապատ, դարչնագույն կճուճներ (մեկը քառականթ է՝ հանդիպակաց երկու ցցված կանթերի հիմքերին կան մատնահպում-փոսվածքներ, իսկ մյուս երկու կեղծ կանթերի միջև՝ վարպետի սլաք-նշաններ), ակոսավոր շուրթով կճուճ (պատված դեղնավուն քսուքով) և սրան հարմարեցված թեք եզրով խուփ,
- հոր 4 (տր.՝ 1,0 մ, խոր.՝ 2,0 մ, պեղավայրի կենտրոնական հատված)՝ ջնարակած նկարազարդ թասերի, ձևավոր կանթերով կճուճների (իրանը պարուրված փորագիլի ալիքաձև գոտիներով), թեք եզրով խուփի, բարձրավիզ սափորի (ուսամասը բոլորված ակոսագծերով, պատված դեղնավուն քսուքով) և կապտականաչավուն ապակե, բջջազարդ անոթների բեկորներ, բաժակների ներճկված նստուկներ,
  - հոր 5 (տր.՝ 1,0 մ, խոր.՝ 3,80 մ, պեղավայրի հարավարևմտյան հատված)՝ ձևավոր շրթնամասով, վիզը ուռուցիկ գոտիով բոլորված սափորների, ցցված հորիզոնական կանթերով կճուճների, քառանկյուն խնկամանի (մուգ կարմիր ներկված, փայլեցված) և կանաչ ապակե, կանթավոր բաժակի բեկորներ,
  - հոր 6 (տր.՝ 1,20 մ, խոր.՝ 3,80 մ, պեղավայրի հարավարևմտյան հատված)՝ ջնարակած՝ օղակավոր նստուկով թասի բեկոր՝ եռագույն բուսական ու սլաքաձև զարդապատկերով, դեղնավուն քսուքով պատված՝ ակոսագծերով բոլորված սափորների և կիսալուսնաձև ցցուն կանթերով կճուճների բեկորներ, ապակե դամպարների կանթեր ու ներճկված նստուկներ և ընտանի կենդանիների (հատկապես ոչխարների) մեծաքանակ ոսկորներ:

Պեղավայրի կենտրոնական մասում հոր 4-ը պեղելիս սրա՝ հարավային կողի կտրվածքի վրա ի հայտ եկած սպիտակ ավազաքարով շարվածքի շարունակությունը բացվեց (հորից դուրս՝ դեպի արևելք) IV-V դդ. շերտում: Հայտնաբերվեցին մեկ քարի բարձրությամբ, 2,10մ երկարությամբ երկու գուգահեռ հիմնապատերի մնացորդներ՝ սպիտակ ավազաքարի տաշվածքներից բաղկացած միջուկի մնացորդներով: Հիմնապատերի միջև (0, 65մ լայն.) նեղ միջանցք է՝ հատակը սալածածկ: Սա ուղղակիորեն առնչվում է դեռևս նախորդ տարիներին կաթողիկոսարանի հյուսիսարևմտյան մասում բացված հորում ի հայտ եկած, սպիտակ ավազաքարով շարված հիմնապա-

տերի մնացորդներին: Ըստ շերտագրական տվյալների և հայտնաբերված նյութերի (երկայնակի, բարձր կողերով ու լայնակի թմբիկով կղմինդրներ, ապակե՝ բլթակազարդ տաշվածքներով թասերի բեկորներ, բրոնզե ականջօղ և այլն)՝ IV–V դդ. թվագրվող այս սպիտակ ավազաքարե շինությունները բացահայտորեն ավերվել են IX դ. իջեցուկ հորերի խիտ ցանցի հետևանքով: IV–V դդ. շերտը պեղելիս բացվեց սպիտակ ավազաքարի տաշվածքների և մ.թ.ա. I հազարամյակի սկզբի սակավաթիվ խեցատների պարունակությամբ մի հորիզոն: Պեղումներն այստեղ դադարեցվեցին:

Այսպիսով, VII դ. կաթողիկոսական պալատից արևմուտք ընկած հատվածում բացահայտվեցին IX դ. 1,70 մ, VII դ. 0, 50 մ, IV–V դդ. 0, 40 մ հզորությամբ մշակութային նստվածքներ: Ամենահզորը IX դ. շերտն է, որն ըստ բնութագրի և հորերի առատության՝ հավաստում է այստեղ հարուստ տնտեսական հարկաբաժինների երբեմնի գոյությունը, որոնք ավերվել են ու հրդեհվել, հավանաբար, 894 թ. մեծ երկրաշարժի հետևանքով: Մշակութային VII դ. շերտն առնչվում է VII դ. կաթողիկոսական պալատի կառուցմանը, իսկ IV–V դդ. շերտը՝ սպիտակ ավազաքարե շինություններին: Ուշագրավ է, որ վերջիններս հիմնապատերի քարերը *կրկնակի օգրագործված սրբալուսաշքարեր են՝ վերցված IV–V դդ. նախորդող շրջանի ավերված շինություններից:*

Պեղումների ընթացքում հայտնաբերվեցին նաև անտիկ ժամանակաշրջանի սակավաթիվ խեցատներ: Չի բացառվում, որ IV–V դդ. համահարթեցվել է անտիկ շրջանի շերտը, քանզի վերջինիս գոյությունը կենտրոնական թաղամասում հնագիտորեն վկայված է անցյալ դարի 1937-ականներից ի վեր՝ թե՛ կաթողիկոսական պալատի ներսում, և թե՛ մերձակայքում<sup>116</sup> (նկ. 2):

Հավելենք, որ դեռևս անցյալ դարի 30–40-ականներին բացված V դ. միանավ եկեղեցին 1988 թ. *վերստին պեղվեց*<sup>117</sup> (նկ. 2): Հատակագծային հորինվածքին և թվագրությանն առնչվող որոշ հարցեր ճշգրտելու համար եկեղեցու հիմքերը բացելիս մ.թ.ա. I հազարամյակի սկզբի նյութերի հետ մեկտեղ հայտնաբերվեցին նաև անտիկ ժամանակաշրջանին բնորոշ զանգվածեղ կարասի վերնամաս (օղակված վառ կարմիր ժապավենազարդով), տափաշշի բեկոր (ծածկված բուսական զարդեր հիշեցնող, կարմիր ներկի վրձնահարվածներով), երեքնուկաձև ծորակով անոթի վերնամաս (պարուրված բաց և մուգ շագանակագույն ցանցազարդ գոտիով), ինչպես նաև գունազարդ կիսագնդաձև թաս-գավաթի, խաչազարդ թասի, նրբախեցի ըմպանակի, փայլեցված տաշտի, մրապատ խոհանոցային կճուճների բեկորներ:

1992 թ. *դաշտային հնագիտական աշխարանքների ընթացքում*, Սուրբ Գրիգոր կաթողիկե եկեղեցու հարավային ավանդատնից հարավ՝ հողա-

<sup>116</sup> Հմմտ. Քոչարյան 1991, 22–25:

<sup>117</sup> Տե՛ս Քալանթարյան, Ղաֆադարյան, 1989, 66–67:

թմբի կտրվածքի մեջ բացվեց անտիկ շրջանի կարասային թաղում<sup>118</sup>: Հորիզոնական դիրքով տեղադրված, քարերով շրջափակված կարասն ուղղված էր հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք<sup>119</sup>: Կարասի բերանը գրեթե հաված էր ավանդատան հարավային պատին (վերջինիս վերին նիշից՝ 1,16 մ խորության վրա): Հողով լցված կարասում ննջեցյալի կմախք չէր պահպանվել: Այս, ինչպես նաև՝ 1947 թ. բացված հին արքիդի աջակողմյան պատին գրեթե հաված կարասային թաղումը վկայում են, որ եկեղեցին կառուցելիս նախնիների գերեզմանները չեն եղծվել<sup>120</sup>:

### *Սուրբ Գրիգոր մայր տաճարի պեղումները*

Կանոնավոր պեղումների ընթացքում չափազրվել, ուսումնասիրվել և ճարտարապետական տեսակետով ու գրավոր աղբյուրների վկայությունների համադրությամբ ներկայացվել է մայր տաճարը: Քննական վերլուծությունը դեռևս 1950-ականներին հնարավորություն էր ընձեռել բացահայտելու IV դ. կառուցված Սուրբ Գրիգոր (Լուսավորիչ) մայր տաճարի վաղագույն եռանավ շինությունը և հետագայում նրա կրած հատակագծային փոփոխությունները<sup>121</sup> (սկ. 2):

V դ. 60–70-ականներին Հայոց հոգևոր կենտրոնը Վաղարշապատից Դվին տեղափոխելու կապակցությամբ իրականացվող լայնածավալ շինարարության ընթացքում այն վերակառուցելիս հավելվել են ավագ խորանին կից ավանդատները<sup>122</sup>, արտաքին սյունասարահը, ձևավորվել է խճանկարով նոր հատակ, նորոգվել է տանիքը: VII դ. պատմագիր Սեբեոսի վկայությամբ՝ VI դ. 70-ականներին, Վարդան Մամիկոնյանի (Կարմիր Վարդանի) գլխավորությամբ հայերի ապստամբական գործողություններին ի պատասխան, պարսիկները Դվինում «գեկեղեցի սրբոյն Գրիգորի ... հարին հուր և այրեցին»<sup>123</sup>: VII դ. սկզբին՝ Հայոց մարզպան Սմբատ Բագրատունու օրոք, ավերված եռանավ եկեղեցին վերականգնվեց խաչաձև նոր հատակագծով՝ որպես գմբեթավոր սրահ: Դվինի մայր տաճարը վերջնականապես ավերվեց 894 թ. մեծ երկրաշարժի ժամանակ:

<sup>118</sup> Պեղումները կատարել է և տվյալները տրամադրել արշավախմբի ղեկավար Ա. Քալանթարյանը:

<sup>119</sup> Կարասի չափերն են՝ բերանի բացվածքի տր.՝ 45 սմ, ամենալայն մասի պարագիծը՝ 60 սմ, բարձր.՝ 120 սմ:

<sup>120</sup> Հմմտ. Քոչարյան 1991, 26:

<sup>121</sup> Տե՛ս Ղաֆադարյան 1952, 88–100; հմմտ. Քալանթարյան, Ղաֆադարյան 1990, 139–142:

<sup>122</sup> Ըստ 1990-ականների հետազոտությունների տվյալների՝ ցարդ ընդունված տեսակետը կարող է ճշգրտման [հմմտ. Քալանթարյան և այլք 1994, 46–47]:

<sup>123</sup> Սեբեոս 1979, 68 (Ը):

Մայր տաճարը ամերիկյան ծրագրով կոնսերվացնելուց առաջ նախնական շինություններ և շերտագրական որոշ հարցեր բացահայտելու նպատակով 1992–1993 թթ. դաշտային հետազոտական աշխատանքներ կատարվեցին եկեղեցու արևմտյան մասում:

*Պեղումները հյուսիսարևմտյան հատվածում*

Հյուսիսարևմտյան՝ 3,20×5,60 մ հատվածում պեղումներով բացահայտվեցին.

- ա) 1,15 մ խորության վրա<sup>124</sup> մասամբ պահպանված վաղմիջնադարյան՝ VII դ. թվագրվող հատակը, նույնժամանակյա կղմինդրների բազմաթիվ բեկորներով, սպիտակ ավազաքարի ու կարմիր տուֆի խճով հագեցած հորիզոններ,
- բ) 1,70 մ խորության վրա՝ անտիկ շրջանի 0,30 մ թույլ հզորությամբ մանրահատիկ հողաշերտ, նրբախեցի ընկանակների, թասերի, գունազարդ տափաշների խեցատներ,
- գ) 2,0÷2,40 մ խորության մեջ՝ վաղերկաթեդարյան գորշավուն մոխրաշերտ, թխագույն խեցանոթների բեկորներ, իսկ մայր հողի շիկավուն խճաքարի շերտի<sup>125</sup> վրա՝ մեկ քարի բարձրությամբ, 1,16 մ լայնությամբ՝ քարաշար հիմնապատերի աղճատված մնացորդներ. այս միջավայրից ակնհայտորեն զատվեց փայլեցված սև մակերևույթով, կարմիր աստառով վաղբրոնզեդարյան մի քանի խեցաբեկոր:

Պեղավայրի արևելյան հատվածի վերին շերտերում հայտնաբերվեցին ուշ շրջանի (XV–XVIII դդ.)՝ թրծած դեղնավուն աղյուսե պատերով սալածածկ դամբարաններ<sup>126</sup>:

Եկեղեցու արևմտյան հիմքին կցված, հյուսիսային հիմնապատին զուգահեռ՝ դեպի հարավ, 3,20 մ հեռավորության վրա բացվեց «նորահայտ պատ» (ստորին շարքին կից արևելյան՝ 1,60 մ երկարությամբ հավելվածի հետ ընդհանուր երկար.՝ 6,0 մ, հաստ.՝ 1,10 մ, բարձր.՝ 1,50 մ): Վերջինս դրված է VII դ.

<sup>124</sup> Բոլոր չափումները տրված են եկեղեցու վերականգնված արևմտյան պատի վերին սիջից:

<sup>125</sup> Գետնի վերին շիկավուն խճաքարի՝ 0,80÷1,50 մ հաստությամբ հողախառը շերտ է առկա եկեղեցու և քննվող սրբավայրի ամբողջ տարածքի տարբեր խորություններում:

<sup>126</sup> Դամբարաններից առաջինն ամբողջական աղյուսաշար արկղ էր (2,30×0,60–0,70×0,40 մ), որի մեջ ննջեցյալ՝ մեջքի վրա պատկած, դեմքը՝ դեպի արևելք, երկրորդը ճգնված էր վերին հաստ հողաշերտի ծանրությունից, երրորդը քանդված ու աղճատված վիճակում էր: Արևելքից սրանց եզերում էր հյուսիսից հարավ ձգված՝ սպիտակ ավազաքարի, կարմիր ու սև տուֆի բարակ սալերով անխնամ շարված հիմնապատ (2,30×0,90 մ):

հատակի մակարդակից 2,30 մ խորը՝ մայր հողի շիկավուն խճի շերտի վրա, վաղերկաթեդարյան խեցատների միջավայրում: Սրբատաշ սպիտակ ավազաքարով շարված<sup>127</sup>, կրաշաղախով և սպիտակ խճի լիցքով կապակցված այդ պատի ստորին հատվածում կա 0,72 մ բարձրությամբ սրբատաշ մոխրագույն բազալտի երկու շարք (վերին սալի երկար.՝ 1,60 մ, հաստ. 0,76 մ):

Փաստորեն, «նորահայտ պատը», հատելով վաղմիջնադարյան, անտիկ և վաղերկաթեդարյան մշակութային հորիզոնները, ներթափանցել է մայր հողի շիկավուն խճի մեջ: Իսկ կցակառուցի արևելյան կողմում մշակութային նստվածքների անխաթար վիճակը վկայում է, որ պատը չի ձգվել եռանավ եկեղեցու ամբողջ երկայնքով՝ իր վրա կրելով ձախակողմյան շարքի յոթ սյուները:

Եկեղեցու արևմտյան հիմնապատի վերին երեք շարքերի ներքին երեսը լրացուցիչ ամրացված է կրաշաղախի հաստ շերտով, իսկ ստորին՝ համեմատաբար ներս ընկած շարքերը խորանում են մայր հողի շիկավուն խճի շերտի մեջ: Աստիճանաբար դժվար հաղթահարելի խճի շերտի պատճառով (հատկապես հյուսիսային և արևմտյան պատերի հատման անկյունում)՝ 3,60 մ խորության հասնելուց հետո դադարեցվեցին արևմտյան պատի հիմքը բացելու աշխատանքները:

Պարզվեց, որ եկեղեցու հյուսիսարևմտյան անկյունից 3,30 մ դեպի արևելք<sup>128</sup>, 2,5 մ երկարությամբ հատվածում բացակայում է եկեղեցու հյուսիսային պատի հիմքը (աղ. 20,): Այս «կեղծ մուտքի» պեղումներով հայտնաբերվեցին՝ ա) V–VII դդ. կոմիսիոնների բազմաթիվ բեկորներով ավազաքարի ու տուֆի խճառատ շերտ (0,60÷1,20 մ խոր.մեջ)<sup>129</sup>, բ) մ. թ. ա. II–մ. թ. I դդ. գունազարդ տափաշների, սափորի, թասերի խեցատներով մանրահատիկ հողաշերտ (1,20÷1,40 մ խոր. մեջ), գ) մ. թ. ա. X–VIII դդ. մեծանի կավե, խոյազարդ գոհարանի և փայտի մոխրի ու ածխացած կտորների պարունակությամբ խեցանոթների բեկորներով գորշ, վառված շերտ (1,40÷1,70 մ խոր. մեջ),

<sup>127</sup> Քարերի միջին չափերն են՝ 0,41×0,28×0,08–0,42×0,25×0 մ: Կանոնավոր են շարված հատկապես ստորին շարքերը (մոտ 1,10 մ բարձրությամբ), իսկ վերինները տարբեր չափերի տձև քարեր են:

<sup>128</sup> Եկեղեցու հյուսիսարևմտյան անկյունից 1,20 մ դեպի արևելք (1,70 մ խոր. վրա), հյուսիսային պատի երկայնքով բացվեց VII դ. ոչ վաղ կառուցված, սպիտակ ավազաքարի խճով, կարմիր և թխագույն տուֆի տձև կտորներով, կրաշաղախով կապակցված անկանոն շարված պատ (երկար.՝ 2,10 մ, հաստ.՝ 0,44 մ). չի բացառվում սրա անմիջական առնչությունն ուշ շրջանի դամբարաններին:

<sup>129</sup> Պայմանականորեն զրոյական կետ ենք ընդունել հյուսիսային պատի՝ «կեղծ մուտքի» արևմտյան եզրի վերին նիշը:

դ) մայր հողի շիկավուն խճաքարի շերտ (մոտ 1,70մ խոր. մեջ): Այսպիսով, «Կեղծ մուտքի» տակ եկեղեցու հյուսիսային հիմնապատի իսպառ բացակայությունը և մշակութային շերտերի համեմատաբար անխաթար առկայությունը հավաստում են, որ բացվածքը եղել է ի սկզբանե:

«Կեղծ մուտքի» հարցը պարզելու համար պեղումներ կատարվեցին եկեղեցուց դուրս: Այստեղ (2,40մ խորության վրա) պահպանվել են V դ. արտաքին սյունասարահին վերագրվող հիմքեր՝ հիմնականում մեկ քարի բարձրությամբ (արևելյան հիմքը՝ 2,10×1,50 մ, արևմտյանը՝ 2,65×1,70 մ, հյուսիսայինը՝ 1,82×1,50 մ)<sup>130</sup>: Պահպանվել է միայն արևելյան պատի հիմքի 0,50մ բարձրությամբ երկու շարքը, որը դրված է հիշյալ շիկավուն խճի շերտի վրա: Այս հիմնապատի տակ գտնվում են քարաշեն հիմքեր, որոնք ակնհայտորեն առնչվում են եկեղեցու ներսում բացված մ.թ.ա. I հազարամյակի սկզբի շինարարական մնացորդներին: Տվյալ հատվածը պեղելիս ի հայտ եկան եկեղեցու հյուսիսային հիմնապատի արտաքին երեսի՝ կրաշաղախով ամրացված սպիտակ ավազաքարեր:

#### *Պեղումները հարավարևմտյան հատվածում*

Հարավարևմտյան (3,80×3,20 մ) հատվածի վերին շերտում (1,50մ խորությունից սկսած)<sup>131</sup> տեղ-տեղ ի հայտ եկան V–VII դդ. կղմինդրների բեկորներ: Իսկ հարավարևմտյան անկյունում՝ 1,70մ խորության վրա, բացվեց ուշ շրջանի (XV–XVIII դդ.) աղյուսածածկ հատակով դամբարան<sup>132</sup>:

Եկեղեցու հիմքը բացելու համար պեղվեց հարավային պատի երկայնքով վերջին երկու որմնասյան հիմքերի միջև 6,35×0,75մ հետախուզահոր (աղ. 20,<sub>2</sub>):

<sup>130</sup> Արտաքին սյունասարահի շինարարական մնացորդների 30սմ հաստությամբ վերին շերտը պարունակում էր VII դ. կղմինդրների բեկորներ, IX դ. խուփ (ուղղահայաց բռնակը թեթևակի փոսվածքով), մրապատ, գորշ կճուճների, աղյուսների կտորտանք: Սա պարզապես լիցք էր. նախորդ տարիներին եկեղեցու հիմքերը բացել են, հետո սրանցով ծածկել:

<sup>131</sup> Իբրև գրոյական կետ ընդունել ենք եկեղեցու արևմտյան վերականգնված պատի վերին նիշը:

<sup>132</sup> Հարավարևմտյան անկյունում բացվեցին կրնակի օգտագործված, թրծած աղյուսների մեծ քանակությամբ կտորտանք և սրանցով (տեղ-տեղ երկու շերտով) շարված հատակ (սակավաթիվ ամբողջական աղյուսների չափերն են՝ 21×21×3,5 սմ): Հատակը հյուսիսից և արևելքից շրջափակված էր քարե պատերի մնացորդներով, իսկ հարավից և արևմուտքից՝ եկեղեցու հարավային և արևմտյան պատերի հիմքերով: Աղյուսե հատակի վրա առկա էին մարդու կմախքի մնացորդներ, երկաթե ճարմանդի օղակներ, մեխեր: Ճիշտ նման քարե պատերով եզերված, բայց կավածեփ հատակով դամբարան բացվել էր եկեղեցու հարավային պատին կից՝ դրսից:

1. Մոտ 1,12մ խորությունից սկսած բացվեց<sup>133</sup> սպիտակ խճի, ավազի, մոխրի շերտ՝ հազեցած ժամանակագրորեն խառը նյութերով՝ IV–VIդդ. թերի կոտրված տաքատեսակ կղմինդրներ, Vդ. խճանկարի մնացորդներով կրաշաղախի բազմաթիվ խոշոր բեկորներ, անտիկ և վաղերկաթեդարյան խեցատներ:
2. Երկրորդ որմնասայան հիմքի շարվածքի մեջ բացվեցին կրկնակի օգտագործված սրբատաշ քարեր և կամարի մնացորդ: Իսկ առաջին որմնասայան հիմքը կրկնակի օգտագործված ուշ անտիկ սյունախարիսխ է, որի տակ առկա է միայն մեկ քար (աղ. 20,<sub>2</sub>):
3. Սրբատաշ քարերով շարված, 1,60մ խորությամբ հարավային հիմնապատի հինգերորդ շարքը եզերված է կրաշաղախի դուրս պրծած քիվանման զանգվածով, իսկ հիմքի երկայնքով մոտ 2,60մ խորության վրա դարձյալ առկա է նման զանգված:
4. Արդեն 3,25մ խորության վրա հետախուզահորում ի հայտ եկավ կապտավուն ավազ, իսկ սրա տակ՝ 4,0մ վրա, բացվեց կավե հարթակ հիշեցնող զանգված՝ հար և նման եկեղեցու արևելյան հատվածում բացահայտվածներին<sup>134</sup>: *Այսինքն՝ եկեղեցու հիմքերը դրված են գեյրնի ստորին շերտի՝ կավե միասեռ զանգվածի վրա* (աղ. 20,<sub>2</sub>):

Եկեղեցու հարավային հիմնապատից դեպի հյուսիս՝ 0,85մ հեռավորության վրա, գրեթե անխաթար պահպանված էր մոտ 1,0÷1,50մ հզորությամբ վաղերկաթեդարյան շերտ: Միջին ու փոքր չափերի գլաքարերով շարված մոխրախառն հատակի տակ համատարած մոխիր էր և խեցեղեն (կարասի շրթնամաս, փայլեցված, թեք մատնեքազարդ կճուճների, ուռուցիկ կամ փորագիր ալիքաձև ու սերմնազարդ զարդագոտիներով տաքատեսակ անոթների, բարձր կողերով շարժական օջախ-կրակարանների բեկորներ): Առկա էին նաև թերի կոտրված, կավե, սերմնազարդ պատկերով կուռք-արձանիկներ, չեչոտ որձաքարե մակույկաձև աղորիք, գոգավոր խոշոր թասի բեկոր, սանդի թակ և այլն:

Մ.թ.ա. I հազամյակի սկզբի հորիզոնը պեղելիս եկեղեցու հարավային պատին զուգահեռ՝ դեպի հյուսիս, 3,20մ հեռավորության վրա բացվեց (3,65մ երկար., 0,95մ հաստ.) հիմնապատ՝ 2,0մ երկարությամբ կից հավել-

<sup>133</sup> Պայմանականորեն գրոյական կետ ենք ընդունել որմնասայան հիմքի վերին նիշը:

<sup>134</sup> Սբ. Գրիգոր եկեղեցու արևելյան հատվածի պեղումների մասին տե՛ս Հակոբյան 2005, 208–209: Ընդ որում՝ գետնի վերին՝ շիկավուն խճաքարի շերտին նախորդող կապտավուն ավազի շերտը եկեղեցու արևելյան հատվածում ավելի հաստ է, քան արևմտյանում:

վածով: Սրանք, փաստորեն, եկեղեցու հյուսիսային պատից հարավ՝ 3,20 մ հեռավորության վրա բացված «նորահայտ պատի» և սրա հավելվածի համաչափ կրկնությունն են:

Պեղվեց նաև հարավային խորանի դիմացի հողաթումբը: Վաղմիջնադարյան, անտիկ, վաղերկաթեդարյան խեցատներից, կրաշաղախի կտորներից ու քարերից բաղկացած զանգվածեղ լիցք-հողաթմբի տակ՝ արևելյան մասում, բացվեց եկեղեցու VII դ. գմբեթակիր հարավարևմտյան մույթի աղճատված հիմքը՝ շարված կրկնակի օգտագործված սպիտակ, խոշոր ավազաքարերով, սյունախարիսխների բեկորներով, ամրացված առատ կրաշաղախով: Իսկ արևմտյան մասում ի հայտ եկավ XV–XVIII դդ. ավերված գերեզման՝ կմախքի մնացորդներով: Ընդ որում՝ գմբեթակիր մույթի հիմքը մասամբ ծածկում է V դ. խճանկար հատակի ծայրարևելյան հատվածը<sup>135</sup>:

*Հնագիտական տեղեկատվության տվյալների ամփոփում*

Այսպիսով, կաթողիկե եկեղեցու արևմտյան մասում ուրվագծվում է մշակութային համալիրների ժամանակագրական հետևյալ հերթագայությունը.

- վաղբրոնզեդարյան (մ.թ.ա. III հազամյակ)՝ սև փայլեցված մակերևույթով կարմիր աստառով մի քանի խեցաբեկորի առկայություն վաղերկաթեդարյան միջավայրում. սա պատահական չէ, քանի որ մ.թ.ա. III հազարամյակի գտածոների տարածվածության սահմաններում ընդգրկվում է բլրի նաև քննվող տարածքը (այն է՝ կենտրոնական թաղամասը),
- վաղերկաթեդարյան (մ.թ.ա. X–VIII դդ.)՝ 0,30÷1,5 մ հզորությամբ մշակութային նստվածքներ (1,5÷2,0 մ խոր. սկսած<sup>136</sup>)՝ հրկիզված գորշավուն մոխրաշերտ, աղճատված քարաշեն հիմնապատեր, սրբարան (խոյազլուխ պատկերազարդ կավե զոհարանի, սերմնազարդ կոռքարձանիկների, ծիսական խեցանոթների բեկորներ, աշխատանքային քարե գործիքներ). սրանք անմիջականորեն առնչվում են ամբողջ բլրով մեկ վավերացված՝ մ.թ.ա. VIII դ. առաջին քառորդին կործանված և հրկիզված վաղերկաթեդարյան ամբոց-սրբավայրի մոխրառատ շերտին (աղ. 22),
- անտիկ ժամանակաշրջանի (մ.թ.ա. II–մ.թ. I դդ.)՝ մոտ 0,20÷0,30 մ թույլ հզորությամբ մշակութային շերտ՝ գունազարդ և հասարակ խեցեղեն սպասք (տափաշների, երեքնուկաձև ծորակով անոթների, օյ-

<sup>135</sup> Տե՛ս Պատրիկ 1964, 316, նկ. 2:

<sup>136</sup> Չափումները տրված են եկեղեցու VII դ. սալահատակից:

- նոխոյայի, թասերի, ըմպանակների, պնակի սակավաթիվ բեկորներ) (աղ. 23,<sub>1-7</sub>),
- վաղմիջնադարյան (IV–VII դդ.) մշակութային համալիր՝
    - ա) IV դ.՝ հիմնականում սպիտակ ավազաքարե սրբատաշ քարերով շարված հիմնապատեր, հատակ<sup>137</sup>, բարձր կողերով, լայնակի եզրային ելուստ-թմբիկով ուղղանկյուն, տափակ կղմինդրների բեկորներ<sup>138</sup> (աղ. 21,<sub>2</sub>). սրանք վերագրվում են եկեղեցու IV դ. եռանավ շինությանը,
    - բ) V դ. խճանկարի մնացորդներ՝ խորանարդաձև, սպիտակ, երկնագույն, վարդագույն, կարմիր, շագանակագույն՝ 12×12×4–10 մմ բնական քարեր, սրանցով ազուցված կրաշաղախի զանգվածեղ կտորներ (աղ. 21,<sub>5</sub>), կղմինդրներ՝ մի կողմից նեղացող բարձր կողերով տափակ խոշոր սալեր և լայն փռվածքով կիսափողրակավոր կալիպտերներ<sup>139</sup> (աղ. 21,<sub>3</sub>), արտաքին սյունասարահին վերագրվող շինարարական մնացորդներ. թվարկածները վերաբերում են 470-ականներին իրականացված լայնածավալ շինարարությանը (խճանկարով ձևավորված նոր հատակ, նորոգված տանիք, արտաքին սյունասարահ),
    - գ) VII դ. հատվածաբար պահպանված սալահատակ, շինարարական թափոնների՝ սպիտակ ավազաքարի և կարմիր տուֆի խճառատ շերտ, կղմինդրների՝ մի կողմից նեղացող բարձր կողերով տափակ սալեր և «հովար»-թմբիկով կիսափողրակավոր կալիպտերներ<sup>140</sup> (աղ. 21,<sub>4</sub>), հարավարևմտյան գմբեթակիր մույթի հիմք. սրանք վերաբերում են 610-ականներին կաթողիկեի՝ որպես խաչաձև հատակագծով գմբեթավոր սրահի վերակառուցված շինությանը,
  - *ուշ շրջանի* (XV–XVIII դդ.)՝ թրծած դեղնավուն աղյուսե պատերով սալածածկ թաղման արկղեր և եկեղեցու քարե պատերով եզերված, աղյուսե հատակով դամբարաններ՝ ներթափանցված վաղմիջնադարյան հորիզոնների մեջ<sup>141</sup>:

<sup>137</sup> «Տաճարի սկզբնական շինության հատակի» մասին տես Ղաֆադարյան 1952, 97:

<sup>138</sup> Նկարագրված կղմինդրները աղերավում են «Արշակունյաց գահադահլիճի» IV դ. ծածկասալերին [հմմտ. Քոչարյան 2016, 28–29]:

<sup>139</sup> Հմմտ. Քոչարյան 2016, 32, նկ. 2, 2:

<sup>140</sup> Հմմտ. Քոչարյան 2016, 33–34:

<sup>141</sup> Դվինի լքված բնակավայրը XV–XVIII դդ. վերածվել է դամբարանադաշտի. դեռևս 1937 թ. կաթողիկե բացելիս պեղվել են այդօրինակ բազմաթիվ դամբարաններ [հմմտ. Ղաֆադարյան 1952, 40–43, 65]:

«Նորահայտ պատերի» արևելյան մասում և եկեղեցու հյուսիսային հիմնապատի «կեղծ մուտքի» բացվածքում մշակութային շերտերի հերթագայության համեմատաբար անխաթար վիճակը հավաստում է, որ եկեղեցու պատերը դրվել են ժապավենաձև հիմքերի վրա (հմնտ. նաև՝ հարավային հիմնապատից 0,85մ հեռու գտնվող 1,0÷1,50մ հզորությամբ վաղերկաթեղարյան շերտի գրեթե անխաթար առկայության փաստը):

Այնուհանդերձ, հնագիտական յուրաքանչյուր շերտ ակնհայտորեն հատել և կրճատել է նախորդ շրջանի մշակութային նստվածքները, հաճախ նաև խաթարել ու խառնել տարածամասնակյա հորիզոնների նյութերը: Այսպես օր.՝ VII դարում եկեղեցու հիմնական վերակառուցման ընթացքում V դ. խիստ վնասված խճանկարը մասամբ քանդվել է, ու կրաշաղախի զանգվածեղ կտորները հին կղմինդրածածկի մնացորդների հետ մեկտեղ լցվել են եկեղեցու հարավային հիմքի խրամատի մեջ: Սրանից զատ այստեղ առկա են նաև անտիկ և վաղերկաթեղարյան աղճատված հորիզոնների խեցաուներ:

Կատարված դաշտային հնագիտական ուսումնասիրությունների տվյալները ուրվագծում են կենտրոնական թաղամասի նաև նախաքրիստոնեական շրջանի պաշտամունքային կառույցների երբեմնի ներկայության պատկերը, որը կփորձենք ներկայացնել ստորև՝ հաջորդ գլխում: Այսուամենայնիվ, լրացուցիչ փաստացի վկայությունների համար անհրաժեշտ են իրականացնել վաղմիջնադարյան կառույցների շինարարական հորիզոնների մանրագին հետազոտական աշխատանքներ և ընդլայնել անտիկ շերտի պեղումները հնավուրց սրբավայրում:

**ԴՎԻՆ ԱՄՐՈՑ-ՍՐԲԱՎԱՅՐԸ՝  
ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳՐԱՎՈՐ  
ՍԿՉԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐԻ**

Ցարդ պեղված տարածքի շերտագրական խաթարված և աղճատված իրավիճակների ընձեռած հատվածական նյութի ուսումնասիրությունը դեռևս հնագիտական բավարար հիմք չէ մինչխոսրովյան իրողության շոշափելի պատկեր վերականգնելու համար: Հետևաբար սույն գլխում առկա են և՛ տեսական եզրահանգումներ, և՛ վարկածային բնույթի հարցադրումներ: Թեպետ սրանք կարոտ են հետագա պեղումներով հայտնաբերվելիք նյութական ապացույցների, այսուհանդերձ նպաստում են պատմական ճշմարտության բացահայտմանը:

Բազմաշերտ հուշարձանում սրբավայրի գոյության տևականությունը (թերևս մ. թ. ա. III հազարամյակից և հատկապես մ. թ. ա. I հազարամյակից սկսած, որոշակի ընդհատումներով հանդերձ, ներառյալ մ. թ. V դարում կաթողիկոսանիստ լինելու իրողությունը) վկայող սկզբնաղբյուրները հնարավորություն են ընձեռում հետամուտ լինելու աշխարհիկ և հոգևոր իշխանություններ խորհրդանշող՝ Դվին ամրոց-սրբավայր գույգի հարատևությանը:

Հնավայրի ցարդ բացահայտված նյութերը լոում են մ. թ. ա. II հազարամյակի, ինչպես նաև Վանի թագավորության հյուսիսային նվաճումների ժամանակ Դվին ամրոց-սրբավայրի ավերումից (մ. թ. ա. VIII դ.) մինչև Արտաշատի հիմնադրումն (մ. թ. ա. II դ. 80-ական թթ.) ընկած ժամանակահատվածի մասին: Շարունակվող պեղումների նորագույն արդյունքներով միայն հնարավոր կլինի հստակորեն ընդունել կամ բացառել այս ժամանակաշրջանների առկայության փաստը:

Վաղբրոնզեդարյան հուշարձաններում ծիսական արարողությունների համընդհանուր սրբատեղի առկայության իրողությունից ելնելով՝ հնարավոր է Դվինի մ. թ. ա. III հազարամյակի բնակատեղիում, ժամանակին բնորոշ ընտանեկան սրբարաններից<sup>142</sup> գատ, ենթադրել տոհմական համընդհանուր

<sup>142</sup> Առկա են ծիսապաշտամունքային բնույթի օջախների կավե հենակներ՝ թոչնազարդ

սրբատեղի գոյություն (հմմտ. Մոխրաբլուր, Հատիճ, Ջրահովիտ, Շենգավիթ և այլն<sup>143</sup>):

Դվին բլրի գագաթին՝ մ.թ.ա. I հազարամյակի սկզբի վաղերկաթեդարյան ամրոցում և հատկապես բլրի ստորոտին մեկ տասնյակ մեհենական համալիրները<sup>144</sup> (պատկերագարդ կավե զոհարաններ, սերմնագարդ կոռքարձանիկներ, ծիսական խեցանոթներ, շարժական օջախ-կրակարաններ, նախնիների պաշտամունքին առնչվող մահարձաններ) և ծիսապաշտամունքային արարողություններ կանոնակարգող քրմական դասի ներկայության նյութական վկայությունները<sup>145</sup> հաստատում են այստեղ սրբավայրի գոյատևությունը:

Մ.թ. IV դ. 30-ականներից սկսած հնավանդ սրբավայրում եկեղեցիների կառուցմամբ Նոր դավանանքի հոգևոր կենտրոնի սկիզբը դրվեց, ուր և 470-ական թթ. հաստատվեց կաթողիկոսական աթոռը<sup>146</sup>: Պատմաքաղաքական իրադրությամբ թելադրված՝ Սասանյանների տիրապետության դեմ ազգային-ազատագրական համաժողովրդական պայքարում ստեղծված միաբանությունը պահպանելու, հարաբերական անկախությունը ամրապնդելու ձգտմամբ, Գյուտ Արահեզացի կաթողիկոսի (461–478) օրոք հայրապետական աթոռը Վաղարշապատից տեղափոխվեց Դվին:

### *Ամրոց-սրբավայրը Արտաշիսյան ժամանակաշրջանում*

Դեռևս անցյալ դարի 30-ական թվականներին այստեղ՝ կաթողիկե և միանավ բազիլիկ եկեղեցիները, VII դ. կաթողիկոսական պալատը և սրանց միջև ընկած տարածքը պեղելիս միջնադարյան նյութերի հետ մեկտեղ հայտնաբերվել են անտիկ ժամանակաշրջանին հատկանշական խեցեղեն<sup>147</sup> և կարասային թաղումներ<sup>148</sup> (սկ.2): Ավելի ուշ՝ 1970-ականներին, երբ հատուկ հետազոտության առարկա դարձան տվյալ ժամանակաշրջանի նյութերը, հիշյալ տարածքում՝ մ.թ. IV–V դդ. և մ.թ.ա. X–VIII դդ. շերտերի միջև հայտ-

պատկերով, փորագիր բազմազար պարույրներով, համակենտրոն շրջաններով հարդարված խեցեղեն և այլն [հմմտ. Кушнарева 1977, 7–8]:

<sup>143</sup> Հմմտ. Кушнарева 1977, 41–42; Խանգաղյան 1991, 11–12; Սիմոնյան 2013, 20–34:

<sup>144</sup> Кушнарева 1977, 10–28; Ժամկոչյան, Հակոբյան 2018, 158–162:

<sup>145</sup> Քոչարյան 1998ա, 158–161; Քոչարյան 2005ա, 95–96:

<sup>146</sup> Կաթողիկոսական աթոռի հաստատվելը Դվինում հարցի շուրջ տե՛ս Ղաֆադարյան 1952, 115–118:

<sup>147</sup> Հմմտ. Հայաստանի պատմության թանգարանի՝ Դվինի պահոցի 1937, 1938 թթ. հավաքածուները (1543/ 122, 231, 240, 280, 281, 292, 418, 474–480, 512, 525. 1617/ 99, 134, 147, 190 և այլն):

<sup>148</sup> Տե՛ս Тер-Аветисян 2010, 210; Ղաֆադարյան 1952, 59:

նաբերվեց մ. թ. ա. II–մ. թ. I դդ. թվագրվող ընտիր գունազարդ խեցեղենով<sup>149</sup> հագեցած 0,30÷0,60 մ միջին հզորությամբ մշակութային շերտ<sup>150</sup>:

Շերտագրական դիտարկումները բացահայտեցին վաղմիջնադարյան (IV–V դդ.) նոր ձևավորվող հոգևոր կենտրոնի ծավալուն կառուցապատման ժամանակ անտիկ շերտի հատվելն ու աղճատվելը: Ժամանակագրական տարբեր հորիզոններում հայտնաբերվեցին անտիկ շրջանի նյութեր, իսկ վաղմիջնադարյան շինություններում՝ կրկնակի օգտագործված սրբատաշ քարեր և ճարտարապետական տարրեր:

Մայր տաճարի վաղմիջնադարյան հնագիտական համալիրը (ինչպես վերը տեսանք) ժամանակագրորեն հիմնականում համապատասխանում է սույն կառույցի ցարդ բացահայտված շինարարական շրջափուլերին: Այսուհանդերձ, սպիտակ ավազաքարի հետ մեկտեղ շիկավուն ու թխագույն տուֆե *սրբատաշ քարերով են շարված* Սուրբ Գրիգոր կաթողիկե եկեղեցու նախնական (IV դ. շերտի) եռանավ շինության՝

- կրաշաղախով ամրացված հիմնապատերը ամբողջովին,
- ավազ խորանը հիմնովին (որոշ սալերի վրա պահպանվել են բազմերանգ որմնանկարի միմյանց հետ չկապակցվող հետքեր<sup>151</sup>),
- հարավային պատի արևմտյան նախավերջին որմնասյան հիմքը,
- հարավային ու հյուսիսային թևերին զուգահեռ «նորահայտ պատերը» (ստորին շարքում առկա են նաև *բազալտե սրբատաշ սալեր*):

IV դ. կաթողիկեի եռանավ շինությունը կառուցելիս նման քանակությամբ սրբատաշ քարերի՝ զանգվածաբար կրկնակի օգտագործման իրողությունը վկայում է տվյալ թաղամասում մինչ այդ քանդված կառույցների առկայության մասին: Ընդ որում, հիշյալ քարերին ժամանակագրորեն առնչվում են նույն տեղում և հարակից տարածքում հայտնաբերված անտիկ շրջանին բնորոշ ճարտարապետական տարրեր.

- սպիտակ ավազաքարե տորաձև սյունախարիսխներ,
- տուֆե «ատտիկական» սյունախարիսխներ, ձևավոր կողապատկերով, խորաքանդակ բուսազարդ գոտիով սյունախարիսխներ, սյան մատնեքավոր գլանի վերնամաս, ցլազլուխ խոյակ,
- բազալտե տանիքի ծածկասալ (աղ. 24,<sub>2-8</sub>):

<sup>149</sup> Անտիկ ժամանակաշրջանի գունազարդ խեցեղենի հավաքածուն պարունակում է համակենտրոն շրջանագծերի, ծաղկաշղթաների, ներգծված կիսաշրջանների, ցանցկեն, զիզգագաձև զարդագոտիներով պարուրված տափաշշերտի, կիսագնդաձև գավաթների, ըմպանակների, խաչազարդ ու բուսազարդ թասերի, պնակների բեկորներ:

<sup>150</sup> Տե՛ս Քոչարյան 1991, 22–25; Кочарян и др. 2008, 129–131:

<sup>151</sup> Տե՛ս Ղաֆադարյան 1952, 91–92; հմմտ. Հակոբյան 2005, 209:

Վերը թվարկածից գատ Դվինի վաղմիջնադարյան գրեթե բոլոր մոնումենտալ շենքերի (IV դ. «Արշակունյաց գահադահլիճ», V դ. կաթողիկոսական պալատ և այլն) հիմնապատերի մեջ առկա են մշակութային նախորդ շրջանի շինություններին պատկանող սրբատաշ քարեր, կամարի, քիվի տարրեր, որոնց մի մասը կրում է հին սվադի, ներկի, որմնանկարի հետքեր: Իսկ VII դ. կաթողիկոսական տուֆաշեն պալատում կրկնակի օգտագործված են *բագալտե սյունախարիսի*<sup>152</sup> և գրանիտից կերտված տորաձև սյունախարիսի (աղ. 24,8):

Հավելենք, որ սպիտակ ավազաքարից վարպետորեն կերտված անտիկ ժամանակաշրջանի տորաձև սյունախարիսիսները կրկնակի օգտագործված են մերձակա Վերին Արտաշատի XIX դ. եկեղեցու եռանավ սրահում (աղ. 25)<sup>153</sup>:

Բազմազան կողապատկերներ ունեցող տուֆե, սպիտակ ավազաքարե, բագալտե և գրանիտե տարրեր տրամաչափի շուրջ երկու տասնյակ սյունախարիսիսների քանակական ու ռճական հատկանիշների նույնիսկ պարզագույն համեմատությունը վկայում է այստեղ մասնագիտական որոշակի մակարդակ պահանջող, սրբատաշ քարերով որմնադրության գոյությունը: Դվինում՝ բացի տեղական սպիտակ ավազաքարից, օգտագործվել են նաև մերձերևանյան սևաթույր ու շիկավուն տուֆ և Գառնիից ձգվող անդեզիտաբազալտային շերտի մոխրագույն բագալտ:

Ստացված տվյալների համադրությամբ բացահայտվում է հետևյալ իրավիճակը:

1. Դվինի անտիկ շերտում կավաշեն կացարանների կողքին (հմնտ. միջնաբերդի բլրի գագաթային հարթակի բնակելի շինությունները) ակնհայտ է համաժամանակյա քարաշեն կերտվածքների առկայությունը: Դրանք, հավանաբար, եղել են պաշտամունքային կառույցներ: Առավել մանրակրկիտ ռճաբանական վերլուծությամբ թերևս հնարավոր լինի որոշել հիշյալ ճարտարապետական մանրամասների շինարարական ժամանակագրությունը: Այսուհանդերձ, կենտրոնական թաղամասի քարակերտ սյունախարիսիսներն ու բարձրորակ, գունազարդ խեցեղենը ռճական առումով համահունչ են բլրի գագա-

<sup>152</sup> Տե՛ս Тер-Аветисян 2010, 256 (հիշյալ սյան բագալտե խարիսիսը, որն ըստ հեղինակի՝ VII դ. տուֆաշեն պալատում «ընդհանուր համակարգի մեջ չի մտնում», չի պահպանվել):

<sup>153</sup> Միջնադարյան Դվինի վերջնական անկումից հետո կենտրոնական թաղամասը դառնում է շինարարական նյութի հայթայթման վայր, որի հետևանքով քարակերտ հուշարձանները «խիստ կողոպտվում են ու աղճատվում» և ճարտարապետական մանրամասները հայտնվում են մերձակա գյուղերի տարածքում [Тер-Аветисян 2010, 254]:

- թային հարթակի՝ մ.թ.ա. II–մ.թ. I դդ. քաղաքացիական շինություններում՝ իրենց նախնական տեղում առկա սպիտակ ավազաքարե ու շիկավուն տուֆե սյունախարիսխներին և խեցեղենին:
2. Սրբավայրում հայտնաբերված մ.թ.ա. II–մ.թ. I դդ. բնորոշ խեցեղենը պարունակում է գունազարդ հարդարումով բարձրորակ խեցանոթների (թասերի, ընպանակների, պնակների, սկուտեղների) բեկորներ: Վերջիններիս որակական մակարդակը հուշում է նման ընտիր սպասքի գործածության հնարավորությունը ծիսապաշտամունքային արարողություններում:
  3. Արտաշիսյան դարաշրջանի պաշտամունքային կառույցների գոյությունը Դվին սրբավայրում ցարդ կատարված պեղումներով հաստատված չէ: Հնարավոր է՝ դրանք ավերվել են մ.թ. 59թ. հռոմեացիների հանկարծահաս հարձակումով, որից հետո ամայացած սրբավայրը ժամանակավորապես վերածվել է դամբարանադաշտի: Այդ են վկայում այստեղ բացված թաղումների շերտագրական տվյալների վերլուծությունն ու գույքակազմի թվագրության վերին սահմանագիծը<sup>154</sup>:
  4. Ցարդ բացված 17 թաղումները (որոնցից մեկը գույգ թաղում է, իսկ վեց մանկականից մեկը՝ խմբակային) կատարված են կենցաղում արդեն օգտագործված կարասների մեջ, որոնց կոտրված, թերի մասերը ծածկված են այլ կենցաղային խեցանոթների բեկորներով: Թաղման գույքը սուղ է և աղքատիկ՝ 1–2 հասարակ խեցանոթ, բնական քարերից, բրոնզից (եզակի դեպքում՝ ցածրորակ արծաթից), ապակու շաղախից պատրաստված պարզագույն զարդեր, հմայիլ-կնիքներ: Վեց կարասում իսպառ բացակայում է թաղման գույքը: Անհամաչափորեն տեղաբաշխված այս շարքային կարասային թաղումների գույքակազմի թվագրության վերին սահմանագիծը ոչ ուշ է՝ քան մ.թ. I դարի վերջը<sup>155</sup>:

*Ամրոց-սրբավայրը վաղ Արշակունյաց ժամանակաշրջանում*

Ներկայացված պարագաներում առանձնանում է համաժամանակյա, փոխկապակցված հնագիտական նյութերի մի խումբ:

1. *Բազալտե ծածկասալ*՝ նույնանման Գառնիի հեթանոսական տաճարի տանիքի ծածկասալերին: 1965թ. Սուրբ Գրիգոր կաթողիկե եկեղեցուց մոտ 15 մ արևմուտք՝ խախտված հնագիտական համատեքստում հայտնաբերվել է ծածկասալի մի հատված, իսկ 1989թ.՝ նույնի

<sup>154</sup> Հմնտ. Кочарян и др. 2008, 150–151:

<sup>155</sup> Դվինի դամբարանադաշտի մասին տե՛ս Քոչարյան 1991, 25–31:

երկրորդ հատվածը (երկայնակի բարձր կողերով, լայնակի եզրը թեթևակի բարձրացող թեք ելունով, սրան համահավասար՝ կողերը արտաքուստ որոշակի հաստացումով, ուղղանկյուն տափակ սալ, թերի, կտրված)<sup>156</sup> (աղ. 24,4):

2. *Բազալլրե սրբարաշ երեք որմնասալ՝* շարված Սուրբ Գրիգոր կաթողիկե եկեղեցու նախնական (IV դ.) եռանավ շինության հիմքերում<sup>157</sup>:
3. *Բազալլրե սյունախարհսի՝* կրկնակի օգտագործված VII դ. կաթողիկոսական տուֆաշեն պալատում<sup>158</sup>:
4. *Բազալլրե զոհասեղան՝* ձևված Միթրա աստվածությանը, պատկանում է Հռոմեական կայսերական ժամանակաշրջանին<sup>159</sup> (աղ. 24,յ): Արևմտյան միթրայիզմին բնորոշ պատկերագրությամբ կերտված՝ Միթրայի՝ ցլի հետ մենամարտի տեսարանի բարձրաքանդակ-խորհրդապատկերներով կոթող (երկու հանդիպակաց կողերին՝ արևի սկավառակ և թռչուն, մյուս երկուսին՝ ցլի գլուխ և կարիճ՝ շոշափունկներով բռնած [ցլի] ամորձիքը): Գաղափարագրական հակիրճությամբ ներկայացված խորհրդապատկերների այս քառյակը միասին վերցրած խոսում է Միթրա<արև-ագռավ-ցուլ-կարիճ իմաստաբանական շղթայի ամբողջության մասին<sup>160</sup>: Այստեղ իմաստային հիմնական շեշտը կրում է «ցլի ամորձիքը սեղմող կարիճ» գաղափարագիրը: Վերջինս մերձենում է Սիդոնի (մ.թ. II դ. երկրորդ կես) և հատկապես Հռոմի (ոչ ուշ քան մ.թ. 172թ.) բարձրաքանդակների ցլասպան հերոսի ուղեկից կարիճի պատկերին<sup>161</sup>: Ըստ միթրայական գաղափարախոսությունը և պատկերագրությունը ուսումնասիրող Լ. Քենբերլի՝ ցլի և կարիճի վերոհիշյալ կապը կարող է լինել ցլի կենսունակությունը մեկ այլ ձևի վերափոխման խորհրդանշան<sup>162</sup>:

<sup>156</sup> Դվինի ծածկասալի չափերն են՝ 52×23,5°×3,5սմ, կողի բարձր.՝ 4սմ, լայն.՝ 2–3սմ, ելունի լայն՝ 9,5սմ, բարձր. սալի մակերեսից՝ 2սմ, ըստ Գառնիի տաճարի ծածկասալերի չափերի՝ 52×72×3–4սմ, կարելի է վերականգնել քննվող սալի երկարությունը մոտ 70–72սմ (հմնտ. Սահինյան 1983, 173–174, նկ. 99.ա):

<sup>157</sup> Կաթողիկեի հյուսիսային թևին զուգահեռ վերոհիշյալ «նորահայտ պատի» շարվածքում կրկնակի օգտագործված են մոխրագույն բազալտե, երկշար սրբատաշ որմնասալեր՝ 0,72մ ընդհանուր բարձրությամբ (վերին սալի երկար.՝ 1,60 մ, հաստ.՝ 0,76 մ) :

<sup>158</sup> Տե՛ս Тер-Аветисян 2010, 256 (հիշյալ բազալտե սյունախարհսիսը չի պահպանվել):

<sup>159</sup> Միթրա աստծուն ձևված զոհասեղանի չափերն են՝ բարձր. 55սմ, միջին մասում նեղացող, հիմքում և վերին մասում լայնացող ուրվապատկերով՝ 17,5×17,5–25×15–25×11սմ:

<sup>160</sup> Յլասպան հերոսի՝ դիցաբանական ավանդության և հավատարիմ ուղեկիցների մասին տե՛ս Քոչարյան 1991, 64–67:

<sup>161</sup> Հմնտ. Campbell 1968, pl. V, 75, pl. XV, 650:

<sup>162</sup> Campbell 1968, 18, 25–28:

5. Միջանկյալ շինարարական շերտ՝ մասնակիորեն պեղված ուղղանկյուն կառույցի հիմքերով, բլրի գագաթի մ.թ. IV դ. «Արշակունյաց գահադահլիճի» և Արտաշիսյան ժամանակաշրջանի՝ մ.թ. I դ. կեսերին հրկիզված շինության մակարդակների միջև (a-a-1 քառ., 1, 36 մ լայնությամբ քարե հիմքով շինությունը պետք է որ ունեցած լինի բարձր պատ և հատակագծում զգալի չափեր)<sup>163</sup> (նկ. 2, աղ. 2):
6. Բլրի գագաթը պատրնեշող քառանկյուն և կիսարյուր աշտարակներով պարսպագոտու հիմքերի աղճարված հարվածներ<sup>164</sup>: Ինչպես վերը նշվեց, երկու աշտարակներն էլ ամրաշինական հանգույցներ լինելուց բացի ակնհայտորեն հանդիսացել են Մեծամոր և Երասխ գետերի հովիտներով անցնող ռազմավարական ճանապարհները հսկող ամրոցի դիտակետ-աշտարակներ (նկ. 1, 2, աղ. 1, 9):

Թվարկած նյութերի համեմատական վերլուծությունը պատմաքաղաքական իրադրության համատեքստում հնարավորություն է ընձեռում ուրվագծելու որոշակի մի ժամանակահատված: Այս առումով մեծ տեղեկատվություն է պարունակում Հռոմեական կայսերական շրջանի բազալտե գոհասեղանը: Հռոմեական բանակի լայնածավալ զավթողական գործունեությանը զուգընթաց, հաղորդակցության ուղիների հանգուցակետերում բենեֆիցիարիուսների հիմնած ոստիկանական պահակակետերը II–III դդ. խիտ ցանց կազմեցին կայսրության նահանգներում: Որպես ուղեցույց-ուղեկալներ սրանք հսկում էին երթևեկությունը, ապահովում զորակայանների միջև հաղորդակցության անվտանգությունը և պահպանում տարածաշրջանի խաղաղությունը: Ամրոցի պարսպից դուրս՝ անմիջապես ճանապարհի վրա տեղադրված պահակակետը տեղի սրբավայրի հետ կազմում էր մի ամրոցություն: Այստեղ կառուցվում էր նոր տաճար կամ ուղղակի դրվում էին Դվինում գտնվածին համանման, տարբեր աստվածությունների ձոնված շարժական գոհասեղաններ (հմմտ. նմանօրինակ պահակակետեր՝ Դանուբյան, Մերձհռենոսյան շրջաններում, ինչպես նաև Դրինում՝ Խարաքս ամրոցի II–III դդ. statio-ն)<sup>165</sup>:

<sup>163</sup> Հնարավոր չեղավ բացահայտել կառույցի հնագիտական միջավայրը՝ գահադահլիճի առկայության պատճառով: Քննվող շերտը գրեթե բացակայում է գահադահլիճից դուրս, որը կարող է պայմանավորված լինել հետագա ավերումով: Պեղված հատվածն անբավարար է շինության բնույթի մասին հիմնավոր դատողություններ անելու համար: Այսուհանդերձ, մ.թ. I դ. կեսերին՝ Արտաշիսյան ժամանակաշրջանի շինությունն ավերվելուց հետո, մինչև մ.թ. IV դ. «Արշակունյաց գահադահլիճի» կառուցելը, այստեղ ակնհայտ է որոշակի կառույցի գոյության փաստ:

<sup>164</sup> Պարսպագոտու մասին տե՛ս «Միջնաբերդի անտիկ շերտի նկարագիրը»:

<sup>165</sup> Տե՛ս Блаватский 1951, 251–257, 291; Соломоник 1960, 133–139:

Դվինի գոհասեղանի հիշյալ աղերսները ժամանակագրորեն համընկնում են բենեֆիցիարիոսների համանման գոհասեղանների տարածման ժամանակի՝ մ.թ. II դ. կեսերի հետ: Այսինքն՝ ուրվագծվում է Հռոմեական կայսերական շրջանին բնորոշ այս կոթողի Հայաստանում հայտնվելու ամենահավանական ժամանակը՝ մ.թ. II դ. կեսերը, երբ հռոմեացիները 163 թ. բռնազավթեցին Հայաստանը:

Հռչակվեց Վաղարշապատ-Կայնեպոլիսը (Արտաշատի փոխարեն) նոր մայրաքաղաք և վերածվեց հռոմեական գորակայան-ճամբարի: Այստեղ հայտնաբերված լատիներեն վիմագիր արձանագրությունները վկայում են 163 թ. ի վեր՝ շուրջ 30 տարի, հռոմեական լեգեոնների XV Apollinaris-ի և XII Fulminata-յի գորամիավորումների ռազմական բնույթի շինարարական գործունեության մասին<sup>166</sup>:

Կայնեպոլիս-Արտաշատ-Գառնի ռազմավարական հանգուցակետում՝ Դվին ամրոցի բարձունքին, հնարավոր է, հռոմեացիների կողմից կառուցված է եղել ուղղանկյուն հատակագծով հրամանատարական դիտակետ, որն իր գերիշխող դիրքից տեսադաշտի մեջ էր պահելու շրջապատը և հսկելու էր Ազատ գետի կիրճով դեպի արքունի ամրոց-ամառանոց, մշտապես «կայան գորացն» Գառնի ձգվող ճանապարհը (նկ. 1): Իսկ ամրոցի պարիսպներից դուրս, Վաղարշապատ (Կայնեպոլիս)-Արտաշատ ճանապարհին՝ «Բուն պողոտային» անմիջապես հարող տարածքում, որտեղ գտնվում էր Դվինի հնավանդ սրբավայրը, հնարավոր է, տեղադրված է եղել ոստիկանական ուղեցույց-ուղեկալ՝ իր բնորոշ շարժական գոհասեղանով, որը ձոնված էր «Հավերժական», «Անհաղթ» դիցամարտիկ «Sol Invictus» (= «Արև անպարտելի») Միթրային<sup>167</sup>:

Դվինի սրբավայրում հայտնաբերված բազալտե ծածկասալը ուղղակիորեն առնչվում է կաթողիկեի նախնական՝ IV դ. եռանավ շինության հիմքերում վերստին օգտագործված բազալտե սրբատաշ որմնասալերին, հավանաբար, և բազալտե սյունախարսխին: Ըստ շինարարական տեկտոնիկայի օրենքների՝ մեծ կշիռ ունեցող բազալտե սալածածկ տանիք կարող էր դրվել բազալտե կառույցի վրա: Այս բոլորից հետևում է, որ [վերջինս] նույնպես անմիջական առնչություն պետք է ունեցած լինի այստեղ մ.թ. II դ. երկրորդ կեսին հռոմեական բանակի բենեֆիցիարիոսների հիմնած պահակակետի հետ: Այս հարցի օգտին է խոսում նաև ծածկասալի և Միթրային ձոնված

<sup>166</sup> Հմմտ. Тревеп 1953, 264–270:

<sup>167</sup> Հռոմեական լեգեոններում՝ Եփրատից մինչև Հոննոս, լայն տարածում է ունեցել Միթրայի պաշտամունքը [տես Քոչարյան 2002, 210–211]:

գոհասեղանի հումքի՝ ըստ պետրոգրաֆիական ու քիմիական անալիզների տվյալների նույն հանքավայրից (Գառնիի անդեզիտաքաղաքավտային շերտից) վերցված լինելու պարագան<sup>168</sup>:

Ինչպես մյուս երկրներում, այստեղ ևս հոռմեական քաղաքական ագրեսիան զուգորդվել է որոշակի ուղղվածության գաղափարական և մշակութային քաղաքականությամբ: «Ռոմանականացված» կրոնական գաղափարախոսություն ու մշակույթ արմատավորելու նպատակով կրոնական հանդուրժողականության, սինկրետիզմի պայմաններում օգտագործվել են իրենց իսկ ռազմական հսկողության տակ գտնվող տեղի ավանդապահ սրբազան տարածքները:

Հօգուտ վերը քննարկվող վարկածին հավելենք, որ Գառնիի տաճարը համարվում է դեպի Արևելք հոռմեական էքսպանսիայի վառ օրինակ, հավատարմության երաշխիք կայսրությանը<sup>169</sup> և ուղղակիորեն վերագրվում է մ.թ. II դ. երկրորդ կեսին Հայաստանում տևականորեն տեղակայված XV Apollinaris և XII Fulminata լեգեոնների ծավալած շինարարական գործունեությանը<sup>170</sup>: Այս առումով ուշագրավ է Վաղարշապատում, Սուրբ Հռիփսիմե եկեղեցու գմբեթակիր որմնամույթերի տակ երբեմնի մոնումենտալ շենքի տուֆե քանդակազարդ (թե՛ բացարձակ չափերով ու համաչափություններով, և թե՛ զարդաքանդակով համանման Գառնիի տաճարի մանրամասներին) քիվի հատվածների առկայությունը<sup>171</sup>:

Ինչևիցե, հայ-հոռմեական քաղաքական առնչություններն արտացոլող առկա քարակերտ վավերագրերի համեմատական վերլուծությամբ՝ բազմաշերտ Դվին ամրոց-սրբավայրի տևական գոյության ընթացքում ուրվագծվում է ևս մի ժամանակահատված՝ մ.թ. II դարի երկրորդ կեսը, որպես վաղ Արշակունյաց շրջանի ցարդ անհայտ հնագիտական շերտի հնարավոր գոյության ակնարկ:

<sup>168</sup> Ուսումնասիրությունները կատարել են երկրաբանական գիտությունների թեկնածուներ՝ Ա. Ա. Ջաֆարովը և Կ. Ի. Կարապետյանը [տե՛ս Քոչարյան 1991, 67–68, տախտ. XXIX]:

<sup>169</sup> Ըստ էության՝ նման մոտեցում ցուցաբերած հեղինակների մասին տե՛ս Սահիսյան 1983, 23–30:

<sup>170</sup> Ռ. Վիլկինսոնը ռճաբանական վերլուծությամբ հանգել է քննվող կառույցի՝ մ.թ. II դ. երկրորդ կեսով թվագրմանը և հիմնավորել Կայնեպոլիսում տեղակայված հոռմեական գորքի անմիջական առնչությունը տաճարի կառուցմանը [Wilkinson 1982]: Ֆ. Տեր-Մարտիրոսովը ճարտարապետական առանձնահատկությունների մանրակրկիտ վերլուծությունից ելնելով՝ կարծում է, «որ Գառնիի տաճարն անհրաժեշտ է թվագրել ոչ վաղ, քան մ.թ. 2-րդ դարի կեսեր կամ, ավելի ճիշտ, մ.թ. 2-րդ դարի երկրորդ կես, որը Արևելքում Հոռմեական կայսրության հզորացման ժամանակաշրջանն է» [Տեր-Մարտիրոսով 1995, 20]:

<sup>171</sup> Սահիսյան 1964, 54–55; Тирациян 1977, 84, 92:

*Աշխարհընկալման գաղափարական  
հաջորդական զարգացման ընթացքը ամրոց-սրբավայրում*

Վաղարշապատ-Արտաշատ ճանապարհին՝ «Բուն պողոտային» հարող Դվին բազմաշերտ ավանդապահ ամրոց-սրբավայրը և Ազաթանգեղոսի վկայությամբ նույն տիրություն գտնվող Տիր աստծուն ձոնված «Երազամույն տեղեր»՝ պատգամախոսարան-սրբավայրը<sup>172</sup> կազմել են կրոնապաշտամունքային մեկ ամբողջություն: Դվին տեղանվան հնդեվրոպական նախալեզվի (ՀՆԽ) \*d<sup>h</sup>eu-հիմքից ծագած լինելու փաստը և հայ. Տիր/Տիրք և՛ դիցանունի, և՛ դիցաբանական կերպարի նույն՝ հնդեվրոպական մշակութային ընդհանրությունից բխած լինելու իրողությունը վկայում են քննվող համալիրի պաշտամունքային ակունքների վաղեմության մասին<sup>173</sup>:

1. Մ.թ.ա. III հազարամյակի և հատկապես մ.թ.ա. I հազարամյակի սկզբի բազմահարուստ նյութական մշակություն տեսանելի են բնապաշտական հավատալիքների ավանդականության դրսևորումներ: Իրավամբ, մ.թ.ա. X–VIII դդ. հնագիտական նյութի պատկերագրության խորհրդապաշտական ենթատեքստում՝ կյանքի հարատևության և դրա անընդմեջ նորոգման ըմբռնումներում ակնհայտ է դառնում *լուսավոր երկնքի առանցքային դերն իր բնածին, կենսական լույսի պաշտամունքի գաղափարով*<sup>174</sup>:
2. Անտիկ շրջանին բնորոշ կրոնական սինկրետիկ հայեցողությամբ պայմանավորված՝ հանդուրժելի պիտի լիներ *հայ. Տիր – հուն. Ապոլոն – հռոմ. Միթրա լուսակիր եռյակի համալրելումը հնավանդ սրբավայրում*<sup>175</sup>:

Փոքր Ասիայից Հայոց աշխարհ բերված (նախ՝ Արմավիր-Սոսյաց անտառ, ապա՝ Բազարան-Ծննդոց անտառ պաշտամունքային համալիրներում կանգնեցված) Ապոլոնի պղնձածույլ, ոսկեգօծ արձանը Արտաշես Առաջինը փոխադրեց և կանգնեցրեց նորակերտ Արտաշատ մայրաքաղաքից դուրս «հույ ի ճանապարհն»<sup>176</sup>, որտեղ վաղուց ի վեր կային Տիրի և Ապոլոնի դիցաբանական կերպարներն ընդ-

<sup>172</sup> Դեռևս Հայոց դարձի նախաշեմին գործող «Երազամույն տեղեր» սրբավայրի մասին տես Ազաթանգեղոս 1983, 436–438 (778, 779 ՃԸ.):

<sup>173</sup> Տես Քոչարյան 2000ա; Քոչարյան 2005գ; հմմտ. նաև Բոբոխյան 2018, 290–301 (Արագածի նորահայտ Տիրինկատար սրբավայրի ընդհանուր համատեքստում ակնհայտ են Տիրի պաշտամունքի վաղեմությունը հավաստող հնագույն շերտերը):

<sup>174</sup> Քոչարյան 2021, 183–184:

<sup>175</sup> Տիր աստվածության վերականգնված եռաստիճան կերպարի և Տիր-Ապոլոն-Միթրա լուսակիր եռյակի մասին տես Քոչարյան 2021, 180 և հաջորդ էջերը:

<sup>176</sup> Տես Մովսես Խորենացի 1990, 80 (II, ԺԲ), 106 (II, Խ), 112 (II, ԽԹ):

հանրացնող (լույսի ու բնության տարերքի, ճակատագիր տնօրինողի, արհեստներ ու արվեստներ հովանավոր-շնորհներ պարգևողի, աստվածների կամքը հայտնող-պատգամախոսի) հատկանիշներով պաշտամունքի հայրենի հնավանդ սրբավայր, նվիրական պուրակներ, պաշտվող ծառեր, այն է՝ «Երազամույն տեղերն» իր կաղնուտ-պատգամախոսարաններով և Տիրի տաճարով<sup>177</sup>: Սրանից գատ Դվինի սրբավայրում զուգամիտում են Տիրի և Միթրա-Միհրի՝ երկնային լույսի հատկանիշները: Հելլենիստական ժամանակներից ի վեր հայտնաբերված կրոնապաշտամունքային միջավայրում հայտնի էին Տիր-Ապոլոն և Ապոլոն-Միթրա<sup>178</sup> համադրությունները, ուստի նման պարագայում միանգամայն օրինաչափ էր *Տիր-Ապոլոն-Միթրա լուսակիր, լուսահորդ եռյակի համարեղումը Երազամույն տեղեր-Դվին հինավուրց սրբավայրում*:

3. Հայոց դարձից հետո IV դ. այս նույն սրբավայրում կառուցվեց Սուրբ Գրիգոր (Լուսավորիչ) կաթողիկե եկեղեցին՝ հիմնահատակ կործանված հեթանոսական տաճարի քարերով: Տեղի ընտրության հարցում, աներկբա, վճռորոշ դեր պիտի խաղացած լինի սրբավայրի լուսածին, լուսաստեղծ զորությունների դրսևորումների ընդհանրությունը՝ *մարդկանց հոգիներն ու միտքը աստվածային պարգամների լույսով լուսավորող Սուրբ Գրիգոր Լուսավորչի՝ Հայոց Սրբազան Մեծ Հայրապետի կերպարի հետ*:

Աշխարհընկալման ընդլայնմանը համընթաց՝ փոխվում էին հավատալիքների ծիսական դրսևորումները, հավելվում նոր պատումներ, հին աստվածներին վերագրվում նոր հատկանիշներ, տրվում նոր անուններ, նույնացվում օտարամուտ աստվածությունների հետ, ավելին՝ նույնիսկ փոխարինվում Նոր հավատքի՝ միաստվածության սրբերով, սակայն սրանք բոլորն էլ վերաբերում են արտաքին երևութական կողմին, *մինչդեռ սրբավայրին վերագրվող զորության ավանդույթը տևականորեն մնայուն է*: Դվին սրբավայրի գոյատևումը պայմանավորված է *լույսի պաշտամունքով՝ նախ լույսի կենսական, ապա և հոգևոր պահանջի անհրաժեշտությամբ, լույս՝ որ-*

<sup>177</sup> Սկզբնաղբյուրներից հայտնի է, որ օտար երկրներից բերված օտար դիցաբանների արձանները համադրվել են հայրենի աստվածների հետ և տեղադրվել հայրենի հնավանդ սրբավայրերում: Իրավամբ, զուգադրելով Ագաթանգեղոսի (սան հունարեն բնագրերի ընդգրկումով) և Մովսես Խորենացու վկայությունների տեղեկատվությունը, ստացվում է, որ հուն. Ապոլոնը նույնացվել է հայ. Տիրի հետ (հուն. «Ապոլոնի պատգամատունը»=հայ. «Երազացոյց-Երազահան պաշտման Տրի դից»), հետևաբար դրվել Տիրին ձևված «Երազամույն տեղեր» պատգամախոսարան-սրբավայրում [իմմտ. Քոչարյան 2004, 420–422]:

<sup>178</sup> Ապոլոն-Միթրա դիցաբանական զույգը մեզանում [իմմտ. Կրկյաշարյան 1970, 136–137; Tiratsyan 2003, 151–153]:

պես այդպիսին ընկալելուց մինչև միտքն ու հոգին լույսով սնելու անհրաժեշտության մշտնջենականությամբ՝ ժամանակի տևական հոլովույթի ողջ ընթացքում: Ի վերջո, Դվին սրբավայրի գոյատևումը պայմանավորված է մարդու աշխարհընկալման զարգացման ընթացքում *լուսի պաշտամունքի անընդմեջ պահպանողական տևականությամբ*:

*Ժառանգված իրողությունների զարգացման ուղին*

Մ.թ. IV դ. 30-ականներին Խոսրով Բ Կոտակ Արշակունին արքունիքը Արտաշատից «փոխադրում է անտառից վերև մի բլուրի վրա և շինում է արևից պատսպարված ապարանք. (այս տեղը) պարսկական լեզվով կոչվում է Դվին, որ նշանակում է բլուր»<sup>179</sup>: Նա արքունի ապարանքը կառուցեց բլրի՝ պարսպով պատսպարված գագաթին (պահպանվել են IV դ. «Արշակունյաց գահադահլիճի» եռանավ սրահի մնացորդները<sup>180</sup>), իսկ հարավարևմտյան ստորոտին՝ հնագույն սրբավայրում Նոր դավանանքի հոգևոր կենտրոնի սկիզբը դրվեց:

Անհրաժեշտ էր հնամենի «ամրոց-սրբավայրը» համալրելով՝ կերտել արքունի կացութաձևին վայել միջավայր:

«Եվ հրաման տվեց թագավորն իր գորավարին՝ աշխարհից բազմաթիվ մշակներ հավաքել, *անսրտներից վայրի կաղին հանել ու բերել տնկել Այրարատյան գավառում*, սկսելով արքունի ամուր բերդից, որին ասում են Գառնի, մինչև Մեծամորի դաշտը, այն բլուրը, որ կոչվում է Դվին և գտնվում է Արտաշատ մեծ քաղաքի հյուսիսային կողմում: Եվ այսպես մերի տնկեցին գետի ընթացքով դեպի ներքև, մինչև Տիկնունի ապարանքը: Նա այս մերին կոչեց *Տաճար մայրի*: Մի ուրիշ մերի էլ տնկեցին նրանից դեպի հարավ, եղեգնուտի եզերքով, և *ամբողջ դաշտը լցրին կաղնի տնկով*. սրա անուն էլ դրին *Խոսրովակերպ*: Նույն տեղում շինեցին նաև *արքունական ապարանքներ*: Երկու մերիներն էլ պարիսպներով փակեցին, առանց իրար հետ կցելու, անցուդարձի ճանապարհի համար: (Մերին) աճեց ու բարձրացավ: Հետո թագավորը հրամայեց ամեն տեսակ երեներ ու գազաններ ժողովել ու լցնել պարսպապատված տեղերը, *որպեսզի նրա թագավորության որսի՝ զբոսանքի և ուրախության տեղեր դառնան*: Վաչեն [սպարապետ Վաչե Մամիկոնյանը – Գ. Բ.] անմիջապես կատարեց թագավորի ասածները»<sup>181</sup>:

<sup>179</sup> Մովսես Խորենացի 1990, 170 (III, Ը); Դվին տեղանվան հարցի շուրջ տես Քոչարյան 2000ա:

<sup>180</sup> Հմմտ. Ղաֆաղարյան 1982, 89–96:

<sup>181</sup> Տես Փավստոս Բուզանդ 1987, 33 (III, Ը); հմմտ. նաև Քոչարյան 2004; Քոչարյան 2005բ:

Խոսքով Կոտակի անտառատնկման այս ձեռնարկն ինքնին բնապահպանական մեծ նշանակություն է ունեցել: Սա, փաստորեն, բուսական և կենդանական աշխարհի վերարտադրություն էր, որն աներկբայորեն նպաստել է շրջապատի միկրոկլիմայի բարելավմանը, հատկապես որ «այդ ժամանակ Հրատն ուղեկցում էր Արեգակին և անմաքուր ջերմ օդը գարշելի հոտ էր բուրում»<sup>182</sup> Երասխի ճահճուտներից:

Արդի հետազոտությունները Գեղամա լեռնաշղթայի հարավային լանջերի և հարավարևմտյան լեռնաճյուղերի վրա, Ազատ և Խոսքով գետերի ավազանում [ներկայիս Խոսքովի արգելոցի տարածքում] բացահայտել են կղզիացած ռելիկտային (մնացորդային) անտառային զանգվածներ, որոնք «ատավելապես կազմված են խոշորատեջք կաղնուց»<sup>183</sup>: Այս կղզիացած «զանգվածները համարվում են Հայաստանի կենտրոնական մասի, երբեմն լայն տարածված կաղնու անտառների մնացորդները, որոնք բնակլիմայական բարենպաստ պայմանների շնորհիվ պահպանվել են մինչև մեր օրերը»<sup>184</sup>:

Այսինքն՝ ստացվում է, որ IV դ. սկզբին Խոսքով Կոտակն անտառատունկը ձեռնարկել է այստեղ վաղուց ի վեր եղած խոշորատեջք կաղնուտների անտառային զանգվածների հիմքի վրա, իրականացրել է՝ սրանց «վերակառուցմամբ»: Հակառակ դեպքում, Խոսքով արքայի (330–338 թթ.) գահակալության այս կարճ 7–8-ամյա ժամանակահատվածում գործնականում հնարավոր չէր «յուրացնել ամայի տարածությունները, ստեղծել անտառային կուլտուրաներ, որոնք լավ խնամքի և մշակության դեպքում մի քանի տասնյակ տարիներ հետո միայն»<sup>185</sup> կարող էին վերածվել ցանկալի անտառապուրակների և դառնալ «*թագավորության որսի՝ զրոսանքի և ուրախության տեղեր*»:

Եթե վերը նշվածը, զոնե մասամբ լուսաբանում է հարցի և՛ գործնական կողմը, և՛ արքայի հստակ հրամանի՝ հենց այս տեղերում կաղնետունկ անտառներ հիմնելու որոշակի պահանջը, ապա անտառներից մեկը «Տաճար մայրի» կոչելը հատուկ խորհելու տեղիք է տալիս՝ ինչու՞ «Տաճար մայրի»:

1. «Տաճար մայրի» տեղանվան առաջին բառը ՆՀԲ-ը մեկնում է՝ «Տուն և բնակարան Աստուծոյ», «Մեհեան կոոց», երկրորդը (ծառատեսակ լինելուց զատ)՝ անտառի հոմանիշն է<sup>186</sup>: Իր հիմնած պարսպապատ

<sup>182</sup> Մովսես Խորենացի 1990, 170 (III, Ը):

<sup>183</sup> Հայաստանում խոշորատեջք կաղնուտների ծագման առանձնահատկությունների մասին տե՛ս Մուլքիջանյան 1975, 23–24, 34 և հաջորդ էջերը:

<sup>184</sup> Գրիգորյան 1976, 23:

<sup>185</sup> Հարությունյան 1974, 34:

<sup>186</sup> ՆՀԲ 1981, 202, 841; հմմտ. նաև Սուքիասյան 1967, 436, 615:

կաղնետունկ անտառը Խոսրով Կոտակը՝ «Տաճար անտառ»=«Սրբազան անտառ»=«Սրբազան կաղնու անտառ»=«Կաղնու տաճար» կոչելով, դրսևորեց ժամանակի հասարակական գիտակցության մեջ դեռևս իշխող հին ըմբռնումներ: Քանզի շատերը «իրենց ժամանակը մաշում էին... հին հեթանոսական սովորություններով... նրանք սիրում էին իրենց առասպելների երգերը, վիպասանությունները, նրանցով կրթվում էին, նրանց հավատում էին, նրանց մեջ հարատևում»<sup>187</sup>: Իրավամբ, արքայի կողմից անտառը «Տաճար մայրի» կոչելն, ըստ էության, կաղնեպաշտության, բնապաշտական հնավանդ աշխարհայեցողության ակնհայտ դրսևորում է:

Հնդեվրոպական ավանդույթներում կաղնուտները բնական տաճարներ էին<sup>188</sup>, այստեղ «աստվածային պատգամներն ուղարկվում էին» կաղնիների ճյուղերի տատանումների և տերևների սոսափյունի կամ էլ սրանց հովանու տակ քնածներին մարգարեական երազներ առաքելու միջոցով արդեն ի վերուստ կանխորոշված ապագայի խորհրդանշաններով, որոնք և մեկնում էին քրմերը:

2. Արքայի «նորոգած» սրբազան կաղնուտները նախկինում, ամենայն հավանականությամբ, նույնպես պատգամախոսարաններ են եղել: Առավել ևս, որ այս նույն տեղերում՝ «Ոստան Հայոց» գավառի սահմաններում էր գտնվում Ագաթանգեղոսի հիշատակած, Հայոց դարձի նախօրեին դեռևս գործող «Երազամույն տեղեր» պատգամախոսարան-սրբավայրը՝ երազացույց-երազահան Տիր աստծու տաճարով<sup>189</sup>: Հնարավոր է, որ տվյալ կաղնուտ-պատգամախոսարանները Տիր աստծուն ձոնված «Երազամույն տեղերի» բաղադրիչ մասն են կազմել: Ի վերջո, «տեղեր» բառի հոգնակի լինելը, անտարակույս, որոշակի տարածության վրա սփռված լինել է նշանակում, իսկ պատգամախոսարանի առկայությունն ինքնին ենթադրում է սրբազան պուրակներ, պաշտվող ծառեր: Հայ. Տիր/Տիր դիցանվան ու դիցաբանական կերպարի հնդեվրոպական մշակութային ընդհանրությունից բխած լինելու հանգամանքը և քննվող կաղնուտների ռելիկտային զանգվածների առկայությունը վկայում են «Երազամույն տեղերի» ծագման վաղեմությունը:
3. Արքան իր կաղնետունկ պարսպապատ անտառներն է հիմնում՝ նախկին կաղնուտ-պատգամախոսարաններն ընդգրկելով: Անտառներից մեկը արքան կոչեց «Տաճար մայրի»=«Կաղնու տաճար», որը տեղի

<sup>187</sup> Փավստոս Բուզանդ 1987, 55 (III, ԺԳ):

<sup>188</sup> Կաղնի-կաղնուտը հնդեվրոպական ավանդույթներում և կաղնեպաշտությունը մեզանում՝ ըստ ազգագրական տվյալների հմնտ. Քոչարյան 2004, 418–419:

<sup>189</sup> Ագաթանգեղոս 1983, 436–438 (778, 779 ՃԸ):

նվիրական կաղնուտների պաշտամունքի տակավին չմոռացված հիշատակների բացահայտ արձագանքն էր:

Վաղքրիստոնեական հայ գրավոր ավանդությունը մեկընդմիջտ մոռացության մատնեց «**Տաճար մայրի**» տեղանունը՝ հիրավի, որպես հեթանոսական ժառանգության բացահայտ դրսևորում, և երկու անտառն էլ հորջորջեց մեկ ընդհանուր՝ «*Խոսարովակերպ*» անունով<sup>190</sup>:

4. «Մի ուրիշ մերի էլ տնկեցին ... և *ամբողջ դաշտը լցրին կաղնի տնկով*. սրա անունն էլ դրին *Խոսարովակերպ*: Նույն տեղում շինեցին նաև *արքունական ապարանքներ*»:

Առաջին հայացքից տրամաբանական է թվում այս երկու անտառների նույնացումը, քանզի երկուսն էլ կաղնետունկ էին, երկուսն էլ՝ «որսի տեղեր»: Այսուհանդերձ, ըստ արքայի հստակ հրամանի՝ ստեղծվել էր երկու առանձին կաղնետունկ պարսպապատ տարածք՝ երկու տարբեր տեղանուններով: Ազատ գետի ջրառատ հովտում ձեռնարկած լայնածավալ ծառատունկով արքան դաշտը վերածեց անտառի, իրականացրեց անտառի նմանակում (իմիտացիա), ստեղծեց անտառապուրակ՝ բնապատկերային ճարտարապետական կազմակերպված միջավայր: Ուր և արքունի կացութաձևին վայել գեղատեսիլ միջավայրում տեղադրեց արքունական ապարանքներ: Այս մայրին՝ որպես արքայի «հանգստի ու հաճույքի վայր»=պարադիս, կոչեց «*Խոսարովակերպ*»: Խոսարովակերտ անտառապուրակում արքունական ապարանքներ տեղադրելով՝ Խոսարով Կոտակը կարևորում էր այս դաստակերտի դերը իր նախաձեռնած ծավալուն ծրագրում:

Տարածաշրջանում իշխող գեղագիտական պահանջներին համահունչ միջավայր՝ արքունի վերնախավի զվարճանքի «վայելույ տեղեր», արքայավայել անտառապուրակներ ստեղծելու ավանդույթը Հայկական լեռնաշխարհում վկայված է մ.թ.ա. I հազարամյակի սկզբներից և տևականորեն շարունակվում է հայոց արքայատոհմերի շրջանում (հմնտ. Վանի թագավորության արքաների, ապա՝ Երվանդ Վերջինի, Արտաշես Առաջինի, Տիգրան Մեծի, Խոսրով Կոտակի համալիրները)<sup>191</sup>:

<sup>190</sup> Հմնտ. Մովսես Խորենացի 1990, 170 (III, Ը); Ղազար Փարպեցի 1982, 351 (Գ, ՀԸ); Սերէոս 1979, 138 (ԽԲ):

<sup>191</sup> Արքունի ծառագարդ ապարանքի և որսատեղ-անտառապուրակի համադրությունը՝ որպես արքաների «հանգստի ու հաճույքի վայր», հայտնի է պարադիս (paradeisos) անվամբ: Պարադիսներ վկայված են Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. I հազարամյակի սկզբից ի վեր, հարևան տարածաշրջանում՝ Ասորեստանում Սարգոնյանների օրոք, իսկ ավելի ուշ սփռված Աքեմենյան (հետագայում՝ Սելևկյան) արքաների լայնածավալ կայսրության տիրոջ: Պարադիսների մշակույթը՝ ըստ սկզբնաղբյուրների տես Օրփենիմ 1965, 331–333; Քոչարյան 1999, 123–124; հմնտ. նաև Քոչարյան 2000բ:

Այսպիսով, առաջնորդվելով բնապատկերային ճարտարապետության ավանդական սկզբունքներով՝ Խոսրով Կոտակն իրականացրեց քաղաքաշինական մի ամբողջություն կազմող կոռ մտահղացում՝ *Դվին* (արքունի նստավայր)+*Խոսրովակերպ* (արքայական ծառագարդ ապարանք-անտառապուրակ)+*Տաճար մայրի* (արքայական կաղնետունկ անտառ-արգելոց)=*արքայանիստ համալիր կառույց* (հմնտ. Երվանդ Վերջինի՝ Երվանդաշատ + Երվանդակերտ + Ծննդոց անտառ, Տիգրան Մեծի՝ Տիգրանակերտ + արվարձանային անտառապուրակ՝ արգելոց-որսատեղերով արքայանիստ շքեղ համալիրները<sup>192</sup>):

Խոսրով Կոտակի քաղաքաշինական այս ամբողջական ծրագիրը կազմված էր ավանդական մոտեցմամբ, խարսխված էր խորհրդապաշտական հին ընկալումների և ըմբռնումների վրա: Այսուհանդերձ, Դվին ամրոց-սրբավայր+Երագամույն տեղերը արքան վերստին սրբագործելով՝ նորովի իմաստավորեց և արժևորեց՝ որպես արքայանիստ համալիր կառույց: Սա անվերապահորեն Նոր դավանանքի հավատացյալների վրա բարոյահոգեբանական ներգործության խորապես գիտակցված մարտավարական խելամիտ քայլ էր՝ հեթանոսական մշակութային ժառանգականությունից քրիստոնեականին անցման աստիճանական մեղմացման դրսևորում: Հիրավի, ուրվագծվում է ժառանգված իրողությունների զարգացման բնականոն ընթացքի ուղին Դվին բազմաշերտ ամրոց-սրբավայրում:

*Խոսրով Կոտակի՝ արքունիքը տեղափոխելու հետահար, վճռորոշ քայլով դրվեց Դվին ամրոց-սրբավայրից մինչև արքայանիստ քաղաք-մայրաքաղաք տեղական կայացման հասարարուն գործընթացի սկիզբը:*

1. Քաղաքի կազմավորումն ու կայացումը պայմանավորված էր Դվինի կենսագործունեությունն ապահովող փոխկապակցված մի շարք քաղաքաստեղծ գործոններով՝ ա) աշխարհագրական, բնակլիմայական, տեղագրական բարենպաստ միջավայր, բ) անվերապահ հեղինակություն հավաստող՝ աշխարհիկ և հոգևոր իշխանություն խորհրդանշող, ամրոց-սրբավայր զույգի տևական համադրություն, գ) բազմագործառույթ կենտրոնի դերի ավանդական իրողություն:
2. Նորակերտ Դվինի քաղաքայնացման գործընթացը IV–V դդ. կայացավ դժվար և տևականորեն՝ անցումային խառնակ ժամանակաշրջանում, հայոց քաղաքների և Արշակունյաց կենտրոնական իշխանության ճգնաժամի, անկման, ազգային-ազատագրական հա-

<sup>192</sup> Մովսես Խորենացի 1990, 105–106 (II, ԼԹ), 106 (II, ԽԱ), 107 (II, ԽԲ); Ապպիանոս 1981, 257–258 (XII, 84):

մաժողովրդական շարժումների ծավալման պայմաններում: Դվինը երկարորեն մնաց միջազգային առևտրի ոլորտում համբավ վայելող մայրաքաղաքի իր կարգավիճակը պահպանած Արտաշատի հովանու ներքո: Արդարև, մեկ հարյուրամյակ և ավելին Դվինն այլևս չի հիշատակվում գրավոր աղբյուրներում, թեպետ պեղումներով բացահայտված է կառուցապատման անընդհատություն:

3. Մայրաքաղաքի դերն Արտաշատից Դվինին անցնում էր աստիճանաբար՝ Դվինի կառուցապատմանն ու համաբնակեցմանը<sup>193</sup>, տնտեսական բարգավաճմանն ու քաղաքական վարկանիշի աճին համընթաց: Հիրավի, V դ. վերջին քառորդին Դվինը՝ քաղաքական ինքնուրույնությունը պահպանած մարզպանական Հայաստանի մայրաքաղաքն էր, Հայոց կաթողիկոսի նստավայրը և միջազգային տարանցիկ առևտրի կարևորագույն հանգույց:

<sup>193</sup> Ըստ Մովսես Խորենացու վկայության՝ «Արտաշատի բնակվողները...կամավ հանձն առան այս տեղափոխությունը» [Մովսես Խորենացի 1990, 170 (III, Ը)]. նորակերտ Դվինի բնակչությունը համալրվում է հելլենիստական ժամանակաշրջանի քաղաքաշինությանը բնորոշ սինոյկիսմոսի՝ համաբնակեցման ավանդույթով [տես Тирация 1988б, 86]: Մրանից գատ, Դվինի բազմագործառույթ դերը նպաստել է համաբնակեցման քաղաքականության ևս մեկ տարբերակի իրականացմանը, այն է՝ շրջակա գյուղական համայնքների միավորումը մեկ կենտրոնի շուրջ քաղաքային բնակչության իրավունքներով:

## ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԵՆՑԱՂ

Հնագիտական, հնարուսաբանական և հնակենդանաբանական հետազոտությունների տվյալների համեմատական վերլուծությամբ բացահայտվում է Դվին ամրոց-սրբավայրի և հարակից բակավայրերի տնտեսական գործունեության ու կենցաղի ընդհանրական պատկերը:

### *Քաղաքամերձ փնտրեսական գոտի՝ խորա (χώρα)*

Վանի թագավորության արքաները քաղաք հիմնելիս անցկացնում էին ջրանցքներ, ընդլայնում մ.թ.ա. I հազարամյակից ի վեր գործող ոռոգման ցանցը, հիմնում խաղողուտներ, արտեր ցորենի, տնկում «բազմաթիվ առատաբեր և գինեբեր այգիներ»<sup>194</sup>: Փաստորեն, ստեղծում էին քաղաքը սպասարկող գյուղատնտեսական գոտի, որը անտիկ քաղաքի խորայի ձևավորման նախորդող փուլ էր: Վանտոսայան ժամանակներից ի վեր ժառանգված գյուղատնտեսական տարածքներում պարբերաբար նորոգվող և համալրվող ջրանցքների համատարած ցանցեր Երվանդունիների առաջին թագավորության և Աքեմենյան սատրապության ժամանակաշրջանում (մ.թ.ա. VI–IV դդ.) դիտվում են Արարատյան դաշտում, Վանի ավազանում, Մշո-Մանազկերտի-Բասենի, Երզնկայի դաշտերում և այլուր<sup>195</sup>:

Արտաշիսյան արքայատոհմի գահակալության շրջանում (մ.թ.ա. II – մ.թ. I դդ.) Մեծ Հայքի գրեթե ողջ տարածքն ընդգրկող վերամիավորված երկրի լայնածավալ քաղաքայնացման գործընթացում քաղաքներն ու քաղաքատիպ ավանները օղակվում են ոռոգելի հողատարածքներով, ձևավորվում է քաղաքամերձ տնտեսական գոտի՝ խորա (χώρα): Հնագիտական հետազոտությունները վկայում են Արմավիրը, Արտաշատը, Վարդգեսավան-Վաղարշապատը սպասարկող մերձքաղաքային գոտիների առկայու-

<sup>194</sup> Մովսես Խորենացի 1990, 35 ( I, ԺԶ); հմմտ. Мартиросян 1974, 37–40; Խանզաղյան 1979, 129:

<sup>195</sup> Մուշեղյան 1971, 207–211; Ղաֆադարյան 1984, 22–28; Summers 1993, 85–86, 88; Parker 1999, 134–138; հմմտ. նաև Քոչարյան 2010, 169–171:

թյուն<sup>196</sup>՝ գյուղատնտեսության ավանդական ճյուղերի զարգացումը ապահովող բերրի, ոռոգելի հողերի ընդգրկմամբ:

Վանի տիրակալները մ.թ.ա. VIII դ. առաջին կեսին՝ Երասխա և Մեծամոր գետերի կազմած եռանկյունու (ապագա Արտաշատի) բլրաշարի վրա հզոր միջնաբերդով նոր քաղաք հիմնադրելիս<sup>197</sup>, շրջակա արգավանդ հողերի համատարած յուրացման նպատակով Երասխա, Մեծամոր, Ազատ գետերի բնական ջրային ցանցի վրա (թերևս ժառանգելով մ.թ.ա. I հազարամյակից ի վեր գործող ոռոգման ցանցը<sup>198</sup>) պետք է որ ստեղծած լինեին ոռոգման նոր համակարգ:

Մ.թ.ա. 180–170-ական թվականներին Արտաշես Առաջինի (մ.թ.ա. 189–160 թթ.) հիմնարկած Հայոց միացյալ թագավորության մայրաքաղաք Արտաշատի՝ Ոստան Հայոց գավառն ընդգրկող մերձքաղաքային տնտեսական տարածքը<sup>199</sup>, գտնվելով միջազգային տարանցիկ առևտրի մայրուղիների ճյուղավորման խաչմերուկում, վերստին ստանում է ռազմավարական և տնտեսական առանձնակի կարևորություն: Այստեղ մայրաքաղաքը սպասարկող տարաբնույթ բնակավայրերի խտացման գործընթացն աներկբայորեն պայմանավորված է եղել արհեստական ոռոգման ճյուղավորված համակարգի առկայությամբ, թերևս նախորդ ժամանակների ոռոգման հիմնական ուղեգծերի վերաշահագործմամբ և ընդլայնմամբ:

Ուժեղ կենտրոնական իշխանության այդօրինակ ձեռնարկումները, հաղորդակցության ուղիների և ոռոգման ցանցի զուգակցումը նպաստել են Երասխա–Մեծամոր–Ազատ գետերի միջև ընկած տարածքի ծավալուն տնտեսական բարգավաճմանը՝ այն վերածելով նորաստեղծ մայրաքաղաքի տնտեսական ներուժն ապահովող շտեմարանի:

Ոստան Հայոց գավառը նման նպատակի հատկացնելը օրվա հրամայական պահանջ էր: Քաղաք–խորա–ճանապարհ կայացած համալիրը խթանում էր մասնագիտացված (հացագործական, խաղողագինեգործական, ձիթագործական և այլն) տնտեսությունների զարգացումը, նպաստում միջշրջանային տնտեսական առնչությունների աշխուժացմանը: Տնտեսության առանցքը կազմող ոռոգելի երկրագործությունը այս բարեբեր հողերում ապահովել

<sup>196</sup> Тирация 1988a, 80–82, 156; Խաչատրյան 2007, 20; Քոչարյան 2008, 160–168:

<sup>197</sup> Խաչատրյան 1987, 162–163; Gyulamiryan et al. 1921, 8–9, 17:

<sup>198</sup> Այս առումով հարկ է հիշատակել վաղերկաթեդարյան Դվին «արքունի քաղաքը» [հմնտ. Խանգաղյան 1979, 126] և Հին Արտաշատի տարածքում մասամբ բացված համաժամանակյա բնակատեղին՝ հնագիտական տվյալներով փաստված իրենց զարգացած տնտեսությամբ [հմնտ. Ջարդարյան և այլք 1991, 55]:

<sup>199</sup> Քոչարյան 1998բ:

է մշակաբույսերի կայուն, առատ, բարձրորակ բերք: Ըստ հնարուսաբանական տվյալների՝ այստեղ աճեցվել է Հայկական լեռնաշխարհում ավանդաբար մշակվող հացազգիների (փափուկ ցորեն, գարի, կորեկ<sup>200</sup>), ձիթատու բույսերի (քնջութ, ընկուզենի, տզկանեփ, կանեփ<sup>201</sup>) որոշակի տեսականի: Հովտային նման գոտիներում վկայված է նաև զարգացած այգեպտղաբուծության բազմազանություն, ընդ որում՝ Ստրաբոնը մեր հովիտները «արտակարգ պտղավետ» է բնութագրել<sup>202</sup>:

*Դվին ամրոց-սրբավայրը և մերձակա բնակավայրերը*

V դարի պատմագիր Եղիշեի «գմեճն Արտաշատ հանդերձ ասանօք իւրովք», «գնահանգն Արտաշատու և զԱրտաշատն ինքնին գլխովին, և զամենայն գեղս և զաւանս, որ շուրջ գտվաւ էին»՝ հելլենիստական ժամանակների վաղեմություն ունեցող այս բնութագրումները<sup>203</sup> վկայում են քաղաքն իր շրջապատով վարչատնտեսական մեկ ամբողջություն լինելու փաստը: Իրավամբ, պատմահնագիտական սկզբնաղբյուրները Արտաշատի շուրջը ուրվագծում են բնակավայրերի մի ամբողջ օղակ: Այս շարքում առավել ուսումնասիրված է մայրաքաղաքի հյուսիսարևելյան թիկունքում՝ Ազատ գետի հին հունի ավին գտնվող Դվին ամրոց-սրբավայրը՝ շուրջը խմբված բնակավայրերով հանդերձ:

Հետախուզական բնույթի պեղումների և գյուղատնտեսական դաշտային աշխատանքների ժամանակ Դվին ամրոցը անմիջապես օղակող ներկայիս այգիների ու գյուղերի (Վերին Արտաշատ, Նորաշեն, Ներքին Դվին, Հնաբերդ), ինչպես նաև մերձակա գյուղերի (Քաղցրաշեն, Այգեզարդ, Կանաչուտ, Դեղձուտ, Արևշատ, Դիտակ) տարածքում հայտնաբերվել են անտիկ դարաշրջանի բազմաբնույթ հնագիտական նյութեր<sup>204</sup>:

Այս հավաքածուն կարելի է տեսակավորել. ա) տնտեսությանը առնչվող գտածոներ՝ տարապաններ, գուռեր, սանդեր, աղորիքներ, երկանքներ, կարաններ, տափաշշեր, տաշտեր, թասեր, ըմպանակներ և այլ խեցանոթներ, բ) պերճանքի առարկաներ՝ անուշաբույր յուղերի ապակե սրվակներ, հմայիլ-

<sup>200</sup> Խաչատրյան 2007, 20 (նյութի հետազոտությունը կատարել է հնարուսաբան Ռոման Հովսեփյանը):

<sup>201</sup> Паланджян, Мурашев 2007, 132–133; Փալանջյան 2015, 11–12:

<sup>202</sup> Страбон 1964, 497 (XI, XIV, 4). Դվինի միջնադարյան շերտերում բացի հացազգիներից (ընդ որում՝ «միջնաբերդում բացվել են մի քանի տոննա տարողությամբ հացահատիկի հորեր») հայտնաբերվել են խաղողի, ձմերուկի, սալորի, դեղձի կորիզներ, նաև՝ կաղինի, ընկուզի կճեպ և այլ ընդդեմ լիմնու. Ղաֆաղարյան 1952, 55, 72, 242]:

<sup>203</sup> Եղիշե 1989, 136, 158; Սարգսյան 1971, 660–661:

<sup>204</sup> Տեն Տեր-Մարտիրոսով 1977, 30; Քոչարյան 1991, 31–33; 73–74:

կնիքներ, բրոնզե ապարանջաններ, գ) ճարտարապետական տարրեր՝ սյան մատնեքավոր գլան, տորաձև և «ատտիկական» սյունախարիսներ, զարդաքանդակ ծոփորի բեկոր և այլն<sup>205</sup>, դ) դրամներ՝ Տիգրան Մեծի (մ. թ. ա. 95–55 թթ.) արծաթե դրախմա, Հռոմի կայսերական՝ Օգոստոս Օկտավիանոսի (մ. թ. ա. 30–մ. թ. 14) և Դոմիտիանոսի (մ. թ. 81–96 թթ.) դենարներ, Բոսփորի թագավորության արքաներ Ռիսկուպորիդես II-ի (մ. թ. 68–92 թթ.) սեստերցիա և Ռիսկուպորիդես VI-ի (մ. թ. 318–332 թթ.) պղնձե ստատեր<sup>206</sup>: Հիշյալ տարածքի՝ անտիկ դարաշրջանում բնակեցված լինելու փաստը վկայված է (Վերին Արտաշատում, Նորաշենում, Քաղցրաշենում, Այգեզարդում և այլուր) նաև կարասային թաղումների առկայությամբ:

Բացահայտվում են անտիկ շրջանի Դվին ամրոց-սրբավայրի տնտեսական գործունեության հիմնական բնագավառները՝ փաստված հնագիտական տվյալներով:

1. Երկրագործական ոռոգելի այս տարածքներում ավանդաբար շարունակվել է մշակվել Դվինի դեռևս վաղերկաթեդարի շերտերից հայտնի փափուկ ցորենն ու բազմաշարք գարին<sup>207</sup>: Արևեստագործական տարրեր ճյուղերի արտադրանքի ներկայությունը անտիկ շերտում հավաստում է, որ հատիկը ծեծել են ծակոտկեն որձաքարե խոշոր սանդեղում, աղացել են մակույկաձև ու լծակավոր աղորիքներով: Հացամթերքը (հացահատիկը, ձավարեղենը, ալյուրը) ամբարվել է փքուն իրանով տարողունակ կարասներում, որոնց նստուկին, հաճախ նաև կողերի վրա առկա անցքերը (տր.՝ 1 սմ) և կավե սվաղը (հաստ.՝ 5÷6 մմ) ապահովել են մթերքի պահպանման համար կայուն օդային ռեժիմ: Մննդամթերքի համար որպես տարա օգտագործվել են նստուկին անցք ունեցող խոշոր կճուճները: Հացը թխել են թոնիրում ու, հավանաբար, սաճերով՝ օջախի վրա:
2. Վերամշակվել են սնունդ, թելանյութ, ճրագալույս ապահովող հնագույն ձիթատու բուսատեսակներ: Միջնաբերդում բացված անտիկ ժամանակաշրջանի բնակելի-տնտեսական շինության խոհանոց-շտեմարանում գլանաձև խեցանոթի խոշոր բեկորներից<sup>208</sup> մեկի մեջ

<sup>205</sup> Կասկածից վեր է, որ թվարկած ճարտարապետական տարրերի զգալի մասը պատկանել է Դվին ամրոց-սրբավայրի շինություններին:

<sup>206</sup> Հիշյալ բոլոր դրամները պատահաբար հայտնաբերվել են Դվին ամրոցին հարակից ներկայիս գյուղերի՝ Վերին Արտաշատի և Ներքին Դվինի տարածքում. վերաբերում են հուշարձանի նախախտարովյան շրջանին [տես Мухомов 1962, 10–11, 107–108; Ղաֆադարյան 1982, 35]:

<sup>207</sup> Лисицына, Прищепенко 1977, 71.

<sup>208</sup> Գլանաձև անոթի ամենախոշոր բեկորի երկ.՝ 32սմ:

պահպանված կանեփի հատիկները<sup>209</sup>, հարևանությամբ հայտնաբերված խեցամանի ամբողջովին մրապատ, հաստ նստուկը և որձաքարե հավանգը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կանեփի հատիկները բովել են, ծեծել հավանգում և լցրել եփվող կերակուրի մեջ (աղ.13,<sup>8</sup>, 26,<sup>8</sup>, 30,<sup>6</sup>): Ընդ որում՝ կանեփի հատիկները և թե յուղը մշտապես առօրյա լայն գործածություն են ունեցել Արարատյան հովտի բնակավայրերում, իսկ սանդերը, աղորիքները, թմբիկավոր եգրաշորթով քարե տաշտերը մշտապես կիրառվել են նաև ձիթատու որոշ բուսատեսակների վերամշակման համար<sup>210</sup>:

Դվին ամրոց-սրբավայրի մերձակայքում հայտնաբերված անտիկ ժամանակի որձաքարե տարապանի վրա, ըստ ազգագրական համեմատական տվյալների, հնարավոր էր քարե հատուկ ճգմիչներով տգկանեփի հատիկի վերամշակումը<sup>211</sup>: Արդեն ճգմված հատիկի զանգվածի վրա լցվում էր տաք ջուր, «որի ազդեցությամբ ձեթը հավաքվում էր ջրի մակերեսին», ինչպես ընդունված է եղել, ստացված ձեթը առավելապես օգտագործվել է որպես լուսածին<sup>212</sup>: Հայտնաբերված բազմազան ձիթաճրագների տեսականին ևս հավաստում է անտիկ Դվինում ճրագալույս ապահովող ձիթագործության ավանդական մշակույթի առկայության մասին (աղ. 12,<sup>6</sup>, 13,<sup>5</sup>, 16,<sup>3</sup>, 27,<sup>8,12</sup>):

3. Հնաբուսաբանական և հնագիտական տվյալներով հաստատված՝ Դվինի վաղերկաթեդարի շերտում խաղողի որթի այրված մնացորդները և գինու վիթխարի կարասները, ավելի ուշ՝ անտիկ շերտում խաղող էտելու կորաշեղք դասակները, գինու մեծաքանակ տարան (տափաշիշ, կարաս), բերանի երեքնուկաձև բացվածքով, եռաշորթ կամ գլանաձև ծորակով սափորները, ընկանակ-զավաթները, ինչպես նաև շրջակա տարածքում (Հնաբերդ, Վերին Արտաշատ, Քաղցրաշեն) տարապանների ու գուռերի առկայությունը խաղողագինեգործության ավանդական ճյուղի շարունակական զարգացման նյութական վկայություններն են<sup>213</sup>: Քննվող ժամանակի բնակավայրերում

<sup>209</sup> Հավելենք, որ արար ռոտիկանի VIII դ. պալատական համալիրին նախորդող՝ VII դ. մոխրառատ շերտում ցորենի, գարու, սխտորի կույտերի հետ մեկտեղ հայտնաբերվել է և կանեփ (ընդ որում՝ այդ սովոր մոխրաշերտը առաջացել է 640 թ. արարական արշավանքի ժամանակ մեծ հրդեհի հետևանքով) [տես Մ. Վահանյանի 1954 թ. դաշտային օրագիրը (պահվում է Դվինում), հմմտ. նաև Kalantarian 1996, 100]:

<sup>210</sup> Հմմտ. Հոբոսյան 2007, 30:

<sup>211</sup> Տես Քոչարյան 1991, 35–36, տախտ. XII, 6: Տգկանեփը «Հայաստանի հնագույն մշակաբույսերից է. մեծ քանակությամբ մշակվել է Արարատյան դաշտում» [Հոբոսյան 2007, 19]:

<sup>212</sup> Տես Հոբոսյան 2007, 19–20:

<sup>213</sup> Քոչարյան 1990, 101; Տարապաններ (երբեմն նաև շարժական ավազան-քարե գուռերով)

հայտնաբերված բոլորչի ակոսառվակով ու ծորանով սալաքար-տա-  
րապանները հաստատում են հումքի վերամշակման գործընթացի կա-  
տարելագործումը գինեգործության մշակույթի զարգացման մ. թ. ա. II  
– մ. թ. I դդ. շրջափուլում (աղ. 19, <sub>6,7</sub>): Քաղցուն առավելագույնս մզելու  
համար առագաստում ուղքերով արդեն տրորված խաղողի զանգվա-  
ծը ճզմվել է տարապանի վրա: Սրանից գատ, տարապանը իբրև մամ-  
լիչի հարթակ ծառայել է նաև չամիչից գինի պատրաստելու համար<sup>214</sup>:  
Զարգացած խաղողագինեգործական շրջաններում խաղողի մեծա-  
քանակ բերքի վերամշակման անհրաժեշտությամբ էր պայմանավոր-  
ված, բնակելի տների տնտեսական հարկաբաժնի հնձաններից գատ,  
այգեմիջյան կամ հումքի մերձակայքում գինու արտադրության կա-  
ռույցների առկայությունը (հմնտ. Արմավիրի ագարակատան հնձանը,  
Աշտարակի «Խոջաբաղերի» և «Մուղնու թառի» այգեմիջյան հնձան-  
ները և այլն)<sup>215</sup>: Հնագիտական պեղումներով բացահայտված այս  
իրողությունից ելնելով կարելի է ենթադրել, որ այստեղ ևս խաղողի  
մեծաքանակ բերքի վերամշակման գործընթացը կազմակերպվել է  
անմիջապես հումքի մերձակայքում և ապա՝ տեղափոխվել ու պահես-  
տավորվել Դվին ամրոցի շտեմարաններում և գինու մառաններում:

Բազմիցս վավերացվել են գինու պահեստավորման և տեղափոխման  
համար նախատեսված Դվինի տափաշների քանակական բացարձակ  
մեծամասնությունը, ձևի կայունությունը, հարդարման ընդհանրու-  
թյունը, բարձր որակը (կարծր խեցի, փայլեցված, գունեղ արտաքին),  
տարողությունների նույնաչափությունը (մոտ 17÷20 լ): Թվարկված  
կայուն չափանիշները բավարար հիմք են տալիս պնդելու, որ տա-  
փաշների արտադրությունը, տնտեսության ներքին պահանջները բա-  
վարարելուց գատ, ունեցել է նաև ապրանքային բնույթ: Սա գինեգոր-  
ծական տեղական արտադրանքի զգալի ծավալների և այն քննվող  
տարայով շրջանառության մեջ դնելու վկայություն է (աղ. 11,<sub>1,2</sub>, 19,<sub>1,2,5</sub>):

4. Հնակենդանաբանական նյութի ուսումնասիրությամբ վերականգնվում  
է այստեղ բուծվող ընտանի կենդանիների կազմը (ցուլ/կով, ոչխար,  
այծ, խոզ, ձի, թռչուններ)<sup>216</sup>: Այսօրինակ իրողություն վկայված է դեռևս  
մ. թ. ա. IV դարում Քսենոփոնի «Անաբասիսում»՝ «հայկական տներում

հայտնաբերվել են նաև Արմավիրում, Արտաշատում, Զվարթնոցում, Այգեշատում, Շա-  
միրանում, Ապարանում և այլուր [Թումանյան 2008, 29–30, 33–34]; տես նաև Փալանջյան  
2023, 58–61:

<sup>214</sup> Փալանջյան 2023, 61–62:

<sup>215</sup> Տիրացյան, Կարապետյան 1979, 251–255; հմնտ. նաև Թումանյան 2008, 31–33:

<sup>216</sup> Манасерян, Мирзоян 2005, 202–203.

կային այծեր, ոչխարներ, եզներ, հավեր և սրանց ձագերը»<sup>217</sup>: Ավանդաբար պահպանված ընտանի կենդանիների որոշակի կազմի բուծման բնականոն շարունակական ընթացքը և անասնամթերքի (կաթ, բուրդ, կաշի, միս) վերամշակման միջոցները (ծորակավոր կաթնամաններ, ձձում, խմորի լայնաբերան, խոր տաշտեր, դանակներ, հերյուններ) ուրվագծում են բնակչության ներքին պահանջները բավարարող՝ սննդամթերք և արհեստագործական հումք մատակարարող անասնապահության պատկերը:

Այսպիսով, հնագիտական սուղ նյութի տեղեկատվության պայմաններում անգամ ակնհայտ է դառնում բնակչության կենսապահովման հիմնական բնագավառների՝ երկրագործության և անասնապահության ավանդական եղանակների զարգացման շարունակական ընթացքը:

*Տնտեսությունը վարելուն անհրաժեշտ արհեստագործական բնույթի տեսականի՝ խեցանոթներ, քարե սարք-հարմարանքներ, մեքսաղե իրեր և այլն*

Հայտնաբերված խեցանոթները, ի բացառյալ մի քանի ամբողջական նմուշների, թեև թերի են, կոտրված, բեկորային վիճակում (շուրթեր, պսակներ, նստուկներ և այլն), սակայն համեմատվելով համաժամանակյա աղերսների հետ՝ ներկայացվում են (հնարավորության սահմաններում) «վերականգնված» ամբողջական տեսքով:

Ա. Հացամթերք, գինի ամբարելու համար օգտագործվել են *կարասներ* (զանգվածեղ պսակով բերանի բացվածք, ներճկված կամ ուղղաձիգ վիզ, փքուն իրան, տափակ կամ կրունկանման նստուկ. դեղնավուն, բաց դարչնագույն, վարդագույն, մի քանիսի շուրթը, վիզը, ուսամասը օղակող փորագիր կամ ուռուցիկ հյուսածո, ոլորուն կամ կլոր փոսիկների գոտեգարդ)<sup>218</sup>. ըստ հայտնաբերման հանգամանքների՝ գինու կարասները կիսով չափ թաղված են եղել շտեմարանի պատերի երկայնքով՝ հողե հատակի մեջ, իսկ մյուսների նստուկին, հաճախ նաև կողերի վրա առկա անցքերը (տր.՝ 1 սմ) և կավե սվաղը (հաստ.՝ 5÷6 մմ) ապահովել են կարասներում հացամթերքի պահպանման համար կայուն օդային ռեժիմ (աղ.13,<sub>2,3</sub>, 15,<sub>3</sub>, 16,<sub>5</sub>, 26,<sub>1</sub>, 29,<sub>10,12-15</sub>, 30,<sub>5</sub>):

Բ. Սննդամթերքի համար որպես տարա օգտագործվել են տարբեր չափերի *կճուճներ* (բոլորակ պսակ, շեփորանման բերանի բացվածք, ու-

<sup>217</sup> Քսենոփոն 1970, 97 (IV, V, 25):

<sup>218</sup> Կարասների բերանի բացվածքի (այսուհետև՝ բ.բ.) տր.՝ 30÷50սմ, վզի երկ.՝ 3,5÷4,5սմ, նստուկի տր.՝ 12÷24սմ, բարձր.՝ 110÷120սմ:

ռուցիկ կամ ձվածիր, գլանաձև իրան, նստուկին՝ անցք. մոխրագույն, գորշ, դարչնագույն անոթներից մի քանիսը թեթևակի ներկված առավել վառ՝ կարմիր, դեղին, նարնջագույն, շագանակագույն, բարձր վիզը կամ ուսամասը բոլորող ակոսագիծ կամ ուռուցիկ նեղ գոտի): Կերակուր եփելու համար գործածվել են ներս կորացող շրթնամասով, փքուն, ցածրադիր իրանով, մրապատ, միջին չափի կճուճները, իսկ որպես սեղանի սպասք՝ գունազարդ, լայնաբերան կճուճներն ու պուլիկները (հարդարված ցանցկեն, ներգծված եռանկյունիների, ծաղկաշղթաների, զիգզագների, ոլորագիծ բոլորագոտիներով)<sup>219</sup>: Կճուճների բերանի բացվածքին համապատասխանում են ուռուցիկ վերնամասով, եզրաշուրթը ակոսագիծ կամ թեթևակի ներճկված, նեղ գոտիով բոլորված, դարչնագույն, մոխրագույն, սկավառակաձև խուփերը (տր.՝ 15÷30 սմ) (աղ. 11,<sup>4,6</sup> 12,<sup>5</sup>, 16,<sup>4,6</sup>, 19,<sup>4</sup>, 26,<sup>2</sup>, 27,<sup>1,2,5,7,9-11</sup>, 28,<sup>3</sup>, 29,<sup>1-9,11</sup>, 30,<sup>1-4</sup>): Առօրյա, մշտապես գործածվող *ձնամ-կճուճիկների* առկայության մասին է վկայում անոթի՝ դեպի վեր լայնացող կողով, տափակ նստուկով, ներքին մակերեսը հասվող խոր ակոսագծերով պատված, բաց դարչնագույն բեկորը (բարձր.՝ 9 սմ):

Գ. Գինու պահեստավորման և տեղափոխման համար գործածվել են *տափաշները* (բոլորակ պսակով բերանի բացվածք, կարճ վիզ, երկկանթ, սկավառակաձև, փքուն իրան. բաց դարչնագույն, նարնջագույն, վարդագույն, դեղին հիմնագույնի վրա՝ կարմիր, շագանակագույն, սև համակենտրոն շրջանագծեր. կարծր խեցի, փայլեցված, գունեղ արտաքին, տարողությունը մոտ 17÷20 լ)<sup>220</sup>, սրանց որոշ բեկորների վրա առկա է գինու պահպանումն ապահովող արտաքին կավե սվաղ (հաստ.՝ 5÷6 մմ): Ինքնատիպ գունազարդմամբ բացառություն են կազմում կարիճի դարչնաշագանակագույն ոճավորված պատկերով, թռչնազարդ, կիսաշրջանների, զիգզագների, շեղանկյունիների մեջ ներգծված ռոմբերով հարդարված խեցաբեկորները (աղ. 11,<sup>1,2</sup> 12,<sup>2</sup>, 14,<sup>4</sup>, 16,<sup>1</sup>, 18, 19,<sup>1,2,3,5</sup>, 26,<sup>5,6</sup>, 27,<sup>3,4,6</sup>):

Բ. Ջրի, կաթի, գինու համար գործածվել են *սափորներ* (բերանի երեք-նուկաձև բացվածքով միականթ օյնոխոյաներ, կլորավուն շրթի տակ կամ սրա հետ ձևավորված եռաշուրթ կամ գլանաձև ծորակով անոթներ. դարչնագույն, մոխրագույն դեղին հիմնագույնը թեթևակի ներկված կարմիր, նարնջագույն)<sup>221</sup>, սրանցից մեկի վերնամասը գունա-

<sup>219</sup> Կճուճների բ. բ. տր.՝ 6÷30 սմ, վզի երկ.՝ 1,5÷4 սմ, նստ. տր.՝ 6÷17 սմ, բարձր.՝ 11,5÷40,5 սմ:

<sup>220</sup> Տափաշների բ. բ. տր.՝ 7÷8 սմ, վզի երկ.՝ 1÷3 սմ, իրանի չափերը՝ 40×40 սմ, 44×46 սմ:

<sup>221</sup> Օյնոխոյաների բ. բ.՝ 6,5×6 սմ, 8× սմ, վզի երկ.՝ 2,5÷4,5 սմ, ծորակավոր սափորների բ. բ.

զարդված է մուգ շագանակագույն ցանցկեն գոտիով (աղ. 11,<sub>3</sub>, 14,<sub>1</sub>, 16,<sub>2</sub>, 23,<sub>2,6</sub> 28,<sub>1,2</sub>):

Ե. Կիրառական նշանակությամբ ծորակավոր անոթներին առնչվում են ըմպանակները (թեթևակի դուրս հակված նուրբ շուրթով բերանի բացվածք, ուղղաձիգ բարձր վիզ, կիսազնդաձև իրան՝ բաց և մուգ մոխրագույն, դարչնագույն, կարմիր, սևաթույր, իսկ վերնամասերը առավել վառ ներկված կամ գունազարդված՝ կարմիր կեռագիծ, ալիքանման ժապավեններով, վզից իրան անցումը բոլորված շագանակագույն նեղ գոտիով): Առկա են նաև մատնեքազարդ իրանով և դուրս ճկված վարդյակազարդ նստուկով ըմպանակների բեկորներ<sup>222</sup> (աղ. 11,<sub>5</sub>, 12,<sub>1</sub>, 23,<sub>1,7</sub>, 26,<sub>3,4</sub>, 28,<sub>4</sub>): Ըմպանակների հետ մեկտեղ օգտագործվել են նաև (հատկապես Արմավիրի խեցեգործական արտադրանքին բնորոշ) թեթևակի ներս հակված, նուրբ շրթի տակ ներգծված կիսաշրջանների սև գոտեզարդով՝ թանձր կարմիր, կիսազնդաձև թասազավաթներ (բ. բ. տր.՝ 13 սմ):

Զ. Բազմազան են թասերն ու քրեղանները<sup>223</sup> (դուրս հակված թմբիկավոր կամ ծավված, հորիզոնական կամ թեք կտրված շուրթ, ներճկված վիզ, կլորավուն իրան, տափակ, հարթ նստուկ, ներս հակված նուրբ, բարակ կամ հարթ կտրված հորիզոնական շուրթ, կլորավուն կողեր, տափակ կամ թեթևակի ներճկված նստուկ, թույլ արտահայտված օղակավոր կամ դուրս ճկված վարդյակազարդ նստուկ), սրանք դեղին, դարչնագույն, շագանակագույն, վարդագույն, կարմիր, մոխրագույն են, իսկ առավել մուգ և ցայտուն գույներով են հարդարված վերնամասը, իրանը՝ ներքուստ կամ արտաքուստ: Որոշ թասեր գունազարդված են, օրինակ՝ վզից իրան անցումը բոլորված է կարմիր նեղ ժապավենով, իսկ հատակին կարմիր խաչազարդ կամ շագանակագույն տերևազարդ պատկերներ են և այլն: Առկա է ներս հակված շուրթով, կորավուն իրանով թաս-պնակի դարչնագույն բեկոր՝ ներսից բոլորված շագանակագույն շրջանագծով և գույզ ալիքանման ժապավենազարդով, հատակին՝ ծաղկաթերթիկների պատկեր (աղ. 12,<sub>3,4</sub>, 23,<sub>3-5</sub>, 28,<sub>6-16</sub>, 31,<sub>1-17</sub>):

Է. Տնտեսության մեջ օգտագործվել են խոշոր *փաշտեր* (տափակ նստուկ, աստիճանաբար լայնացող իրան, դուրս հակված կլորավուն

տր.՝ 10÷22սմ, ծորակի երկ.՝ 2,5÷4,5սմ:

<sup>222</sup> Ըմպանակների բ. բ. տր.՝ 10÷18սմ, վզի երկ.՝ 2,6÷4,5սմ, բարձր.՝ 4,5÷7,0սմ:

<sup>223</sup> Թասերի, քրեղանների բ. բ. տր.՝ 12÷30սմ, վզի երկ.՝ 1,4÷4,2սմ, նստ. տր.՝ 6÷14սմ, բարձր.՝ 5÷7,5սմ: Հմմտ. վաղ մ. թ. ա. VI–IV դդ. նմուշները [Կարապետյան 2003, 38–39, աղ. 24, 25]:

շրթի տակ մեկ-երկու ներճկված նեղ բոլորագոտի. դեղնավուն, դարչնագույն հիմնագույնը թեթևակի ներկված բաց վարդագույն կամ նարնջագույն)<sup>224</sup>:

Ը. Առանձնանում են շեշտակի դուրս հակված, փոված, լայն շրթնամասով, դարչնագույնի վրա վառ կարմիր ներգծված կիսաշրջանների զարդագոտիով *սկուրեղը* (15,<sub>2</sub>) և *աղամանը* (բարակ եզրաշուրթ, բերանի լայն բացվածք, կարճ կող, հաստ, տափակ նստուկ) մուգ մոխրագույն՝ սևաթույր երանգով<sup>225</sup>:

Թ. Առկա են *սկահակ-ճրագներ* (սկահ, դեպի ցած աստիճանաբար լայնացող, փոված եզր ու կոնաձև փոսվածք ունեցող բարձր ոտք-նստուկ. մուգ մոխրագույն, դեղին, դարչնագույն, նարնջագույն՝ թեթևակի կարմիր երանգով)<sup>226</sup>, *թաս-ճրագներ* (ձևավորված քթիկ, կարճ կողեր, լայն, տափակ նստուկ) և *նավականման ճրագներ* (ձգված քթամաս, կորավուն նստուկ)<sup>227</sup>. գորշերանգ, բաց և մուգ մոխրագույն, դարչնագույն (աղ.12,<sub>6</sub>, 13,<sub>5</sub>, 16,<sub>3</sub>, 27,<sub>8,12</sub>, 28,<sub>5</sub>):

Ճ. Կավե շաղախով սվաղված հատակի մեջ բացված, առօրյա գործածության՝ խնամքով պատրաստված (ակով) փոքր *թոնրից* զատ կան թոնիրների՝ հարդաշաղախ կավով ծեփված ուղղաձիգ, հաստ պատեր, ինչպես նաև *շարժական օջախ-կրակարանների*՝ կլորավուն կամ հարթ հորիզոնական կտրված եզրաշուրթով կողապատերի ու տափակ նստուկների՝ կրակից նարնջագույն դարձած (բաց դարչնագույն, մոխրագույն, գորշագույն) բեկորներ <sup>228</sup>:

Ներկայացված խեցեղենի տեսականուց զատվում է կարասի՝ կարմիր, կոկված ու փայլեցված *ցլագլուխ կանթը* (եղջյուրներից մեկը բացակայում է, ճակատին դեղնավուն սեպաձև նշան է, ցայտուն արտահայտված են թխագույն, կլոր պուտերով ուռուցիկ աչքերը, քթի անցք-խոռոչները, ուղիղ գծով ակոսված բերանը)<sup>229</sup> (աղ.15,<sub>1</sub>): Սա համալրում է Դվինից արդեն հայտնի համաժամանակյա ցլագլուխ կանթերի խումբը<sup>230</sup>: Ըստ հին հավատալիքների՝

<sup>224</sup> Տաշտերի բ. բ. տր.՝ 40÷50սմ, նստ. տր.՝ 16սմ, բարձր.՝ 20սմ: Հմմտ. Քոչարյան 1991, տախտ. XVI, 5:

<sup>225</sup> Աղամանի բ. բ. տր.՝ 6սմ, նստ. տր.՝ 5սմ, բարձր.՝ 2,5սմ:

<sup>226</sup> Սկահակ-ճրագների ոտք-նստուկի տր.՝ 5÷8սմ, բարձր.՝ 2,5÷4սմ:

<sup>227</sup> Ճրագների բ. բ. տր.՝ 7÷12×10÷13սմ, նստուկի տր.՝ 7÷8սմ, անոթի բարձր.՝ 2,5÷5սմ:

<sup>228</sup> Թոնրի տր.՝ 35սմ, բարձր.՝ 50սմ, կողի հաստ.՝ 1,2÷2սմ, շարժական կրակարանի բարձր.՝ 7սմ, կողի հաստ.՝ 1,7÷4սմ:

<sup>229</sup> Ցլագլուխ կանթի չափերն են՝ 6,0×4,5×1,5սմ:

<sup>230</sup> Հմմտ. Քոչարյան, 1991, 41–42:

երկնային ցուլը (հմնտ. ցուլ-եղջյուրներ-լուսին-երկինք իմաստաբանական շարքը) խոնավության աղբյուր էր՝ օժտված բեղմնավորման, արգասավորության-պտղաբերության գործությամբ: Այս ըմբռնումները ակնհայտ են Դվինի դեռևս վաղերկաթեդարյան պաշտամունքային համալիրում՝ սրբազան գոհարանների և ցլագլուխ կանթերով ծիսական խեցանոթների պատկերագրության հորինվածքներում<sup>231</sup>: Բնապաշտական հավատալիքների ավանդականության դրսևորումներով պայմանավորված կարելի է ենթադրել, որ անտիկ Դվինում շարունակվել են տեղի բնակչության տնտեսական գործունեության հետ սերտորեն առնչվող ծիսապաշտամունքային արարողությունները՝ ձևված երկրագործության հովանավոր աստվածությանը՝ առատ բերքի ու բարիքի, կենդանիների բեղմնավորման ու բազմացման և նման այլ աղերսներով:

Արտաշիայան ժամանակաշրջանի խեցեղենի օրգանական մասը կազմող Դվինի քննվող տեսականին՝ ըստ ոճական դրսևորումների (հիմնական ձևերի՝ կարաս, կճուճ, տափաշիշ, երեքնուկաձև ծորակով սափոր, օյնոխոյա, տաշտ, թաս, ըմպանակ, պնակ, սկուտեղ, գավաթ, ճրագ և հարդարանքի՝ միագույն, բազմագույն, գունազարդ, փորագիր կամ ուռուցիկ գոտեզարդ, ճկված վարդյակազարդ) սերտորեն աղերսվում է Հին Հայաստանի հնավայրերի (Արմավիրի, Արտաշատի, Գառնիի, Մոխրաբլուրի, Ավանի, Երվանդաշատի, Արցախի՝ Տիգրանակերտի և այլն)<sup>232</sup> մ.թ.ա. II-մ.թ. I դդ. խեցեգործական արտադրանքին: Այստեղ գրեթե բացակայում են Արմավիրի, Արտաշատի, Տիգրանակերտի քաղաքային տեսականուն հատկանշական ներմուծված խեցանոթներ և սրանց ընդօրինակումները<sup>233</sup>: Այսուհանդերձ, Դվինի հավաքածուն, ձևաբանորեն, զարդապատկերների (երկրաչափական, բուսական, կենդանական) բնույթով, գունապնակով (դեղին-նարնջագույն, դարչնագույն-շագանակագույն, վարդագույն-կարմիր) և բազմերանգ փայլեցումով, արտահայտում է տվյալ ժամանակաշրջանին բնորոշ, մշակութային համակարգով պայմանավորված գեղագիտական որոշակի հայեցողություն, ճաշակ:

Դվինի բազմատեսակ խեցեղենի որակական ու ոճական ընդհանրությունը, գունազարդման եզակի, ինքնատիպ լուծումները (օրինակ՝ թասի հատակին ծաղիկի կամ տափաշի վրա կարիճի ոճավորված պատկերներ

<sup>231</sup> Տեն Кушнарева 1977, 50 և հաջորդ էջերը:

<sup>232</sup> Тирациян 1988a, 118-121, 124-134; Քոչարյան 2008, 161-162, 164-166; Демирханян 2010, 14-31; Պարսամյան 2015, 103-110; Գաբրիելյան 2017, 380-381, աղ. I, աղ. II:

<sup>233</sup> Հմնտ. Զարդարյան 1977, 27-28; Գաբրիելյան 2020, 10-11:

և այլն) հավաստում են խեցեգործության տեղական արտադրության փաստը: Իրավամբ, Դվինի հավաքածուն ներկայանում է խեցանոթների կայուն և հստակ ձևերով, անոթի տարբեր հատվածների ձևավորումով, համամասնությամբ և սահուն անցումներով, ձևերի ստույգ կրկնություններով, մի ձևի զանազան չափերի տարատեսակներով, հարդարման համաչափ ու ներդաշնակ լուծումներով:

Խեցեգործական արտադրանքը, հնագիտական գտածոների հավաքածուի մեջ կազմելով բացարձակ մեծամասնություն, ներկայանում է խաթարված անտիկ մշակութային շերտի թվագրման կարևորագույն կովան:

Աշխատված, փայլող հարթ մակերեսով, վերին մասում բռնելու փոսիկներով, կլորավուն գետաքարե ծանր *կոկիչը* (5×5 սմ)՝ խեցանոթի մակերեսը հարթող, հղկող իր նշանակությամբ անմիջականորեն առնչվում է անտիկ շերտում (դեռևս անցյալ տարիներին) հայտնաբերված *դուրգի անիվի* քարե և կավե սկավառակներին<sup>234</sup> (աղ.14,<sub>2,3</sub>): Պահպանվել են դուրգի անիվի սկավառակների սոսկ ստորին գլանաձև մասերը՝ կոնաձև ակոսով: Ընդ որում՝ կոկիչն ու դուրգի կավե սկավառակը հայտնաբերվել են միջնաբերդի «արևմտյան պեղավայրում» բացված անտիկ մեծ շինության տնտեսական հարկաբաժնում: Դուրգի անիվի առկայությունը ապահովել է տեղում առօրյա գործածության առաջին անհրաժեշտության խեցանոթների արտադրությունը:

Խեցեղեն սպասքի հետ մեկտեղ հայտնաբերվել են նաև *պորփյորիտե սկահակների*՝ լայն, գրեթե հորիզոնական շրթնամասեր, որոնցից մեկը մուգ մոխրագույն է՝ կանաչ ցայտերով, մյուսը՝ մուգ կանաչ՝ բաց կանաչ ցայտերով (բ. բ. տր.՝ 17 սմ, 25 սմ) (աղ. 12,<sub>7</sub>): Ընդ որում՝ պորփյորիտե սկահակների բեկորներ Արտաշատում «հայտնաբերվել են բոլոր պեղված (I, II, VII, VIII) բլուրների մ. թ. ա. II–I դդ. շերտերում»<sup>235</sup>:

Հայտնաբերվել է նաև մուգ դարչնագույն, հաստ *սպակե թասի* ցածրադիր օղակավոր ոտք-ստուկ՝ վրան թույլ ներճկված վարդյակի թերթիկների զարդապատկեր (նստ. տր.՝ 6 սմ, բարձր.՝ 8 սմ) (աղ. 13,<sub>6</sub>): Սա հարում է Արտաշատի, քարե կաղապարի ու սառը հղկման միջոցով պատրաստված, մ. թ. ա. II–մ. թ. I դդ. կեսերի տեղական արտադրության թասերի խմբին<sup>236</sup>:

Կարասների կողքին հաճախ հայտնաբերվում են ծակոտկեն որձաքարե, ավանդական *մակույկաձև* և ժամանակին բնորոշ՝ լծակն ազուցելու երկայ-

<sup>234</sup> Տե՛ս Քոչարյան 1991, 38–40:

<sup>235</sup> Խաչատրյան, Կանեցյան 1974, 79:

<sup>236</sup> Հմմտ. Хачатрян 1975, 256–258:

նակի ակոսառվակ ունեցող լծակավոր աղորիքներ<sup>237</sup> (աղ.13,<sub>7</sub>, 26,<sub>7,11-13,9-10</sub>): Երկայնակի կամ լայնակի գոգավորություն ունեն վերին՝ ձվածիր և ստորին՝ քառանկյուն, զանգվածեղ սալերը: Առկա են նաև որձաքարե հավանգ (բերանի լայն բացվածքն օղակող հորիզոնական, հարթ հատված շուրթ, կարճ, կորավուն կողեր, լայն, տափակ նստուկ)<sup>238</sup> և թմբիկավոր եզրաշուրթով քարե տաշտի բեկոր (աղ. 13,<sub>8</sub>, 26,<sub>8</sub>, 17):

Միջին չափի գետաքարերով եզերված, երկայնակի կիսված կարաս-օջախի մոտակայքում են հայտնաբերվել թերի, կոտրված դանակների երկաթե (2) միասայր՝ կոր և (1) երկասայր՝ ուղիղ շեղբերը և քարե քառակող հեռանների բեկորները: Նույնախի երկու շեղբ ու դաստապան հայտնաբերվել է նաև հատակի մեջ կիսով չափ թաղված զանգվածեղ կարասի և գունազարդ տափաշների միջավայրում<sup>239</sup> (աղ.13,<sub>9</sub>): Մ.թ.ա. I հազարամյակի սկզբից ի վեր հայտնի սմանօրինակ դանակներ քննվող ժամանակաշրջանում ևս լայնորեն գործածվել են կենցաղում, ընդ որում՝ կարճ դաստակով, խոշոր, կորաշեղբ դանակներն օգտագործվել են հատկապես այգեգործության բնագավառում<sup>240</sup>: Մետաղե իրերի (դանակներ, պայտեր, մեխեր և այլն) սակավ քանակն անգամ հուշում է այստեղ դարբնոցի հավանական գոյության մասին:

Ըստ ունեցած տվյալների՝ ակնհայտ է դառնում Դվին ամրոց-սրբավայրի և հարակից բնակավայրերի տնտեսության և կենցաղի շարունակական զարգացման համընդհանուր պատկերը:

1. Ներկայացված բազմաբնույթ հնագիտական գտածոների քննությանը բացահայտվում է. ա) տնտեսավարման որոշակի խեցանոթների արտադրության միջոցներ (դուրգի անիվ, կոկիչ), բ) սննդամթերք վերամշակելու միջոցներ (աղորիք, սանդ, հավանգ, տաշտ, ձնու, թոնիր, օջախ, դանակ), գ) սննդամթերք պահելու ու տեղափոխելու տարա (կարաս, կճուճ, տափաշիշ), դ) կենցաղային գործածության սեղանի ու խոհանոցային գունազարդ և հասարակ խեցեղեն, պորփյուրիտե և ապակե սպասքի նմուշներ (սկահակ, սափոր, ըմպանակ, գավաթ, պուրիկ, թաս, պնակ, աղաման և այլն):

<sup>237</sup> Մակույկաձև աղորիքների վերին սալը՝ 27×10÷17×5÷9,5սմ, ստորին սալը՝ 28×7×7սմ, լծակավոր աղորիքների վերին սալի լայն.՝ 20÷25սմ, ակոսի լայն.՝ 3սմ, խոր.՝ 3,5սմ, ստորին սալի լայն.՝ 24÷25,5սմ, բարձր.՝ 5÷8սմ:

<sup>238</sup> Որձաքարե հավանգի բ. բ. տր.՝ 9սմ, նստ. տր.՝ 12սմ, բարձր.՝ 4,5սմ, խոր.՝ 2սմ:

<sup>239</sup> Երկաթե դանակների կոր շեղբերի երկ.՝ 12÷20սմ, լայն.՝ 4÷6սմ (5սմ երկ. դաստապանի վրա կա անցք), ուղիղ շեղբերի երկ.՝ 4,5÷10սմ, լայն.՝ 3,7÷5սմ:

<sup>240</sup> Հմմտ. Զինջիրյան 1978, 268:

2. Պեղված բնակելի շինություններում օրգանական մնացորդների սակավության պարագայում անգամ, ըստ գործառույթի տարբերակված խեցեղեն արտադրանքը, քարե սարք-հարմարանքները, երկաթե դանակները ի հայտ են բերում կենսապահովման գյուղատնտեսական ավանդական ճյուղերի՝ հացատու և յուղատու բուսատեսակների մշակության, խաղողագիներգործության, անասնապահության և թռչնաբուծության հիմնական բնագավառները: Նույնը հավաստում են բլրի մերձակա տնտեսական տարածքում հայտնաբերված մ.թ.ա. II-մ.թ. I դդ. տարատեսակ տարապանները, ունկավոր խոշոր սանդերը, ինչպես նաև ըստ հնակենդանաբանական հետազոտությունների տվյալների՝ այստեղ բուծվող ընտանի կենդանիների կազմը:
3. Բնակելի կառույցներում արտադրական բնույթի հատուկ բաժանմունքների բացակայությունը վկայում է, որ գյուղմթերքի որոշ տեսակներ վերամշակված վիճակում են տեղափոխվել և պահեստավորվել շտեմարաններում: Ընդ որում՝ բացահայտված «կիսաբաց» խեցանոթները (տափաշները, կարասները, կճուճները) կրկնակի անգամ գերազանցում են «բաց» անոթների քանակը: Հանգամանք, որ բնորոշ է իր շուրջը տարածքային և տնտեսական կապերով միավորած գյուղական համայնքների վարչատնտեսական գործառույթ իրականացնող Դվին ամրոց-սրբավայր կենտրոնին<sup>241</sup>:
4. Միջնադարյան հազարամյա շերտի տակ աղճատված անտիկ կառույցների հատվածական ուսումնասիրությունը դժվարացնում է սրանց գործառնական բնույթի լիարժեք բացահայտումը: Այսուհանդերձ, ըստ տեղադրության, շինարարական մշակույթի, մասամբ և հնագիտական նյութերի զուգորդման՝ ենթադրվում է, որ գազաթի արևմտյան հատվածի՝ ճյուղավորված, ներքին բաժանմունքներով մեծ շինությունը որոշակի հասարակական՝ հավանորեն վարչատնտեսական դեր է կատարել ամրոց-սրբավայրի և հարակից բնակավայրերի համար: Ընդ որում՝ տվյալ շինությունը նույն հատակագծով վերակառուցվել է վաղ միջնադարում՝ դառնալով, թերևս, Խոսրովաշեն առաջին կառույցներից մեկը:
5. Դվին վարչատնտեսական կենտրոնի հովանավորությամբ՝ համայնական հողատարածքներում ճիշտ կազմակերպված տնտեսությունը

<sup>241</sup> Հմմտ. Սևանա լճի հարավային ավազանի խեցեղենի վիճակագրական տվյալները, որոնք փաստում են գյուղմթերքի մշակման և օգտագործման «բաց» անոթների գերակշիռ քանակ «շարքային» բնակավայրերում, իսկ պահեստավորման ու տեղափոխման «կիսաբաց» անոթների բազմաքանակություն՝ ամրոց-կենտրոններում [Հակոբյան 2002, 59]:

հողից առավելագույն եկամուտ էր ապահովում, առատորեն գյուղմթերք սպասարկում մայրաքաղաքին, նպաստում խորայի բազմաճյուղ գյուղատնտեսության զարգացման-բարգավաճման գործընթացին: Այսպես՝ խաղողագինեգործության զարգացման բարձր մակարդակը երաշխավորել է Դվինի և կից բնակավայրերի հավանական մասնակցությունը (հատուկ ապրանքափոխադրական տարայով՝ որպիսին տափաշիշն էր<sup>242</sup>) գինու արտահանմանը միջազգային շուկա՝ տարանցիկ առևտրի ուղիների խաչմերուկում գինու առքուվաճառքով զբաղվող խոշորագույն կենտրոնի՝ Արտաշատի<sup>243</sup> միջնորդությամբ: Քաղաքային կենցաղին բնորոշ բարձրաժեք սպասքի (պորփյուրիտե սկահակներ, ջնարակած խեցեղեն), օժանելիք-քսանյութերի հատուկ սրվակների, պերճանքի առարկաների և որոշ դրամների առկայությունը բացահայտում է ագրարաանասնապահական տնտեսություն վարող խորայի՝ տվյալ դեպքում Դվին միկրոշրջանի շուկայական շփումները մայրաքաղաքի հետ:

*Այսպիսով*, քաղաք-գյուղատնտեսական տարածք (այն է՝ խորա) գույգը, որպես վարչատնտեսական մի ամբողջություն, ընդգրկված էր կենտրոն-շրջապատ փոխկապակցված համակարգի մեջ: Պետական իշխանության հովանավորությամբ՝ քաղաք՝ կենտրոնը իրականացնում էր շրջակա տնտեսական տարածքի վերահսկողությունը, նպաստում որոշակի հեռավորության վրա գտնվող շարքային բնակավայրերի միավորմանն ու բնականոն արդյունավետ զարգացմանը: Այսպես՝ փոքրասիական անտիկ քաղաքի խորայում երեք-յոթ գյուղ կարող էին խմբավորվել և կազմել առանձին միություն, հաճախ նաև միավորվել որևէ աստծո հովանավորության ներքո՝ նրան ձոնված սրբավայրի շուրջը<sup>244</sup>: Աջակցելով բնակավայրերի այդօրինակ միավորումներին՝ քաղաքը պահպանում էր ամենակարևորը՝ համայնքի՝ հարկատու միավորի, ամբողջականությունը: Նման խումբ բնակավայրերի կառավարումը համակարգելու համար ծագում էր տեղական բազմագործառույթ կենտրոնի անհրաժեշտություն, որի միջնորդությամբ իրականացվում էին քաղաք-շրջապատ՝ աշխարհիկ և հոգևոր տարաբնույթ փոխառնչություն-

<sup>242</sup> Հմմտ. Тер-Мартиросов 1979, 411–414: Հավելենք, որ բացարձակ մեծամասնություն են կազմում Դվինի տափաշները, որոնք, ըստ կայուն չափանիշերի (որակ, ձև, հարդարանք, տարողությունների նույնաչափություն), բավարար հիմք են տալիս պնդելու, որ սրանց արտադրությունը, տնտեսության ներքին պահանջները բավարարելուց գատ ունեցել է նաև ապրանքային բնույթ:

<sup>243</sup> Хачатрян, Неверов 2008, 87–89.

<sup>244</sup> Հմմտ. Голубцова 1972, 135–136, 151–152:

ներ: Իրավամբ, Դվին ամրոց-արքավայրը բազմագործառույթ կենտրոնի իր կարգավիճակով է ներկայանում Արտաշատի տնտեսական տարածքում ընդգրկված (մայրաքաղաքից շուրջ 15–20 կմ հեռավորության վրա գտնվող) տվյալ շրջանի բնականոն զարգացման համապատկերում:

### Դվինի տարածքում հայտնաբերված կնիքը

Կենցաղում լայն կիրառություն ունեցող հմայիլ-կնիքների մի նմուշ է գտնվել դաշտային գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ՝ Դվին բլրին մերձակա Վերին Արտաշատ գյուղում: Այն կապույտ կիսաթափանց ապակուց ձուլված, ձիու պատկերով, թերի, կիսով չափ կտտրված բազմանիստ կնիք է (լայն.՝ 10 մմ, վերականգնված երկար.՝ մոտ 15 մմ, հաստ.՝ 7 մմ), ունի թելի վրա անցկացնելու երկայնական անցք (23,<sup>8-10</sup>):

Կնիքի ճակատային ուղղանկյուն մակերեսի վրա փորագրված է ձիու գլուխ, ձգված պարանոց, փքված կուրծք, միմյանց վրա պրոյեկտված առջևի բարձրացրած ոտքեր: Պատկերի թերի պահպանված մասը, իր պատկերագրական զուսպ արտահայտչամիջոցներով հանդերձ, թույլ է տալիս որոշակի վերապահությամբ փաստել վարգող ձիու պրկված մարմնի դինամիկ շարժում, ներքին լարում, տազնապ:

Կնիքն իր ընդհանուր բնութագրով (փոքր չափերի բազմանիստ, կապույտ ապակի, կենդանու ոճավորված պատկեր) վերաբերում է Հայաստանում և հարակից շրջաններում հայտնաբերված՝ մ.թ.ա. II–մ.թ. I դդ. թվագրվող ապակե բազմանիստ կնիքների խմբին<sup>245</sup>: Փոքրասիական բազմանիստ կնիքների շարքում, Ն. Մ. Նիկոլինայի գնահատմամբ, այս «արտակարգ ինքնատիպ» տարատեսակի ստեղծման համար հիմք են ծառայել «արմատական տեղական ավանդույթները»<sup>246</sup>:

Քննվող խմբին բնորոշ են կենդանիների և (հեծյալ-հետևակ, մարդ-կենդանի, կենդանի-կենդանի) մենամարտի ոչ խոր փորագրությամբ՝ ընդհանրացված, վերացարկված, ծայրահեղորեն պարզեցված ու պայմանական ոչ բնապաշտական պատկերներ: Սրանք իրենց արտահայտչամիջոցների ոճական և իմաստաբանական ընդհանրություններով պատկանում են բացառապես հմայիլ-կնիքների այն տարատեսակին, որոնք դրոշմիչ չեն և վավերացման գործառույթ չեն կատարել:

Կնիքները Հին Արևելքում մ.թ.ա. III հազարամյակից ի վեր ներգրավված էին «ծիսապաշտամունքային արարողությունների համակարգում»<sup>247</sup>:

<sup>245</sup> Խաչատրյան 1965, 274–276; Խաչատրյան 1974, 98, 102; Խնկիկյան 1981, 312–314, նկ. 3, 1; Гагошидзе 1982, 69–74; Есаян, Калантарян 1988, 52, 58, 65–66, табл. XLI, 6, XLII, 2, XLVII,<sup>11</sup>:

<sup>246</sup> Никулина 1969, 119.

<sup>247</sup> Փիլիպոսյան 1998, 86–91:

Ըստ հնագույն պատկերացումների՝ քարի տեսակին, գույնին, դրվագված պատկերին, «աղոթքի, օրհնանքի, մաղթանքի ու նվիրատվության» արձանագիր տեքստին վերագրվում էր աստվածային զորություն:

1. Վերլուծվող կնիքի կապույտ ապակին թերևս նույնացվել է կնքագործության մեջ լայնորեն տարածված լաջվարդին (լապիս-լազուր), որին վերագրվում էր հիվանդություններից ու ցավերից բուժող ու զերծ պահող գերբնական հատկություն<sup>248</sup>: Սա հավանական է, քանզի որպես «չար աչքի» դեմ չարախափան միջոց՝ ավանդաբար օգտագործվում են «ջրի ու երկնքի մաքրագործող ուժը խորհրդանշող» կապույտ գույնի հմայիլներ<sup>249</sup>:
2. Հմայիլ-կնիքների դյուբական ուժի ուղղվածությունը՝ նպատակ-թիրախը, դրսևորվում է պատկերագրությամբ: Տվյալ դեպքում առկա է սուրացող ձի, որը, ըստ հնդեվրոպական առասպելաբանության տոտեմական-աստեղային վաղնջական պատկերացումների, արևի սրբազան կենդանին է, նրա ուղեկիցը, նրա մարմնավորումը<sup>250</sup>:
3. Հայտնի նմանատիպ կնիքների վրա առկա է և թռչնի պատկեր (տեն օրինակ՝ Օշականի կնիքը, աղ. 23,<sub>II</sub>)<sup>251</sup>: Ակներև են նաև ուշբրոնզեդարյան ծիսահմայական գոտիների հրեղեն ձիերի գավակին թռչնի պատկեր<sup>252</sup>, իսկ հեքիաթներում՝ հրեղեն ձիու ձեռքերում՝ թռչնի խորհրդով կամ նրա փետուրով<sup>253</sup>: Թռչնի պատկերը հնուց ի վեր երկնքում սավառնելու գաղափարագիրն է: Քննվող կնիքի վրա ձիու պատկերին ուղեկցող թռչնի հնարավոր ներկայությունը կմեկնաբանվեր՝ «արև մարմնավորող ձիու ընթացքը երկնականարում»<sup>254</sup>:
4. Հայկական լեռնաշխարհի ժայռապատկերներում (մ.թ.ա. II հազարամյակի վերջ), ուշ բրոնզեդարյան պատկերաքանդակ գոտիների առասպելաբանական դրվագներում երկնային ձիու կերպարը մեկնաբանվում է որպես արևի պարբերական շրջապտույտ (Ախթալայի, Սանահինի, Լճաշենի, Խաչքուլաղի բրոնզե գոտիների վրա, Գեղամա լեռների ժայռապատկերներում Արևի մարդակերպ աստվածությունը կամ Արևի սկավառակը հրեղեն ձիերի ուղեկցությամբ՝

<sup>248</sup> Патканов 1873, 43–44.

<sup>249</sup> Իսրայելյան 2012, 16–17:

<sup>250</sup> Иванов 1987, 666; Голан 1993, 49.

<sup>251</sup> Есаян, Калантарян 1988, табл. XLVII, 11; հմնտ. Лордкипанидзе 1961, табл. VII, рис. 48; Խաչատրյան 1965, 276, նկ. 5; Խնկիկյան 1981, նկ. 3, 1:

<sup>252</sup> Տեն Իսրայելյան 1973, նկ. 26, 35 և հաջորդ էջերը:

<sup>253</sup> Տեն Гулакян 1983, 169, 258:

<sup>254</sup> Արևի սկավառակն իր ճանկերում կրող թռչնի մասին տեն Քոչարյան 1998ա, 158:

դիտվում են արեգակի պարբերական շրջապտույտը խորհրդանշող իմաստաբանական ամբողջության մեջ)<sup>255</sup>:

5. Հայ բանահյուսական նյութերում ձին ներկայանում է որպես հովանավոր, օգնական, պահապան, իմաստուն, վտանգ կանխարգելող, ճակատագիր տնօրինող: Իրավամբ, հայ վիպական ավանդության մեջ՝ հողմից արագ սլացող, հրեղեն Քուռկիկ Ջալալին, Ձենով Հովանի՝ Սայիտակ, Կարմիր, Սև ձիերը կամ «ամենաարագընթաց ձիու գործառույթ» կատարող Մուրազ Աստված Մուրազ ձին իրենց «արարքներով ու խորհուրդներով» Սասնա հերոսների օգնականներն են ու հովանավորները<sup>256</sup>: Հեքիաթներում ձին արձագանքում է տիրոջ առաջին իսկ կանչին, օգնում փնտրել, գտնել սիրած աղջկան, ձեռք բերել անմահության խնձորներ, դեղ, փախչել դևերից, ջախջախել թշնամուն, նախագգուշացնում է վտանգի պահին, հովանավորում ու փրկում պատանուն և այլն<sup>257</sup>:

Այսպես՝ Դվինի հմայիլ-կնիքի վրա պատկերված սլացող ձին արևի տեսանելի-երևութական լույսի գաղափարի կրողն է: Տվյալ դեպքում խնդիրը կենդանու պաշտամունքը չէ, այլ սլացող ձիու պատկերին վերագրվող գորության միջոցով երկնայինի հետ հաղորդակցվելը:

Վարգող ձիու «հավակնոտ» պատկերը հնարավոր է վերծանել երագահան-գուշակների շրջանում ցարդ գործածական «Ձին մուրազ է» բանաձևով: Այն է՝ տվյալ հմայիլ-կնիքի նպատակ-թիրախն է՝ «իր տիրոջը երկնաշնորհ բաղձանք, փափագ, իղձ ու տենչ պարզելը»: Հմայիլ-կնիքի պակասող մասում ձիու գավակին թոչնի պատկերի հնարավոր առկայությունը կլրացնե՞ր ձիու թովիչ կերպարը, կհամալրե՞ր վերծանումը՝ «*իր տիրոջը երկնաշնորհ բաղձանք, փափագ, իղձ ու տենչ պարզևող թոչնող ձի, հրեղեն ձի*»:

<sup>255</sup> Հմմտ. Մնացականյան 1948, 71–76; Իսրայելյան 1973, 36, 50–55; Մարտիրոսյան 1973, 26:

<sup>256</sup> Տե՛ս Սասնա ծոեր 1999, 403–404, 411:

<sup>257</sup> Տե՛ս Гулакян 1983, 169–170:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Դվին հնավայրը գտնվում է Արարատյան գոգավորության հարավ-արևելյան հատվածում, Գեղամա լեռնաժառանգության արևմտյան լանջի ստորոտին, պատմական *Ուրան Հայոց* գավառում, Երևանից 35 կմ դեպի հարավ (նկ.1): Հնագիտական հետազոտությունները բացահայտել են մ.թ.ա. III հազարամյակից մ.թ. XIII դարն ընդգրկող բազմաշերտ հուշարձանի գոյություն: Արձանագրվել են վաղբրոնզեդարյան (մ.թ.ա. III հազարամյակ), վաղերկաթեդարյան (մ.թ.ա. X–VIII դդ.), անտիկ (մ.թ.ա. II–մ.թ. II դդ. ) և միջնադարյան (մ.թ. IV–XIII դդ.) մշակութային շերտեր:

Վաղբրոնզեդարյան հնագիտական գտածոների տարածվածությունը ընդգրկում է (մոտ 30 մ բարձրությամբ) ամբողջ բլուրը և հարող հարավարևմտյան տարածքը, ինչը հավաստում է մ.թ.ա. III հազարամյակում այստեղ բավական ընդարձակ բնակավայրի գոյության մասին (նկ. 2): Վաղբրոնզեդարյան հուշարձաններում ծիսական արարողությունների համընդհանուր սրբատեղի առկայության իրողությունից ելնելով՝ հնարավոր է Դվինի մ.թ.ա. III հազարամյակի բնակատեղիում, ընտանեկան սրբարաններից գատ, ենթադրել տոհմական ընդհանուր սրբատեղի գոյություն (հմմտ. Մոխրաբլուր, Հառիճ, Ջրահովիտ, Շենգավիթ):

Այս նույն տարածքում բացահայտվել են վաղերկաթեդարյան (մ.թ.ա. X–VIII դդ.) Դվին ամբոց-սրբավայրի մնացորդները: Բլրից մոտ 300 մ դեպի արևելք համաժամանակյա դամբարանադաշտն է՝ մահարձաններով: *Ուրան Հայոց* գավառի մոտավոր սահմաններում՝ իր բնակելի ու արտադրական կառույցներով, մեհենական համալիրներով առանձնանում էր Դվինը՝ որպես վարչաքաղաքական և պաշտամունքային խոշոր կենտրոն: Մ.թ.ա. VIII դ. առաջին քառորդին՝ Վանի թագավորության լայնածավալ արշավանքների ժամանակ ամբոց-սրբավայրը հիմնահատակ կործանվում է:

Միջնադարյան հազարամյա շերտի ձևավորման տևական ընթացքում (IV–XIII դդ.) զգալիորեն խաթարվել է հնավայրի շերտագրական սանդղակը: Այսուհանդերձ, (0,30÷1,50 մ հզորությամբ) անտիկ շերտի առկա իրավիճակի հետազոտության արդյունքների և գրավոր աղբյուրների տվյալների

համեմատական վերլուծությունը հնարավորություն է ընձեռում վերականգնելու Դվինի անտիկ շրջանի պատմության շարունակական ընթացքի նկարագիրը:

Մ.թ.ա. II դ. նորակերտ մայրաքաղաք Արտաշատի հյուսիսային մատույցների պաշտպանությունը ապահովելու համար վերականգնվում է Դվին ամրոց-սրբավայրը: Պարսպագոտիով ներառնված բլրի գագաթի 0,5 հա հարթակը կառուցապատվում է քաղաքացիական շինություններով (նկ. 2, աղ. 1): Մ.թ.ա. II–I դդ. (Արտաշիսյանների ժամանակաշրջանում) բարեկարգվում են բնակելի շինությունները՝ ճյուղավորված տնտեսական հարկաբաժիններով, առատ շտեմարաններով:

Բլրի հարավարևմտյան ստորոտին, Դվինի բազմաշերտ պաշտամունքային կենտրոնի մ.թ. IV–V դդ. և մ.թ.ա. X–VIII դդ. շերտերի միջև բացահայտվել է անտիկ ժամանակաշրջանի գունազարդ խեցեղենով հագեցած՝ 0,30÷0,60 մ հզորությամբ մշակութային շերտ (նկ. 2): Վաղմիջնադարյան հոգևոր շինությունների հիմնապատերի շարվածքում հայտնաբերվել են կրկնակի օգտագործված մեծ թվով սրբատաշ քարեր և անտիկ ժամանակաշրջանի ճարտարապետական մանրամասներ: Նման պատկերի ակնհայտ ներկայությունը վկայում է այստեղ նախաքրիստոնեական պաշտամունքային կառույցների երբեմնի գոյության մասին: Հնագիտական նյութի համեմատական վերլուծությունը պատմաքաղաքական իրադրության համատեքստում հավաստում է, որ բլրի ստորոտին առնվազն մ.թ.ա. I հազարամյակի սկզբից ի վեր հայտնի Դվինի հնավանդ սրբավայրը Արտաշիսյան և վաղ Արշակունյաց ժամանակաշրջաններում տևականորեն պահպանում էր իր գործառույթը:

*Ոսրան Հայոց* գավառում՝ Արտաշատի մերձքաղաքային տնտեսական տարածքում, Դվինի և շրջակա գյուղական բնակավայրերի բարգավաճումը պայմանավորված էր Երասխ-Մեծամոր-Ազատ գետերի հովիտներում ոռոգման ցանցի և մայրաքաղաքի շուկայում միջազգային աշխույժ առևտրի առկայությամբ: Հնագիտական գտածոների և հնարուսաբանական ու հնակենդանաբանական տվյալների համեմատական վերլուծությամբ բացահայտվում է սույն շրջանի գյուղատնտեսության զարգացման շարունակական գործընթացը: Աճեցվել են այստեղ հացազգիներ, յուղատու և այգեպտղաբուծական, բանջարաբուծական բուսատեսակներ: Տեսանելի են խաղողագինեգործության, ձիթագործության մշակույթների, ինչպես նաև սննդամթերք և արհեստագործական հումք մատակարարող անասնապահության, թռչնաբուծության ճյուղերի զարգացման ավանդույթները: Հայտ-

նաբերված խեցեղեն արտադրանքի, քարե սարք-հարմարանքների, մետաղե իրերի, ինքնատիպ գունազարդված սեղանի և խոհանոցային սպասքի, թոնիրների, օջախների, տարատեսակ ճրագների առկայությունը բարեկեցիկ կենցաղի որոշակի մակարդակի նկարագիր է: Ավանդաբար շարունակվել է վարչատնտեսական գործառույթ իրականացնող կենտրոնի՝ Դվինի շուրջն ամփոփված, տարածքային և տնտեսական կապերով միավորված գյուղական համայնքների ինքնաբավ բնատնտեսական կացութանը:

Համաժամանակյա բնակավայրերի համակարգում Դվին ամրոց-սրբավայրը գատվում էր վարչատնտեսական և պաշտամունքային կենտրոնի իր կարգավիճակով: Դվինը, Արտաշատի պաշտպանական համակարգի բաղկացուցիչ կարևորագույն օղակը, ապահովում էր շրջակա գյուղական բնակավայրերի անվտանգությունը, ինչպես նաև վերահսկում դեպի Գառնի, Վարդգեսավան (Վաղարշապատ), Սևանի ավազան հաղորդակցության ուղիների առևտրական և ռազմավարական կարևոր հանգույցը (նկ. 1):

Հռոմեական գործառնամանատար Կորբուլոնի ռազմարշավի ընթացքում՝ մ.թ. 59թ. Արտաշատի և արքունի ամրոց Գառնիի հետ մեկտեղ ավերածության է ենթարկվում Դվին ամրոցը, և ամայացած սրբավայրը ժամանակավորապես վերածվում է դամբարանադաշտի:

Մ.թ. II դ. 60-ականներին՝ հռոմեական բռնազավթման տարիներին, Կայնեպոլիս (Վաղարշապատ)–Արտաշատ–Գառնի գորակայանների միջև հաղորդակցության ուղիների անվտանգությունն ապահովում էր Դվինում տեղակայված հռոմեական բանակի բենեֆիցիարիոսների ուղեցույց-ուղեկալ պահակակետը (*statio*)՝ բնորոշ շարժական զոհասեղանով՝ ձոնված Միթրա աստվածությանը (աղ. 24,):

Դվինում IV–XIII դդ. ծավալուն շինարարության տարբեր շրջափուլերի համահարթեցումների պատճառով խաթարված և աղճատված անտիկ մշակութային շերտի հատվածական ուսումնասիրությունը հնագիտական բավարար հիմք չի ընձեռում նախախոսքովյան իրողության առավել հստակ պատկեր վերականգնելու համար:

Ներքաղաքական անկայունության և միջավայրի վատթարացող բնապահպանական իրավիճակներից ելնելով՝ Խոսրով Բ Կոտակ Արշակունիս (330–338թթ.) IV դ. 30-ականներին արքունիքը Արտաշատից տեղափոխում է Դվին: Արտաշատի հյուսիսային թիկունքի բնակավայրերի հոծ ցանցում առանձնանում էր Դվինն իր աշխարհագրական շահեկան դիրքով, աշխարհիկ և հոգևոր իշխանություն համատեղող գործառույթի տնականությամբ, տնտեսական նշանակալի ներուժով:

Բազմագործառույթ կենտրոնի դերի ավանդական իրողությունը իր վճռորոշ դրսևորումն ունեցավ Դվին ամբոց-սրբավայրից մինչև արքայանիստ քաղաք-մայրաքաղաք տևական կայացման ողջ գործընթացում:

1. Դվինի մերձակա գյուղերն աստիճանաբար միավորվեցին և կազմեցին քաղաքայնացող բնակավայրի պարսպապատ թաղամասերը, իսկ մյուսները՝ նրա արվարձանները:
2. Հնավանդ սրբավայրում Նոր դավանանքի նշանակալի կենտրոններից մեկի ձևավորման սկիզբը դրվեց:
3. Նոր մայրաքաղաքի՝ Դվինի մատույցների պաշտպանությունը ապահովեց արդեն նախկին մայրաքաղաքը՝ Արտաշատը:
4. *Ուրան Հայոց* գավառը (Արտաշատի մերձքաղաքային տնտեսական տարածքը), Դվին մայրաքաղաքի հետ կազմելով վարչաքաղաքական և վարչատնտեսական մի ամբողջություն, «Աշխարհացոյց»-ում (VII դ.) վավերացվեց որպես «*Ուրան Դրնոյ*»:

Խոսքով Կոտակի՝ արքունիքը տեղափոխելու հեռահար, վճռորոշ քայլը կանխորոշեց միջնադարյան Դվին քաղաքի կայացումն ու բարգավաճումը: Արդարև, V դ. վերջին քառորդին Դվինը քաղաքական ինքնուրույնությունը պահպանած մարզպանական Հայաստանի մայրաքաղաքն էր և Հայոց կաթողիկոսի նստավայրը: Դվինը՝ Հայաստանի տնտեսական և քաղաքական կենտրոնը, վերածվեց նաև միջազգային տարանցիկ առևտրի առաջնակարգ կարևորության հանգույցի:

Г. Г. КОЧАРЯН  
**ДВИН V**  
**АНТИЧНЫЙ ДВИН**  
**Раскопки 1986–2013 гг.**

**Резюме**

Археологический памятник Двин находится в юго-восточной части Арагатского плато, у подножья западных склонах Гегамских гор, в исторической области *Востан Хайоц*, в 35 километрах к югу от Еревана (рис. 1). Этот многослойный памятник включает в себя культурные слои с III тысячелетия до н. э. по XIII в. н. э. Раскопками были обнаружены культурные слои эпохи ранней бронзы (III тыс. до н. э.) и раннего железа (X–VIII вв. до н. э.), античного периода (II в. до н. э.– II в. н. э.) и средневековья (IV– XIII вв. н. э.).

Поселение эпохи ранней бронзы было достаточно обширным, занимало (высотой около 30 м) весь Двинский холм и прилегающую к нему с юго-запада территорию (рис. 2). Здесь, помимо семейных “культовых уголков”, по всей вероятности, для отправления общеродовых ритуальных обрядов существовало также всеобщее святилище (ср. Арич, Мохраблур, Джраовит, Шенгавит).

На этой же территории были выявлены остатки крепости-святилища Двин эпохи раннего железа (X–VIII вв. до н. э.). В 300 м к востоку от крепости располагался могильник с надгробными памятниками. Двин – жилыми и производственными постройками, культовыми комплексами – являлся административно-политическим и религиозным центром области *Востан Хайоц*. Крепость Двин был разрушен в первой четверти VIII в. до н. э. во время урартских военных походов.

В процессе формирования тысячелетнего средневекового культурного слоя (IV–XIII вв.), значительно искажилась стратиграфическая шкала многослойного городища Двин. Вместе с тем, сравнительный анализ результатов исследования нынешней ситуации античного слоя (с мощностью 0,30±1,50 м) и данных письменных источников, предоставляет возможность для восста-

новления картины продолжительного течения истории античного периода Двина.

Во II в. до н. э., обеспечив защиту северных подступов новой столицы Арташат, восстанавливается крепость-святилище Двин (разоренный VIII в. до н. э.). Огороженная вершина холма площадью около 0,5 га плотно застраивается гражданскими постройками (рис. 2, таб. 1). Во II–I вв. до н. э. (в эпоху Арташесидов) благоустраиваются жилые комплексы с разветвленными хозяйственными помещениями, обильными амбарами.

У подножья холма в многослойном культовом центре Двина между слоями IV–V вв. н. э. и X–VIII вв. до н. э. обнаружен (с мощностью 0,30÷0,60 м) культурный слой с обилием фрагментов расписной керамики античного периода (рис. 2). Вместе с тем, в кладках фундаментов раннесредневековых культовых монументальных зданий зафиксировано множество гладко тесаных камней и античных архитектурных элементов вторичного использования. Это важное обстоятельство свидетельствует о том, что в античную эпоху здесь имели место дохристианские культовые сооружения. Сравнительный анализ археологического материала с учетом историко-политической ситуации в регионе (II в. до н. э.–II в. н. э.) свидетельствует, что у подножья холма в арташесидский и раннеаршакидский периоды продолжало функционировать традиционное святилище Двина.

В области *Востан Хайоц*, пригородной экономической зоне Арташата, процветание Двина и окрестных сельских поселений было обусловлено наличием оросительной сети (в долинах рек Ерасх–Мецамор–Азат) и оживленной международной торговлей на столичном рынке. Сравнительный анализ данных археологии, палеоботаники, палеофауны дает представление о процессе развития сельского хозяйства данного района – возделывание зерновых, садовых, технических культур, развитие традиционных отраслей – виноделия, маслоделия, а также скотоводства, птицеводства, снабжающие продуктами питания и ремесленного сырья. Обнаруженные керамические, каменные, металлические артефакты, наличие оригинально расписной столовой, хозяйственной и кухонной посуды, а также тондыров, очагов и разнообразных светильников указывает на определенный уровень благосостояния жителей античного Двина. Традиционно продолжается натурально-хозяйственный уклад жизни сельских общин, объединенных вокруг административно-хозяйственного центра Двин.

В системе синхронных поселений крепость-святилище Двин выделялся статусом административно-хозяйственного и культового центра. Двин, составное звено общей оборонительной системы Арташата, мог обеспечить за-

щиту сельских поселений окружающей крепость, а также контролировать важный торгово-стратегический узел дорог, ведущих из Арташата в Вардгесаван (Вагаршапат), Гарни и Севанский бассейн (рис. 1).

Во время военного похода римского военачальника Корбулона в 59 г. н. э., вместе с Арташатом и царской крепостью Гарни, подвергается разрушению и крепость-святилище Двин, впоследствии чего опустошенное святилище временно превратилось в могильник.

В 60-ые годы II в. н. э. в период римской оккупации Армении, безопасность коммуникации между стоянками войск Кайнеполь [Вагаршапат]–Арташат–Гарни обеспечивал пост дорожной стражи бенефициариев (statio) римской армии, установленный в Двине, где стоял характерный передвижной алтарь, посвященный богу Митре (табл. 24<sub>1</sub>).

По причине нивелирования предыдущих культурных слоев на различных этапах интенсивной застройки IV–XIII вв., значительно пострадал античный слой. Фрагментарность исследований искаженного античного слоя не предоставляет достоверного археологического основания для восстановления наиболее ясной картины дохосровского периода Двина.

Из-за политической нестабильности и ухудшения климатических-экологических условий, Хосров II Котак Аршакид (330–338 гг.) перенес царский двор из Арташата в Двин в 30-ые годы IV в. В густой сети поселений в северном тылу Арташата, Двин выделялся географическим расположением, (многовековым) статусом культового центра и значительным экономическим потенциалом.

Особый статус традиционного многофункционального центра (совмещающий в себе светскую и духовную власть) сыграл решающую роль в процессе становления античного Двина из крепости-святилища в престольный, столичный город в конце V в.

1. Близлежащие села Двина постепенно объединились и образовали обнесенные оградой городские кварталы, а другие становились его предместьями.
2. В древнейшем святилище устанавливалось начало формирования одного из значительных раннехристианских духовных центров региона.
3. В конце V в. защиту подступов новой столицы Двин обеспечивала бывшая столица – Арташат.
4. Впоследствии в “Ашхарацуц”-е (VII в.), пригородная сельскохозяйственная зона Арташата, область “Востан Хайоц” засвидетельствован как “Востан Двной”.

Дальновидный решительный шаг Хосрова Котака по перенесению царского двора предопределил становление и процветание средневекового города Двин. Уже в последней четверти V в. Двин был столицей, сохранившая политическую самостоятельность марзпанской Армении, и резиденцией католикоса. Двин, экономический и политический центр Армении, становится также важным контролирующим узлом международной транзитной торговли.

G. G. KOCHARYAN  
**DVIN V**  
**DVIN OF THE CLASSICAL PERIOD**  
**Excavations of 1986–2013**

**Summary**

The archaeological site of Dvin is located in the southeastern part of the Ararat Plain, at the western foothills of the Geghama Mountains, in the historical canton of *Vostan Hayots*, 35 km south of Yerevan (Fig. 1). This multilayered site encompasses cultural strata ranging from the 3rd millennium BC to the 13th century AD. Excavations have unearthed cultural layers corresponding to the Early Bronze Age (3rd millennium BC), the Early Iron Age (10th–8th centuries BC), the Classical period (2nd century BC–2nd century AD), and the Medieval period (4th–13th centuries AD).

The Early Bronze Age settlement occupies the entirety of the Dvin hill (rising approximately 30 m) and its adjacent southwestern area (Fig. 2). In addition to the “cultic corner” found within houses, likely used for family ritual and cultic ceremonies, a general sanctuary likely existed here as well (cf. Harich, Mokhrablur, Jrahovit, Shengavit).

During the Early Iron Age (10th–8th centuries BC), a fortress-sanctuary stood atop Dvin hill. Archaeological evidence attests to the presence of residential and production structures, as well as cultic complexes. A burial ground with monuments was located approximately 300 m east of the fortress-sanctuary. From the 1st millennium BC onward, Dvin evidently functioned as an administrative, political, and religious center of the *Vostan Hayots* region. This fortress-sanctuary was destroyed in the first quarter of the 8th century BC during a military campaign conducted by the Urartians.

The formation of the millennium-long Medieval cultural layer (4th–13th centuries AD) significantly disrupted the stratigraphic sequence of the multilayered site of Dvin. Nevertheless, a comparative analysis of the results of archaeological investigations, combined with written sources, enables a reconstruction of the site’s development during the Classical period.

In connection with the foundation of Artashat and for the defense of its northern approaches, the Dvin fortress-sanctuary, destroyed and burned in the 8th cen-

tury BC, was restored in the 2<sup>nd</sup> century BC. The hilltop platform (approximately 0.5 ha), enclosed by a massive wall, was densely developed with civil structures (Fig. 2, Tab. 1). During the 2<sup>nd</sup>–1<sup>st</sup> centuries BC, in the Artaxiad period, residential complexes with branched household spaces were constructed. This constitutes a cultural layer measuring 0.30–1.50 m in thickness, within which the remains of various structures are preserved.

Stratigraphic analysis of excavated data from the multilayered cultic center at the foot of the hill revealed a cultural layer of 0.30–0.60 m situated between the layers of the 4<sup>th</sup>–5<sup>th</sup> centuries AD and the 10<sup>th</sup>–8<sup>th</sup> centuries BC, characterized by painted pottery from the Classical period (Fig. 2). The reuse of hewn stones and the presence of Classical architectural elements in the foundations of Early Medieval cultic monumental buildings provide compelling evidence for the existence of pre-Christian cultic structures at the site. A comparative analysis of the archaeological material, in light of the historical and political situation in the region between the 2<sup>nd</sup> century BC and the 2<sup>nd</sup> century AD, indicates that the traditional sanctuary of Dvin, known since the early 1st millennium BC, remained active at the hill's foot through the Artaxiad and Arsacid periods.

In the canton of *Vostan Hayots*, within the suburban economic zone of Artashat, the prosperity of Dvin and its surrounding rural settlements was fostered by an irrigation network in the valleys of the Yeraskh, Metsamor, and Azat rivers, as well as by active international trade conducted through the capital's market. A comparative analysis of archaeological, palaeobotanical, and palaeozoological data sheds light on the development of agriculture in this region. The evidence points to the cultivation of grains, horticultural and industrial crops, and the advancement of traditional sectors such as viticulture and oil production, along with cattle and poultry breeding, all of which supplied foodstuffs and raw materials for crafts. The discovery of pottery, stone and metal artifacts, original painted tableware, household and kitchen vessels, eastern-style ovens (*tonir*), fireplaces, and various types of oil lamps illustrates a certain level of affluence among the inhabitants of Classical-period Dvin. The traditional natural-economic way of life of the rural communities, organized around the administrative center of Dvin, continued uninterrupted.

The Classical-period fortress-sanctuary of Dvin, by virtue of its status as an administrative, economic, and cultic center, stood out within the network of contemporary settlements. As one of the key components of the Artashat defensive system, Dvin ensured the protection of the rural settlements surrounding the fortress. It also exercised control over a vital strategic junction connecting trade routes from Artashat to Vardgesavan (Vagharshapat), Garni, and the Sevan Basin (Fig. 1).

During the military campaign of the Roman commander Corbulo in 59 AD, Artashat, the royal fortress of Garni, and the Dvin fortress-sanctuary were all de-

stroyed. The devastated sanctuary at Dvin was temporarily repurposed as a burial ground.

In the sixties of the 2<sup>nd</sup> century AD, during the period of Roman occupation in Armenia, security and communication between the military encampments of Kainê Polis (Vagharshapat) – Artashat – Garni were ensured by a Roman army sentry post road (*statio* of the beneficiaries), located in Dvin, which featured a characteristic movable altar dedicated to the god Mithra (Tab. 24,<sub>1</sub>).

Due to the leveling of earlier cultural layers during various phases of intensive construction in the 4<sup>th</sup>–13<sup>th</sup> centuries, the layer corresponding to the Classical period was also significantly damaged. Fragmentary research of the distorted Classical layer does not provide sufficiently reliable archaeological data to reconstruct a clear picture of pre-Khosrov Dvin.

Because of internal political instability and environmentally disadvantageous conditions, the Arsacid king Khosrov Kotak (330–338) transferred the royal court from Artashat to Dvin in the 330s AD. Within the dense network of settlements to the north of Artashat, Dvin stood out for its favorable geographical location, its long-standing cultic function, and its significant economic potential.

The special status of this traditional multifunctional center, combining secular and spiritual authority, became a decisive precondition for the transformation of Classical Dvin from a fortress-sanctuary into a royal city, and later into a capital city (at the end of the 5<sup>th</sup> century AD).

1. The rural settlements lying in the vicinity of Dvin were soon transformed into urban districts, while others became suburbs.
2. The process of establishing one of the most important Early Christian cultic centers began at the site of the ancient sanctuary.
3. Protection of the approaches to Dvin was provided by the former capital, Artashat.
4. Artashat's suburban economic zone, the canton of *Vostan Hayots*, was referred to in the *Ashkharatsuyts* (7<sup>th</sup> century AD) as *Vostan Dvnoy*.

The far-sighted and decisive action taken by Khosrov Kotak in transferring the royal court predetermined the formation and subsequent prosperity of the Medieval city of Dvin. By the last quarter of the 5<sup>th</sup> century AD, Dvin had already become the capital of Armenia during the *Marzpan* period, preserving a degree of political independence, and had also become the seat of the Armenian Catholicos. As Armenia's economic and political center, Dvin likewise emerged as one of the principal hubs of international transit trade.<sup>258</sup>

<sup>258</sup> For further discussion of the site of Dvin, cf. Kocharian 2015.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### Սկզբնաղբյուրներ և բառարաններ

- Ագաթանգեղոս 1983 – Ագաթանգեղոս, Հայոց պատմություն (աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Ա. Ն. Տեր-Ղևոնդյանի), Երևան, ԵՊՀ հրատ., 1983, 540 էջ:
- Ապպիանոս 1981 – Ապպիանոս, Հռոմեական պատմություն (թարգմ. Ս.Մ. Կրկյաշարյանի) // Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ., 1981, 255–263:
- Եղիշե 1989 – Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին (աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Ե. Տեր-Մինասյանի), Երևան, ԵՊՀ հրատ., 1989, 447 էջ:
- Երեմյան 1963 – Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (Փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրության հիմքի վրա), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1963, 156 էջ:
- Ղազար Փարպեցի 1982 – Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Թուրթ Վահան Մամիկոնյանին (աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Բ. Ուլուբաբյանի), Երևան, ԵՊՀ հրատ., 1982, 540 էջ:
- Մովսես Խորենացի 1990 – Մովսես Խորենացի, Հայոց պատմություն (թարգմ., ներած. և ծանոթ. Ստ. Մալխասյանի), Երևան, «Հայաստան», 1990, 320 էջ:
- ՆՀԲ 1981 – Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. II, Երևան, ԵՊՀ հրատ., 1981, 1067 էջ:
- Պրոկոպիոս Կեսարացի 1967 – Պրոկոպիոս Կեսարացի (թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագր. Հ. Բարթիկյանի), Օտար աղբյուրները Հայաստանի ու հայերի մասին 5, Բյուզանդական աղբյուրներ Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, 361 էջ:
- Սերբոս 1979 – Սերբոս, Պատմություն Սերբոսի (աշխատասիրությամբ Գ. Վ. Արգարյանի), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, 683 էջ:
- Սուրբիայան 1967 – Սուրբիայան Ա.Ս., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, 683 էջ:
- Փավստոս Բուզանդ 1987 – Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն (թարգմ. և ծանոթագր. Ստ. Մալխասյանցի), Երևան, ԵՊՀ հրատ., 1987, 455 էջ:
- Քսենոփոն 1970 – Քսենոփոն, Անաբասիս (թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, 282 էջ:
- Страбон 1964 – Страбон, География в 17 книгах (перевод, статья и комментарии Г. А. Стратановского), Ленинград, «Наука», 1964, 943 с.

### Ուսումնասիրություններ

- Ավետիսյան, Ավետիսյան 2006 – Ավետիսյան Հ.Գ, Ավետիսյան Պ.Ս., Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. XI–VI դարերում, Երևան, ԵՊՀ հրատ., 2006, 395 էջ:

- Ավետիսյան, Գնունի, Բորոխյան 2017 – Ավետիսյան Հ., Գնունի Ա., Բորոխյան Ա., Դվինի երկաթեղարյան մարդակերպ քանդակը // «Խոսարով Կոտակից մինչև Կարո Ղաֆաղարյան», Հանրապետական գիտական նստաշրջան նվիրված անվանի հայագետ Կարո Գրիգորի Ղաֆաղարյանի ծննդյան 110-ամյա հոբելյանին, Զեկուցումների հիմնադրույթներ (խմբ. Ա. Փիլիպոսյան), Երևան, 2017, 35–38:
- Բաբայան 1981 – Բաբայան Ֆ.Ս., Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական խեցեղենի զարդաները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, 89 էջ:
- Բաբայան 1989 – Բաբայան Ֆ.Ս., Դվինի միջնաբերդի հյուսիս-արևմտյան հատվածի պեղումները // Հայկական ԽՍՀ-ում 1987–1988 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ (խմբ. Գ.Ա. Տիրացյան), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1989, 86–87:
- Բաբայան 1991 – Բաբայան Ֆ.Ս., Դվինի միջնաբերդի պեղումների արդյունքները 1989–1990 թթ. // Հայաստանի Հանրապետությունում 1989–1990 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ (խմբ. Գ.Ա. Տիրացյան), Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 1991, 101–102:
- Բաբայան 2018 – Բաբայան Ֆ.Ս., Նորահայտ շինություն Դվինի միջնաբերդում // Լրաբեր հասարակական գիտությունների, 2018, № 3, 332–346:
- Բորոխյան 2018 – Բորոխյան Ա, Արագածի Տիրինկատար սրբավայրը // Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ 1, Երևան, ՀԱԻ հրատ., 2018, 290–301:
- Գաբրիելյան 2017 – Գաբրիելյան Ա., Արցախի Տիգրանակերտի անտիկ խեցեղենի հարդարանքի դասակարգման փորձ (մ. թ. ա. I–մ. թ. III դդ.) // Պատմություն և մշակույթ (խմբ. Է. Մինասյան), Երևան, ԵՊՀ հրատ., 2017, 372–383:
- Գաբրիելյան 2020 – Գաբրիելյան Ա.Ա., Արցախի Տիգրանակերտի անտիկ խեցեղենը (տեխնիկատեխնոլոգիական բնութագիրը, գործառության ձևաբանական դասակարգումը, գեղարվեստական հարդարանքը) // Թեկնածուականատենախոսության սեղմագիր, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, 2020, 24 էջ:
- Գրիգորյան 1976 – Գրիգորյան Մ.Գ., Խոսարովի արգելոցի բուսական ծածկույթը // Հայաստանի բնություն, 1976, պրակ 1(35), 21–24:
- Զարդարյան 1977 – Զարդարյան Մ.Հ., Հելլենիստական ավանդույթները և Հայաստանի տեղական խեցեղենի արտադրությունը // Հայկական ՍՍՀ-ում 1975–1976 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցումների թեզիսներ (խմբ. Հ.Ա. Մարտիրոսյան), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977, 27–28:
- Զարդարյան և այլք 1991 – Զարդարյան Մ., Մանուկյան Հ., Տոնիկյան Ա., Նոր հուշարձան Հին Արտաշատի տարածքում // Հայաստանի Հանրապետությունում 1989–1990 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ (խմբ. Գ.Ա. Տիրացյան), Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 1991, 54–56:
- Զարդարյան 1997 – Զարդարյան Մ.Հ., Քաղաքականություն և մշակույթ. պատմական գործընթացների փոխկապակցվածության արտահայտությունները (անտիկ Հայաստանի պատմության և մշակույթի պարբերացման ու ժամանակագրության խնդրի շուրջ) // Հայացք Երևանից (տարի 3, թիվ 4), Երևան, «Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն», 1997, 1–19:
- Զինչիրջյան 1978 – Զինչիրջյան Վ., Հայաստանի անտիկ դարաշրջանի գյուղատնտեսական երկաթյա գործիքները // Պատմա-քանասիրական հանդես, 1978, № 1 (80), 265–271:

- Թումանյան 2008 – Թումանյան Գ.Ս., Հնձանային մշակույթը Հայաստանում, Երևան, «Ջանգակ-97», 2008, 100 էջ:
- Ժամկոչյան 1981 – Ժամկոչյան Ա.Ս., Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX–XIV դդ. // Հայաստանի հնագիտական հուշարձանները, 10, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, 83–149:
- Ժամկոչյան 2010 – Ժամկոչյան Ա.Ս., Վաղմիջնադարյան կոթողային շինության ավերակներ Դվինի հարավային բուրգի տարածքում // Հուշարձան, հ. Զ, Երևան, 2010, 91–98:
- Ժամկոչյան, Հակոբյան 2018 – Ժամկոչյան Ա., Հակոբյան Ն., Դվինի պաշտամունքային տախտակների շուրջ // Արագածի թիկունքում, Հնագիտական հետազոտություններ նվիրված Տելեմակ Խաչատրյանի հիշատակին (խմբ. Հ. Ավետիսյան), Երևան, «Գիտություն», 2018, 158–162:
- Իսրայելյան 1973 – Իսրայելյան Հ.Ռ., Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, 171 էջ:
- Իսրայելյան 2012 – Իսրայելյան Ա., XVIII–XX դդ. Հայկական հնայական պահպանակները, Երևան, Հայաստանի պատմության թանգարան, 2012, 200 էջ:
- Խանգաղյան 1967 – Խանգաղյան Է.Վ., Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, 117 էջ:
- Խանգաղյան 1979 – Խանգաղյան Է., Էլառ-Դարանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, 188 էջ:
- Խանգաղյան 1991 – Խանգաղյան Է.Վ., Ջրահովտի պեղումների արդյունքները // Հայաստանի Հանրապետությունում 1989–1990 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ (խմբ. Գ.Ա. Տիրացյան), Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 1991, 11–12:
- Խանգաղյան և այլք 1973 – Խանգաղյան Է.Վ., Մկրտչյան Կ.Հ., Պարսամյան Է.Ս., Մեծամոր, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, 214 էջ:
- Խաչատրյան 1965 – Խաչատրյան Ժ.Դ., Հայաստանում հայտնաբերված բազմանիստ կնիքները // Պատմա-քանասիրական հանդես, 1965, № 1 (28), 271–277:
- Խաչատրյան 1974 – Խաչատրյան Ժ.Դ., Դիտողություններ Հայաստանի հեղինիստական շրջանի գլխավորիկայի մասին // Լրաբեր հասարակական գիտությունների, 1974, № 7, 97–104:
- Խաչատրյան 1987 – Խաչատրյան Ժ., Հայաստանի անտիկ շրջանի պաշտպանական կառույցները // Պատմա-քանասիրական հանդես, 1987, № 4 (119), 158–170:
- Խաչատրյան 2007 – Խաչատրյան Ժ., Քաղաքամայր Արտաշատը պատմահնագիտական հետազոտությունների լույսի ներքո // Պատմա-քանասիրական հանդես, 2007, № 2 (175), 3–36:
- Խաչատրյան, Կանեցյան 1974 – Խաչատրյան Ժ.Դ., Կանեցյան Ա.Գ., Արտաշատի VIII բլրի շերտագրությունը // Լրաբեր հասարակական գիտությունների, 1974, № 9, 76–91:
- Իսնկիկյան 1981 – Իսնկիկյան Օ.Ս., Նորահայտ հուշարձան Գորիսում // Պատմա-քանասիրական հանդես, 1981, № 4 (95), 305–314:
- Կարապետյան 2003 – Կարապետյան Ի.Ա., Հայաստանի նյութական մշակույթը մ.թ.ա. VI–IV դդ., Երևան, «Գիտություն», 2003, 114 էջ:
- Կրկյաշարյան 1970 – Կրկյաշարյան Ս.Մ., Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, 215 էջ:

- Հակոբյան 2002 – Հակոբյան Հ., Հետուրարտական խեցեղենի ուսումնասիրության փորձ (Սևանա լճի հարավային ավազան), (խմբ. Ա.Ա. Քալանթարյան, Ս.Բ. Հարությունյան) // Հին Հայաստանի մշակույթը XII, Երևան, «Գիտություն», 2002, 58–60:
- Հակոբյան 1981 – Հակոբյան Ն.Գ., Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական մետաղը IX–XIII դդ. // Հայաստանի հնագիտական հուշարձանները, 10, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, 5–80:
- Հակոբյան 2005 – Հակոբյան Ն., Դվինի Կենտրոնական թաղամասի 1990–1993, 1999 թթ. պեղումների արդյունքները // Հին Հայաստանի մշակույթը XIII (խմբ.՝ Ա.Ա. Քալանթարյան, Ռ.Ս. Բադալյան, Պ.Ս. Ավետիսյան), Երևան, «Մուղնի», 2005, 205–212:
- Հակոբյան և այլք 2015 – Հակոբյան Ն., Ժամկոչյան Ա., Բաբայան Ֆ., Քոչարյան Գ., Մելքոնյան Հ., Դվին քաղաքատեղին (2009, 2011–2012 թթ. պեղումների արդյունքները) // Հուշարձան, հ. Ժ, Երևան, 2015, 5–28:
- Հարությունյան 1974 – Հարությունյան Լ.Վ., Անտառապուրակներ և կանաչ գոտիներ, Երևան, «Հայաստան», 1974, 95 էջ:
- Հոբոսյան 2007 – Հոբոսյան Ս., Հայոց ձիթհանության մշակույթը (XIX դ.–XX դ. առաջին կես) // Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 23, Երևան, «Գիտություն», 2007, 7–84:
- Ղաֆադարյան 1952 – Ղաֆադարյան Կ., Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. I, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1952, 298 էջ:
- Ղաֆադարյան 1982 – Ղաֆադարյան Կ., Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. II, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, 162 էջ:
- Ղաֆադարյան, Քալանթարյան 2002 – Ղաֆադարյան Կ.Գ., Քալանթարյան Ա.Ա., Դվին II. Դվին քաղաքը և նրա պեղումները (1973–1980 թթ.), Հնագիտական պեղումները Հայաստանում, № 20, Երևան, «Գիտություն», 2002, 173 էջ:
- Ղաֆադարյան 1984 – Ղաֆադարյան Կ. Կ., Արգիշտիխինիլի քաղաքի ճարտարապետությունը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984, 160 էջ:
- Մարտիրոսյան 1973 – Մարտիրոսյան Հ.Ա., Հայաստանի նախնադարյան նշանագրերը և նրանց ուրարտա-հայկական կրկնակները, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1973, 81 էջ:
- Մնացականյան 1948 – Մնացականյան Հ., Արևապաշտության հետքերը Հին Հայաստանում ըստ բրոնզե պեղածո իրերի // Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի, հ.1, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1948, 67–95:
- Մուլքիչանյան 1975 – Մուլքիչանյան Յա.Ի., Հայկական ՍՍՀ արգելանոցները և արգելավայրերը, Երևան, «Հայաստան», 1975, 89 էջ:
- Մուշեղյան 1971 – Մուշեղյան Գ.Ռ., Ջրամատակարարման հարցը Էրեբունիում և Թեյշեբայի-նիում // Պատմա-բանասիրական հանդես, 1971, № 1(52), 207–215:
- Պատրիկ 1964 – Պատրիկ Ա., Խճանկարային արվեստը հայերի մոտ և Դվինում հայտնաբերված խճանկար հատակը // Պատմա-բանասիրական հանդես, 1964, № 2 (25), 313–317:
- Պարսամյան 2015 – Պարսամյան Ա., Երվանդաշատի պեղումները ըստ 2007 թ. պեղումների // Անտառ ծննդոց (խմբ. Զ. Հակոբյան, Լ. Միքայելյան), Երևան, ԵՊՀ հրատ., 2015, 91–116:
- Ջանփոլադյան, Քալանթարյան 1988 – Ջանփոլադյան Հ.Մ., Քալանթարյան Ա.Ա., Միջնադարյան Հայաստանի առևտրական կապերը VI–XIII դդ. (ըստ ապակեգործության տվյալների), Հայաստանի հնագիտական հուշարձանները, 14, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, 48 էջ:

- Սահինյան 1964 – Սահինյան Ա.Ա., Հայկական Ճարտարապետությունը ստրկատիրական հասարակարգի ժամանակաշրջանում (VI դ. մ. թ. ա.–IV դ. մ. թ.) // Ակնարկներ հայ արվեստի պատմության, հ. 2, Ակնարկ հայ Ճարտարապետության պատմության (խմբ. Բ. Ն. Առաքելյան, Մ.Գ. Մազմանյան), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1964, 49–72:
- Սահինյան 1983 – Սահինյան Ա.Ա., Գառնիի անտիկ կառույցների ճարտարապետությունը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983, 262 էջ:
